



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆ ԿԵՍ

ԱԶԳ. ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1910. ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ, ԹԻԻ 11-12

ՓԱՐԻԶ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերագոյն ուժը .	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆՆԱՆ .	241
Օճախ , Աղբիւրին աղբիւր .	ՀՐԱՆՏ ՎՍՐԴԱՊԵՏԵԱՆ	252
Հարսնիք , Մատուցք , Կանաչ կիւրակե :	»	253
Անտոնիոս եւ Կեոպասրա , Գ. Արարուած (ՇԷՅՔՍՓԻՐ)	Թրգմ. Գ. ՓՍՈՆԱԿ	253
Արեւս սար , Մահս խրկե ,	ԹԼԿԱՏԻՆՆԻՆ	272
Մաժուկ խնամութիւններ — Հաճախութեամբ սիրտուշ (ԵԷՕՅԻԼ ԿՈՒԻԷ) Թրգմ. Ա. Չ.		276
Արձեճակ Շահ-Մուշահան :		277
«Ես Բեգ Մեղայ» . Թարգմանք Նիկոսիոս Արարուած (Բ. Արար) ԳԵՂԱՄ ԱՐՄԵՐՈՒՆԻ		277
Մասնախօսական , (Բ. Ֆ. Լեւոն Հարսնիքի գիրք)	ՖՐԷՏԷՐԻԲ ՄԱՔԼԷՐ	286
Շօքեմաուէր լաւատես	Տր. Ռ. ՊԱՉԱՐՃԵԱՆ	286

Ա Չ Դ

Անահիտի ԺԱ շրջանի այս 11-12 թիւը ուշ լոյս կը տեսնէ թերթիս անօրէնին երկարատեւ հիւանդութեան պատճառով :

ԺԲ շրջանը պիտի սկսի 1911 յունուար-փետրուարին , եւ վեց թիւերը կանոնաւորապէս լոյս պիտի տեսնեն իրենց ժամանակին :

Կը յիշեցնենք որ թերթին բաժանորդագիրը պէտք է ԿԱՆՆԻԿ վճարել . յառաջիկայ շրջանին թերթը պիտի ուղարկենք միմիայն անոնց որ բաժանորդագիրը վճարած պիտի ըլլան :

Մեր այն բաժանորդները , որ ԺԱ շրջանի բաժնեգիրը տակաւին չեն վճարած , կը յուսանք որ պիտի հաճին փութով հասցնել զայն մեզի :

Մեր յաջորդ թիւով պիտի հրատարակենք Հայ ճարտարապետական արուեստի մասին թանկագին ուսումնասիրութիւն մը զոր «Անահիտ»ի համար հաճեցաւ շարադրել մեծանուն հայ ճարտարապետ պ. Թ. ԹՕՐԱՄԱՆՆԱՆ , որ , Անիի պեղմանց մէջ փրօֆ. Մարի ուշիմ եւ կարող գործակից , հայ ճարտարապետութեան մասին իր հմտալից եւ խորազնին աշխատութիւններով ոռւս գիտական աշխարհին կողմէ խորին յարգանաց ցոյցերով պատուեցաւ :

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Հ Ի Տ Ի

Տ Ա Ս Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի

Բաժանորդագրութիւնը պէտք է ԿԱՆՆԻԿ վճարել :

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1909-1910

ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ

ԹԻԻ 11-12

ԳԵՐԱԳՈՅՆ ՈՒԺԸ



Գրականութիւնը, գեղարուեստը՝ ազգի մը պատիւը, ամենաթանկագին դանձը, մեծութեան ու փառքի աղբիւրը, եւ նոյն իսկ կեանքի հիմունքը, ինքնապահպանութեան ամենէն ապահով միջոցն են: Կարելի է ըսել թէ ազգ մը իսկապէս գոյութիւն ունի այն ատեն միայն երբ երեւան կը բերէ ինքնայատուկ գեղարուեստ մը, գրականութիւն մը: Մարդերու համախմբում մը որ կ'ապրի, կ'աշխատի, կը վաստակի ու կ'ուտէ, ազգ մը չի ձեւացնիր. ո եւ է քամի մը կրնայ այդ համախմբումը ցրուել, քայքայել, հալեցնել ուրիշ համախմբմանց մէջ, եւ ա'լ անկից յիշատակ մ'անգամ չի մնար: Ազգը կը կազմուի երբ մարդերու կուտակում մը կը հաւաքուի խոշոր մը, գաղափարի մը շուրջը, երբ ի յայտ կը բերէ հաւաքական որոշ եւ ինքնատիպ զգայնութիւն մը, մտայնութիւն մը, աշխարհայեացք մը, եւ երբ ցոյց կուտայ աստուածային կարողութիւնը՝ այդ մասնաւոր մտայնութիւնն ու աշխարհայեացքը գեղեցիկ ձեւերով արտայայտելու. այդ արտայայտումը՝ ազգի մը ինքնութեան յարթակն եւ անկորուստ ապացուցումն է, եւ ան ուրիշ բան չէ բայց եթէ գեղարուեստը, գրականութիւնը: Հարիւրաւոր ցեղեր եկեր անցեր են երկրագնդիս վրայէն. եւ անոնց ամենամեծ մասէն անուն մը միայն մնացած է յաճախ, ու քանի մը չոր

դէպքերու յիշատակում. շատերուն անունն ալ չէ մնացած, եւ սակայն այդ բոլոր ցեղերը ապրեր, աշխատեր, կուտեր են, եւ անոնցմէ շատերը քոջ ալ եղեր են, զօրութիւն ցոյց տուեր, զիւրացներ հասուցիւր են. բայց կորսուած են, որովհետեւ չեն ունեցեր ուժերուն ուժը, գեղարուեստական ստեղծագործ ուժը, որ մասաւոր գեղակերտ յախոհական յուշարձաններու մէջ սեւեռէր հոգին այդ ցեղերուն. եւ այսօր անոնք այնպէս են որպէս թէ գոյութիւն ունեցած չըլլային: Ժողովուրդներ կ'անհետանան, քաղաքներ կը կործանին, մեծազօր դահեր կը փլչին, բայց գիրքը, արձանը, պատի մը վրայ նկար մը, երաժշտութեան քանի մը նոթեր՝ թղթին յանձնուած, դարեր յետոյ, թաղուած բայց միշտ կենդանի, դուրս կ'ելլեն մոխիրներէն ու փլատակներէն, անհետացած ազգին բարոյական դէմքը կը վերակենդանացնեն, ու իրենց անվախճան կեանքը անոր կը փոխանցեն:

Հայ ազգը, եթէ հակառակ այնքան մեծազօրոյ ազէաներու՝ դարերէ ի վեր ինքըզինքը պահպաներ է իբրև ուրայն անգամ մը մարդկային ընտանիքին մէջ, ատիկա կըրցեր է ընել գլխաւորապէս շնորհիւ իր գրականութեան: Եթէ կը սիրենք հայ եկեղեցին եւ զայն կը նկատենք իբր ազգապահպան ուժ մը, անոր համար է որ այդ եկեղեցին՝ մեր գրականութեան կազմակերպիչը, զարգացուցիչը, Հայ ցեղին մէջ մասաւոր կեանքի մեծագոյն վառարանը եղեր է անցեալին մէջ: Աւանց մեարդու-

ևան չըջանի մեր մեծ եկեղեցականներուն փրկարար նախաձեռնութեան, այսօր հայ ցեղը կամ ձուլուած պիտի ըլլար՝ ինչպէս այնքան ասիական ցեղեր, կամ՝ եթէ մնար՝ պիտի ունենար Քիւրտերու ամուլ ու անուպայ դոյութիւնը։ Պատմութեան ամենէն վայրագ հրոսներուն հուրն ու սուրը անզօր են եղած այն խաղաղիկ բայց անպարտելի մարտիկներուն դէմ՝ որ կը կոչուին Սահակ, Մեսրոպ, Եղիշէ, Փարպեցի, Խորենացի, Նարեկացի, Շնորհալի։

Այսօր, մեր ցեղը, թէպէս բազմադարեան ծերութեամբ մը ալեւոր, նիւթապէս՝ թոյլ, ցրուած, բարոյապէս՝ յոգնած, քիչ մը ջախտաւոր, բայց մտաւորապէս կը մնայ միշտ բեղուն, ուժեղ, կեանքով լեցուն։ Տաղանդի կրակը իր մէջ միշտ վառ է։ Մեր ամենամեծ հոգը, մեր էական գործը՝ պէտք է ըլլայ նպաստաւորել այդ կրակին տարածումը, մեծացումը, զօրացումը, մաքրացումը։ Ատիկա անշուշտ կախում ունի արտաքին հանգամանքներէն, բայց նաև՝ ու ըստ իս գլխաւորաբար՝ կախում ունի մեր իսկ բռնած դիրքէն հանդէպ մեր լեզուին ու գրականութեան։

* * *

Ինչ են այժմ արտաքին հանգամանքները մեզի համար։

Հայութեան մէկ ամենատուար հատուածը ոռոսական տիրապետութեան ներքեւ կը գտնուի։ Մեր ցեղին այդ պատառը՝ — ես միշտ այսպէս խորհած եմ եւ այսօր՝ Կովկաս անձամբ անտեսելէս յետոյ՝ աւելի քան երբէք նոյնը կը խորհիմ, — մեծապէս օգտուած է ոռուս տիրապետութենէն։ Անիի կործանումէն ի վեր, Հայութիւնը, իր հայրենիքին այդ մասերուն մէջ, շարունակական արշաւանքներու ենթարկուած, մէկ տէրէ միւսին ձեռքն անցնելով, ունէր կացութիւն մը մշտապէս անստոյգ, անապահով, տագնապալից, փոթորկայոյզ։ Իր տէրերն ըլլալով մահմետական, եւ ծանօթ ըլլալով ինչ որ էր մահմետական տիրող լուծը բայնային համար, իր կեանքը գերիի կեանք էր, զուրկ ամէն արժանապատուութենէ, տիրողին քանակաճոյքէն կախուած։ Վերջին շրջանին, պարսիկ ու թուրք տէրերու ներքեւ այդ

կեանքը դժոխային դարձած էր. ոռուսներն գալուստը փրկութիւն մը եղաւ։ Հայութիւնը այդ օրէն սկսեալ Կովկասի մէջ՝ դատած է կայուն, տեւական, հաստատուն կացութիւն մը։ Ռուսաստանը կրնայ եւ արդէն սկսած է ներքնապէս փոփոխուել, — այսինքն բարեփոխուել, — բայց ո եւ է յոյս չկայ որ ուրիշ պետութիւն մը գայ այդ գաւառներուն տիրապետել։ Կայուն, որոշ կացութիւն մը՝ մեծ բարիք է, ինչքան ալ այդ կացութիւնը ունենայ իր թերի կողմերը։ Ռուս տիրապետութեան տայ՝ Հայը՝ մարդու պէս ապրած է, ինքզինքը գտնելով միջավայրի մը մէջ՝ որ անսովահանը չըլլալով հանդերձ՝ որոշ օրէնքներու, կանոնաւոր կարգուսարքի մը վրայ հիմնուած էր։ Կրցած է՝ շնորհիւ այդ պայմաններուն՝ տնտեսական մեծ բարօրութեան հասնիլ, օգտուած է՝ վերջապէս՝ ոռուս բարձրագոյն քաղաքակրթութեան ազդեցութենէն, ուրեմն եւ զարգացած ու զօրացած է նիւթապէս եւ բարոյապէս։ Մէտայլին հակերեսը՝ ձուլիչ ձգտումներն են զոր ոռուս կառավարութիւնը մերթ ի յայտ բերած է։ Վնասը զոր այդ ձգտումները տուած են ցարդ մեր Կովկասի ազգակիցներուն՝ շատ փոքր է քան օգուտը զոր ոռուս տիրապետութեան շնորհիւ ստեղծուած նոր պայմաններէն քաղած են անոնք։

Մերթ՝ այդ ձուլման ձեռնարկները — կալիցիինեան օրերուն ծայրայեղ այլանդակութեանց ձեւն զգենդով — օգտակար իսկ եղած են, Հայոց ազգային ոգին աւելի զօրացնելու ծառայած են։ Վորոնցոֆ-Տաշքոֆի օրով ձուլման փորձերը անդի տուին թոյլատու վարմունքի մը։ այս բոլորին, ոռուսահայր ունի միջոցներ իր դպրոցները, իր թատրոնը, իր գրականութիւնը, իր « կուլտուրական » ընկերութիւնները զարգացնելու։ Ներկայ թոյլատու սիւսէմը կրնայ յաւիտեական չըլլալ, օր մը նոր Կալիցիներ կրնան գալ։ Բայց ոռուսահայր իր նիւթական ու բարոյական ուժերով՝ որ շնորհիւ ոռուսական միջավայրի ընդհ. պայմաններուն՝ միշտ աւելի պիտի զարգանան, կարող պիտի ըլլայ միշտ դիմադրել այդօրինակ բռնարարմանց՝ եթէ ունենայ կամք՝ ինչպէս Լեհացիք՝ շատ աւելի խստօրէն հարածուած՝ ունեցած են, — այսինքն

եթէ իր մէջ զօրեղ մնայ ցեղային ոգին : Այդ ոգին տկարացած է՝ ոռոսահայոց մէկ բաւական կարեւոր մասին մէջ՝ ոչ թէ կառավարութեան ձուլիչ ձեռնարկներուն բերմամբ, այլ նոյն իսկ իրենց ինքնաբեր յառաջխաղացումովը դէպ ի անզգալի, անպիտակից բայց խոր ոռոսացում մը : Թիֆլիսի Հայերը (ոչ միայն « պուրթուա » ները, այլ նոյն իսկ « մտաւորականներէն » շատեր) իրարու մէջ աւելի ոռոսերէն կը խօսին քան հայերէն . եւ ասիկա ոչ ստիպմամբ, այլ իրենց ազատ կամքով . Երեւանի մէջ՝ կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորներս՝ հրաւիրուեցանք հայկական երեկոյթի մը, որուն փրօկրամը ամբողջապէս ոռոսերէն էր (Երեւանի մէջ, էջմիածնայ քթին տակ . . .) : Այս մասին կարելի է եւ պէտք է ուրիշ ասթիւ խօսիլ երկարօրէն : Բուն վտանգը հոգ է Կովկասի Հայութեան համար : Ելացած, ճգնուած, գերուած են ոռոս քաղաքակրթութեանէն . ոռոսերէն խօսած ատենին՝ երջանիկ կը զգան ինքզինքնին, արեւցած, հեշտագոյն ձեւ մը ունին, հպարտ ու սէգ շեշտ մը կ'աւնեն՝ կարծես թէ ոռոսերէնը իրենք ստեղծած ըլլային : հայերէն կը խօսին, հայ թատրոն կ'երթան, հայ գիրք կը կարդան՝ երբեմն՝ բարեգործութիւն մը ընելու պէս : Կովկասի հայ մտաւորականներուն վրայ մեծ պարտք կայ՝ աւելի կորովով քան ինչ որ յոյց կուտան՝ առաջքն առնելու այդ ինքնակամ ոռոսացման արուր երեւոյթին :

Պարսկահայք տուած են ցարդ տաղանդաւոր անհատականութիւններ, բայց իբր հասարակութիւն գրականութիւն մը չեն կրցած արտադրել . իրենց տուած անհատականութիւնները — ինչպէս Բաֆֆի, եւն. — զարգացած են Պարսկաստանէն դուրս, Թիֆլիս կամ այլուր : Ատոր պատճառը անշուշտ երկրին ընդհանուր յետամնաց կացութիւնն է եղած : Այժմ սահմանադրական ընթիւմ մը հաստատուած է Պարսկաստանի մէջ : Տեւակա՞ն է այդ ընթիւմը . ի՞նչ պիտի ըլլայ Պարսկաստանի ապագայ քաղաքական կացութիւնը . պիտի մնայ միշտ անկախ, պիտի կրնայ վճռակամօրէն յառաջանալ քաղաքակրթութեան ճամբուն մէջ . ոչինչ կարելի է ըսել ստոյգ : Սա նկատելի է որ նոյն իսկ նոր ընթիւմին հաստատումէն ի

վեր, գրական շարժումի մը բողբոջելուն առաջին նշաններն իսկ չենք տեսներ Պարսկահայոց մէջ . ոռոսահայ մամուլին ամբոյն արձագանգ եղող տկար փորձեր միայն : Մաղթելու է որ նոր Բաֆֆի մը երեւան գայ, որ մնայ իր ծննդավայրին մէջ, հզօր շարժում մը յառաջ բերէ, տաղանդներ արթնցնէ, հիմնէ պարսկահայ գրականութիւն մը որ իր յատուկ դրոշմն ու հրապոյրը ունենայ եւ ճոխացնէ մեր ընդհանուր գրականութիւնը :

Տաճկահայք՝ թրքական լուծին տակ՝ ունեցած են կացութիւն մը որ իր յուր կողմնուն հետ ունեցած է եւ իր լաւ կողմերը . յուր կողմերը բացատրելու պէտք չկայ, — բռնապետական վարչութիւն, աւազակ պաշտօնեաներ, քիւրտերու բռնութիւն, հալածանք, անարգանք, ջարդ, եւն. — լաւ կողմնայն եղած է որ օսմանեան պետութեան մեծ քաղաքները, Պոլիս, Իզմիր, Եւրոպայի շատ մօտ ըլլալով, պարունակելով բազմաթիւ ազգաբնակչութիւն մը ուր Եւրոպացիներն Երջանկ կարեւոր տեղ մը կը բռնեն, արեւմտեան քաղաքակրթութեան հետ վաղուց շփման մէջ մտած են . այդ դիրքին բերմամբ, Հայը՝ Պոլսոյ եւ Իզմիրի մէջ շատոնց ի վեր հիմնած եւ ամենէն տաղնապալից շրջաններուն մէջէն իսկ՝ շարունակած է զարգացնել ճոխ գրականութիւն մը, եւրոպական լաւագոյն ազգացութիւններով առաջնորդուած, խորքին մէջ հայ . թրքական Հայաստանին մէջ, գրականութիւն մը չէ կրցած զարգանալ անդուոյն իսկ վրայ, բռնապետական պայմանները ատոր արդելք եղած են . բայց թրքական Հայաստանը արտադրած է բաւական թուով տաղանդներ որ Պոլսոյ մամուլին մէջ ինքզինքնին արտայայտած եւ իրենց Հայաստանցի գրողի բնիկ հրապոյրը բերած միացուցած են Պոլսոյ հայ գրական շարժումին :

Ազգային ոգին թրքահայոց մէջ եղած է միշտ վառ . Հայը թուրքիոյ մէջ սիրած է միշտ իր ցեղային լեզուն ու գրականութիւնը՝ ո եւ է լեզուէ ու գրականութենէ աւելի (մաս մը մոլեանդ կաթողիկ Հայերու օտարամուլութիւնը, կամ կեսարացուոց, դաղատացուոց թրքախօսութիւնը՝ բացառիկ երեւոյթներ են, եւ անոնք իսկ այժմ անհետանալու վրայ) . ատոր պատ-

ճատն էր խոր անջատումը որ կար Հայոց եւ երկրին տիրող տարրին միջեւ, ինչպէս եւ տիրող տարրին քաղաքակրթական ստորագասութիւնը. բայց Ֆրանսերէն լեզուն ու գրականութիւնը, որ այնքան ազդած են թրքահայ զարգացած հասարակութեան վրայ, չեն գերած զայն՝ հայերէնէն ուժացնելու աստիճան. թըրքահայը օգտուած է Ֆրանսական լեզուէն ու գրականութիւնէն, բայց շարունակած է իր լեզուն սիրել, իր ներքին կեանքին մէջ միմիայն զայն խօսիլ. իր ազգային գրականութեամբը հետաքրքրուել աւելի քան երկրին ուրիշ ու եւ է գրականութեամբ:

Այժմ, իրերու նոր կարգ մը հաստատուած է օսմանեան պետութեան մէջ: Ի՞նչ պիտի ըլլայ թուրքիոյ ազգային, ոչ ոք ճշտել կարող է գուշակել. բայց սա հաստատ է որ հին բռնագետական ընթացք մեռած է հոն ընդ միշտ Սահմանադրական թուրքիան ունի ներքին եւ արտաքին արգելքներ՝ իր անսայթաք եւ արագ յառաջացմանը. ներքին արգելքները — մոլուաւորութիւն, ազիտութիւն, ցեղային շահերու հակառակութիւն, եւն. — թերեւս այնքան երկիւղալի չեն որքան արտաքինները. նոր ընթացք մինչեւ ցարդ հակառակ անոնց տեսելու կարող ըլլալն ազգացուցող, արտաքին ազգակներէն կախուած է նոր ընթացքին, եւ նոյն ինքն թուրքիոյ, բազում. եթէ զբռնի յառնէ մըրիկ մը եւ խուժէ թուրքիոյ վրայ, չենք գիտեր մինչեւ ուր կ'երթան անոր արգելքները, եւ ի՞նչ նոր իրերու վիճակ մը կը ստեղծուի. Հայերը այդ չեն ցանկար. իրենց շահը կը պահանջէ՝ անկեղծօրէն աջակցել սահմանադրութեան զօրացման, առանց աղմուկի, զգուշաւոր ու շրջանայեաց կերպով, որովհետեւ՝ եթէ մըրիկ մը պայթի՝ իրենց գլխուն փորձանք կայ գալիք նորէն. Այսպէս կամ այնպէս, Արեւելեան հարցը երկու ձեւի տակ՝ միակ լուծումի մը կրնայ յանգիլ, կ'ամ եւրոպական ուժերու ուղղակի խուժումը եւ կ'ամ ներքին ազատասէր ուժերուն միջոցով՝ եւրոպական քաղաքակրթութեան տիրապետումը Արեւելքի մէջ: Ենթադրելով որ այդ երեւոյթը մինչեւ ծայրը շարունակէ կատարուել ներքին ուժերուն ձեռքով, թրքահայերը հետզհետէ պիտի գտնուին

կացութեան մը մէջ որ շատ նման պիտի ըլլայ ուստաւայոց կացութեան. իրենց դէմ պիտի ունենան երկու վտանգ, առաջին՝ թուրք ազգայնամուտ տարրին բռնի ձուլման ճգնադ գործունէութիւնը, երկրորդ՝ թոյլատու, ազատասէր տարրերուն յաղթանակով օսմանեան ընդհանուր քաղաքակրթութեան մը ծաղկումին Հայոց վրայ գործելիք անզգայական ապագայնացումը. առաջին վտանգին դէմ — զոր միշտ աչքի առջեւ պէտք է ունենալ, — թրքահայը իրեն վիճակակից ունի Յոյնը, Արաբը, Ասորին, Ալբանացին, նոյն իսկ Հրէան, նոյն իսկ Քիւրտը, եւ միանգամայն աջակից ու պաշտպան ունի Արեւմուտքի մեծ ազատասէր ազգերուն համակրութիւնը. ուրիմն այդ վտանգը այնքան խոր չէ. կարելի է այժմէն իսկ իբր քացարձակ անկարելիութիւն մը նկատել օսմանեան պետութեան ցեղերուն բռնի թրքացումը: Բայց միւս վտանգը աւելի լուրջ է. օսմանեան ազգ մը եւ օսմանեան քաղաքակրթութիւն մը եթէ վճռապէս կ'աղմուկին, անոր զարգացման եւ ընդլայնման երկրին բոլոր ցեղերուն ամենէն ձեւներէց եւ ուժեղ տարրերը պիտի մասնակցին. այդ քաղաքակրթութիւնը, ինչքան ալ նորածին, պիտի ըլլայ հետզհետէ աւելի ընդարձակ, բաղմատարր, եւ կարող է դիմել դէպ ի փայլուն ապագայ մը. ան պիտի իրեն քաջ ոչ-թուրք տարրերը այնքան աւելի ապահով ու անդիմադրելի կերպով, որքան որ բռնի միջոցներ չգործածուին. ասակից դատ, օսմանեան պետութեան գրէթէ ամբողջ տարածութեան մէջ՝ Հայ ու թուրք քով քովի կ'ապրին, իրարու խառնուած՝ շատ աւելի քան կովկասի մէջ Հայ ու Ռուս: Մայրաքաղաքին մէջ, ուր պիտի գտնուի միշտ թէ՛ օսմանեան եւ թէ՛ թրքահայ քաղաքակրթութեան կեդրոնը, Հայ ու թուրք հետզհետէ աւելի մօտիկ յարաբերութիւններ պիտի ունենան, միասին ապրելու եւ գործելու պիտի մղուին, — օսմանեան խորհրդարան, համալսարան, զինուորադրութիւն, օսմանեան մամուլ, գրականութիւն, դպրոց, քաղաքական պաշտօններ՝ բաց պիտի ըլլան Հայուն ու թուրքին. «օսմանցիացման» ձեւին տակ ինքնարար «թուրքացման» վտանգը ուրիմն անհերքելի կերպով աւելի

լուրջ է : Ատոր դէմ Հայը իր ցեղային քաղաքակրթութիւնը պաշտպանելու համար ուրիշ ոչ մէկ միջոց ունի բաց կթէ իր կամը : Ոչ ոք անշուշտ մտքէն կ'անցնէ քարոզել որ դէպ ի յառաջգիւմութիւն ընթացող օսմանհան պետութեան մը մէջ՝ Հայը ուզէ կղզիանալ , չմասնակցել ընդհանուր քաղաքակրթական շարժումին , ապրել զուտ հայ կեանքով մը . այդ նիւթապէս անկարելի է , ճակատագրը ուզեր է որ մենք , վաղուց կտոր կտոր եղած , ինքզինքնիս տեսնենք ստիպուած՝ մեր պատմական հայրենիքին անբող երեք օտարացեղ մեծ պետութեանց ընդհանուր կեանքովն ապրելու . մենք չունեցանք ուժը , միութիւնը , խելքը՝ որ պէտք էին որպէս զի երկրագործիս վրայ գէթ փոքր անկիւնի մը մէջ զուտ հայ ազատ կեանքի մը բողբոջումը հնարաւոր դարձնէինք . այլ եւս կը մնայ համակերպել իրերու վիճակի մը զոր փոփոխելու անդօր ենք . պէ՛տք է մասնակցինք ընդհանուր կեանքին այն երկիրներուն ուր կը զրտնուինք . ատիկա անհրաժեշտ է անշուշտ նոյն իսկ մեր ցեղային շահերուն մէկ որոշ ու կարեւոր շարքին համար . բայց մենք պէտք է ապրինք , ամէն տեղ , կրկին կեանքով մը , կեանք մը ուռւս , օսմանցի կամ պարսիկ քաղաքացիի , եւ կեանք մը Հայու : Անկարելի չէ ատ : Իսլամացիք Անգլիոյ մէջ , Փոլսիացիք՝ ամէն տեղ , եւ մանաւանդ Աւստրիոյ մէջ , մեզի մտաախպար կրնան ըլլալ :

Բաց ի Պարսկաստանի , Ռուսաստանի ու Թուրքիոյ մէջ իր մեծ զանգուածներէն , Հայութիւնը գոյութիւն ունի նաեւ իր արաստահամանեան գաղութներուն մէջ : Մեծաքանակ արտագաղթ մը , հայրենիքին պարպուելը Հայ տարրէ՛ աղէտաւոր է , եւ ատոր դէմ պէտք է մաքառինք մեր բոլոր ուժով . բայց սահմանափակ թուով հայ գաղութներու գոյութիւնը մինչև ցարդ մեծապէս օգտակար եղած է Հայութեան եւ այսուհետեւ ալ պիտի ըլլայ միշտ օգտակար վերեակիկն ու վիկննան իրենց Մխիթարեաններով , Մոսկուան՝ իր Հիւսիսափայլով , Լազարեան ձեռնարանով , Փարիզը իր Ռսկանեաններով , Շահնազարեաններով , Մուրատեան եւ Հայկազեան փարժարաններով , եւ աւելի նոր ժամանակներու մէջ՝ Լոնտոնի , Փը-

նելի , Ամերիկայի քանի մը քաղաքներու , Եգիպտոսի եւ Պրանսայի գաղութներն եւ իրենց ծոցը խմորուող հայկական գործունէութիւնը՝ ահագին դեր են կատարած հայկական կեանքին մէջ : Այդպէս ալ պիտի ըլլայ այսուհետեւ , — պայմանով որ օտար երկիրներու մէջ ցրուած այդ բուռ մը Հայերն ալ ապրին միշտ այդ կրկնակ կեանքով զոր վերեւ մասնանիշ ըրի , — մասնակցելով իրենց զրտնուած մեծ երկիրներուն մտաւոր ու ընկերական կեանքին , եւ պահպանելով իրենց ցեղային հոգին : Եթէ հայրենիքի մէջ՝ պայմանները հետզհետէ աւելի բարւոքին , շատոնց քաղաքակրթութեամբ մեծ երկիրներու մէջ՝ յառաջացեալ զարգացման մը աղբիւրներէն իսկ օգտւող այդ գաղութները կարող են , փոխանցելով իրենց հայրենիքի եղբայրներուն իրենց բարոյական ու նիւթական վաստակին արդիւնքը , անոնց յառաջգիւմութեան յաւելումական ու կարեւոր աջակցութիւն մը բերել : Իսկ եթէ գան նորէն սագնապալից շրջաններ , եթէ մեր ցեղային կեանքը՝ հայրենիքին մէջ տկարացնելու , ձուլելու փորձեր տեսնուին , գաղութները՝ իբրեւ հեռաւոր , ազատ եւ աջալուրջ պահպաններ՝ պիտի հսկեն վտանգին հանդէպ , պիտի բարձր ու մշտափոս բռնեն հայկական քաղաքակրթութեան ջահը , պիտի գործեն՝ չքայնելու համար վտանգը :

* * *

Էականը , այս բոլոր արտաքին ու ներքին քաղմաճեւ , բարդ , անսրբչ , միշտ փոփոխութեան ենթակայ պայմաններուն մէջ՝ այն է որ մենք պահպանենք սէրը մեր ցեղին : Մեր ցեղային գոյութեան ջնջման ամենէն ապահով գործիքը՝ մենք իսկ կրնանք ըլլալ , եթէ օտարասիրութիւնը եւ ինքնարհամարհանքը՝ որ արդէն մեր մէջ գոյութիւն ունին՝ ընդլայնին ու զօրանան : Կարելի է ազգի մը քաղաքական անկախութիւնը ջնջել . կարելի չէ՝ եթէ նոյն իսկ տիեզերքի բոլոր ուժերը միանան՝ ցեղ մը անհետացնել , որքան ատեն որ այդ ցեղը ինքզինքը պահպանելու կամք ունենայ : Այդ կամքը կ'ըլլայ այնքան աւելի զօրեղ եւ խոր , որքան որ ցեղ մը ինքզինքը կը յարգէ եւ կը

սիրէ : Մեր ջանքը պէտք է ըլլայ բազմապատկելի Հայոց մէջ սէրը դէպ ի իրենց ցեղը եւ անոր քաղաքակրթութիւնը : Ատիկա կարող է ընել՝ ամէն բանէ աւելի՝ գրականութիւնը : Մեր եկեղեցին, մեր կաթողիկոսական եւ պատրիարքական աթոռները, եւ իրենց շուրջը խմբուած զպրօցները, ցեղային հաստատութիւնները անհրաժեշտ են՝ ցեղին նիւթապէս իբր սուրոյն մարմին գոյութիւնը պահպանելու բայց գրականութիւնն է որ այդ մարմնոյն մէջ հոգին պիտի կազմէ, նոյն իսկ մեր եկեղեցւոյն, մեր հաստատութեանց, մեր զպրօցներուն կեանքը պիտի զօրացնէ՝ իր իսկ կեանքին, ուժին, փայլին չափովը : Հայկական ազգասիրութեան ամենէն ապահով, ամենէն տեսական ու անխորտակելի ձեւը՝ մեր գրականութիւնը զարգացնելու աջակցին է :

Ատոր մէջ համահաւասար թէպէտ տարբեր պարտք ունին կատարելու՝ թէ՛ գրական գործիչները, եւ թէ՛ հասարակութիւնը :

Գրական գործիչներուն պարտքը կը կայանայ երկք գլխաւոր բանի մէջ . 1. Ճանչնալ եւ մեր նոր սերունդներուն ճանչնել ինչ որ կայ գեղեցիկ եւ ինքնատիպ՝ մեր նախնեաց գրականութեան եւ արուեստին մէջ, ինչպէս եւ հայ ժողովրդական քնարի արտադրութեանց մէջ . թէ ասիկա որքան մեծ կարեւորութիւն ունի՝ մեր ազգային ինքնութեան պահպանման եւ նոյն իսկ մեր նոր գրականութեան ցեղազրոյժ կնիք մ'ստանալուն տեսակէտով, աւելորդ իսկ է այլ եւս բացատրել պէտք է միայն շեշտել թէ այդ ուղղութեամբ շատ աւելի բան կայ ընելու, եւ աւելի մեթոտական կերպով, քան ինչ որ եղած է ցարդ . 2. Կատարել ուսումնասիրութիւններ օտար գրականութեան, ու արուեստի մեծագոյն դէմքերուն եւ շրջաններուն վրայ . եւ խնամոտ թարգմանութիւններ արեւմտեան եւ արեւելեկան մեծ գրականութեանց ամենէն կարեւոր հրաշակերտներուն : 3. Արտադրել ինքնատիպ գործեր, մեր ժամանակի ոգւոյն, պահանջներուն, ճաշակին համապատասխան, եւ որոնք՝ իրենց մէջ ի յայտ բերելով հետզհետէ աւելի մեծ գրական զարգացում, մտայնութեան ճութութիւն, ձեւի կատարելութիւն, մեր գրականութիւնն ընդարձակեն, զօրացնեն, զայն

տանին դէպ ի միշտ աւելի բարձրը, զայն կարող գարձընեն մեծագոյն գրականութեանց հետ մրցելու : Աստիճանաւորումը զոր նշանակեցի վերեւ՝ առանց դիտաւորութեան չէ . ոմանք պիտի ուզէին որ առաջին տեղը տայի ինքնագիր արտադրութեանց, եւ տարակոյս չկայ որ անոնք են ամենէն կարեւորը ո եւ է շրջանի արտադրութեանց մէջ, որովհետեւ անոնք ցեղին ստեղծագործ կարողութեան ուղղակի ապացուցումն են . բայց մեզի պէս ժողովրդի մը մէջ, սր դեռ շատ քիչ կը ճանչնայ իր նախնեաց գործը, եւ տիեզերական գրականութեան մասին ալ շատ անկատար ծանօթութիւն ունի, անհրաժեշտ պէտք կայ շատ մեծ խնամք տանել այդ երկու էական պակասները լրացնելու . ո եւ է գրագէտ՝ ստեղծագործելէ առաջ՝ լաւ է որ ճանչնայ իր ցեղին հինաւորց վարպետները եւ օտար գրականութեանց մեծագոյն դասականները, որպէսզի իր գրականութիւնը զուրկ չըլլայ ցեղային աւանդական նօթէն ու նաեւ մերկ չըլլայ այն գրական բարձր ճաշակէն զոր մեծ դասականներուն հետ ընտելացումը միայն կրնայ տալ : Ես համաձայն չեմ Հոբիգոնի պատուական խմբագրապետ Լէօին որ՝ Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերութեան վերահաստատման առթիւ գրած իր գեղեցիկ յօդուածներէն մէկուն մէջ կ'ըսէ՝ թէ՛ « Ինչպէս կարելի է մէկ գծի վրայ գնել՝ իբր հրատարակելի գործ՝ Ահարոնեանի գիրք մը որ ամէն տեղ պիտի կարդացուի եւ աշխարհաբար ինորենացի մը որ գրավածառներու դարակններուն վրայ դիզուած պիտի մնայ » : Հայ հասարակութիւնը պէտք է կարգայ թէ՛ Ահարոնեանը եւ թէ՛ ինորենացին, երկուքին ալ պէտք ունի . ազգ մը որ իր հին դասականներուն հետ կապը կը կտրէ, ինքզինքը եղծած, հաշմած կ'ըլլայ : Ահա այս նկատումով է որ՝ ուշադրութիւն հրաւիրելու համար՝ այդպէս աստիճանաւորեցի վերեւ :

Ուրիշ շատ կարեւոր գործ մը զոր ունին կատարելու մեր մտաւոր գործիչները, այն է՝ մեր արդի գրականութեան երկու մեծ հատուածները՝ ուսսահայկականն ու թրքահայկականը՝ իրարու ծանօթացնել : Ռուսահայք ու թրքահայք շատ աւելի ծանօթութիւն ունին Ռուսաց, Ֆրանսացոց, Գերմանացոց կամ

Իտալացւոց քան իրարու գրականութեան մասին : Եւ ասիկա ողբալի բան մըն է : Արդէն փոքրաթիւ ազգ մըն ենք , այս անձատու մը աւելի եւս կը տկարացնէ մեզ : Ոչ միայն երկու հասարակութիւնները անձանօթ են իրարու մտաւոր գործունէութեան , այլ նոյն իսկ գրագէտները՝ քիչ բացառութեամբ : Երկու կողմի գլխաւոր գրողներէն շատ քիչեր են որ իրենց գործերը կը փոխանակեն իրարու հետ : Քննադատութիւնը , երկու կողմէն ալ , շատ յաճախ անհոգ է քոյր հատուածին մէջ լոյս տեսնող բոլոր կարեւոր նորութեանց մասին տեղեկութիւն տալու հասարակութեան : Ատենով , Նազարեանցի , Նալբանդեանցի , Ոսկանեանի եւ Սլաճեանի օրերուն , աւելի մօտութիւն կար երկու կողմի գրական գործիչներուն միջեւ . ուստիայ Տ. Գաբրիէլ ք, Պատկանեանը իր դիւցազներգութիւնները թրքահայ Մամուրեանին Արեւելեան Մամուլին մէջ կը հրատարակէր , եւ Մամուրեան , ինչպէս եւ յետոյ Պարոնեան՝ կ'աշխատակցէր ուստիայ հանդէսներու : Հիւսիսափայլը կը հետեւէր Պոլսոյ ազատական մամուլին ջանքերուն . նոյնպէս եւ Մեղուն՝ Հիւսիսափայլին կ'աշակցէր , անոր գործունէութիւնը կը ձանձցնէր թրքահայոց : փոխադարձ հեռաքրքրութեան , սիրոյ , յարգանքի յարաբերութիւններ կային երկու հատուածներու մտաւոր ղեկավարներուն միջեւ : Այդ յարաբերութիւնները , որ անշուշտ իրենց արտայայտման մէջ չէին լիակատար ու մեթոտական , պէտք էր միշտ նոյն ոգևով պահպանուէին , եւ հետզհետէ աւելի սերտ , մօտիկ , կանոնաւոր դառնային : Այդպէս չեղաւ : Արտաքին արգելքներ եւ ներքին սխալներ ասիկա դժուարացուցին : Համիտեան ընթիւնը հետզհետէ պատուարը թանձրացուց երկու հասարակութեանց միջեւ , ուստիայոց թերթերը , գրքերը արգիլուած էին Տաճկաստանի մէջ , եւ թրքահայ գրող մը՝ առանց ինքզինքը վտանգելու չէր կրնար աշխատակցիլ ուստիայ մամուլին : Ներքին սխալը , — արդիւնք իրար չճանչնալու , — իրարու նկատմամբ՝ արհամարհական կամ հեզնական վերաբերմունքն էր զոր երկու կողմի գրողներէն ոմանք՝ կանխակալ կարծիքներով տոգորուած՝ կ'ունենային . ուստիայ գրողներէ շատերուն համար՝ թրքահայ գրա-

կանութիւնը մեծ մասամբ ձեւամօլ գաղափարազուրկ ֆրազաբանութիւններով էր ուսած , իսկ թրքահայ գրողներէ ոմանց համար՝ ուստիայ գրականութիւնը շատ յաճախ հում նիւթ էր՝ առանց գեղեցկագիտական արտայայտութեան : Ուրախագիթն այն է որ այժմ ամէն կողմ կը զգացուի այս բարոյական անջատման վնասարեւ ու ցուալի հանգամանքը , եւ զայն բառնալու բուն փափաք կը յայտնուի : Զայն Հայրենեացի մէջ 5-6 ամիս առաջ , Պ. Յովհ. Գաղանձեան ունէր պատուական յօդուած մը ուր անհրաժեշտութիւնը ցոյց կուտար ուստիայ եւ թրքահայ գրական դասակարգերն իրարու հետ սերտ յարաբերութեան մէջ դնելու . նոյն զգացումները կը յայտնէր վերջերս Լէօ Հորիզոնի իր գեղեցիկ յօդուածներէն մէկուն մէջ : Ռուստիայ գրողներու խումբ մը ձեռնարկած է արդէն հրատարակել երկու հատոր , մին՝ հաւաքածու մը ուստիայ լաւագոյն գրողներու հատընտիր էջերուն (որ արդէն լոյս տեսաւ) , միւսը՝ նուիրուած թրքահայ գրողներուն (որ քիչ ատենէն լոյս կը տեսնէ) . Պոլիս նոր հաստատուած « Արծիւ » հրատարակչական տունը , իր ի լոյս ընծայած հատորներուն շարքին համար կը դիմէ ուստիայ գրագէտ Վ. Փափազեանին ինչպէս թրքահայ Եարճանեանին ու Վարուժանին : Թրքահայ հասարակութիւնը խանդավառ ընդունելութիւն կ'ընէ ուստիայ դերասանական խումբերուն : Արտաքին պայմանները այժմ շատ նպաստաւոր են : Անհրաժեշտ է որ այս փոխադարձ մերձեցման շարժումը տարածենք ու զօրացնենք : Հայ գրականութիւնը , նոյն իսկ հայ ազգային ընդհանրապէս , մեծապէս պիտի շահին , ընդլայնին , ուժովն աւտով : Երկու գրականութիւններէն ոչ մին լիակատար է եւ միւսէն գերազանց , երկուքն ալ կէսեր են , եւ իրենց ուրոյն առաւելութեանց հետ ունին իրենց յատուկ պակասները . երկուքը միասին կը կազմեն հայ ժամանակակից գրականութեան ամբողջութիւնը : Ռուստիայ ու Թեւահայ « քաղաքական » բառեր են , արտաքին պայմաններու ընթացք հայ ժողովրդին երկու կէսերուն ձակտին փակցուած . միեւնոյն ժողովուրդն է , հոն ու հոս , նոյն հիմնական զգայնութիւնն ու մտայնութիւնը ունեցող , որ իր գրական արտայայ-

տութեան մէջ ցորացուցած է բնականաբար տարբերութիւնները անմիջական միջավայրին եւ տիրապետող այլազան բարձրագոյն քաղաքակրթութեանց : Այդ տարբերութիւնները , որ զիրար լաւ չճանչցողներուն եւ քննադատական բարձր ըմբռնում չունեցողներուն համար առիթ տուած են զիրար դատախետելու , առաւելութիւն մը , բարիք մը պիտի ըլլան՝ հայ ընդհանուր գրականութեան համար , եթէ երկու կողմի գրագէտները աւելի հիմնական ու շարունակական կերպով իրարու գործունէութեան հետեւին , եւ իրարմէ ստանան ճիշտ ինչ որ իւրաքանչիւրը չունի : Միտք չունիմ այստեղ կատարել համեմատական ուսումնասիրութիւն մը , զոր արդէն ուրուագծած եմ « Ռուսահայք եւ Թրքահայք » ախողոտով հին յօդուածի մը մէջ (1) . միայն պիտի շեշտեմ սա գաղափարը զոր հոն յայտնած էի , թէ սխալ է իրարու մեղադրել պակասը այս ինչ յատկութեան կամ սկիւրութիւնը այն ինչ ճիւղին մէջ . պէտք է իրարու մէջ է՛ն առաջ նկատել ինչ որ հզօրագոյն ու յատկանշական կողմը կը կազմէ միւս կողմին : Թրքահայ եւ ռուսահայ գրականութեանց քննադատական համեմատութիւնը , որ կողմէն ալ ըլլայ զայն ընողը , պէտք է միշտ կատարուի բարեացակամ , սիրալիբ , համակիր ոգով մը , ազգին մէկ կամ միւս հատուածին ամբողջական գերազանցութիւն մը վերագրել ուղող կանխորոշ կրքոտ ու մեաստեր ձգտումներէ ետ կենսով : Կը սխալի Պ. Գաղանձեան երբ կը գրէ՝ այն համեմատութեամբը զոր Թրքահայք շատ աւելի յաճախ ցոյց տուած են ռուսահայոց հանգէպ քան այս վերջինները Թրքահայոց նկատմամբ , « Եթէ հարկ ըլլար նմանութեամբ մը բաղդասել Թրքահայ եւ ռուսահայ գրականութիւնները , ռուսահայ գրականութիւնը կրնայինք նմանցընել խոշոր շողարձակ ագամանդներով կազմուած հոյակապ քայռի մը , իսկ Թրքահայ գրականութիւնը՝ մանրիկ , ընտիր գոհարներով ընդհուլուգուած սիրուն մանեակի մը . » ո՛չ , երկու գրականութիւններն ալ ունին իրենց մեծ ու փոքր գոհարները . եւ երբ իրենց ամ-

1) Ա.Ասիոյ, Ս. սուրի :

բողջութեանը մէջ նկատենք երկուքն ալ , իրարու հաւասար արժէք ունին , տարբեր գեղեցկութիւններով : Այդ տարբերութիւնները պէտք է « ըմբռնող » ոգով մը ուսումնասիրեն երկու կողմի գրագէտները , ճիշդ զանո՛նք է որ փնտռելու եւ սիրելու են . անոնցմէ՛ է որ փոխադարձաբար օգտուելու են : Այդ երկու տարբեր առաւելութիւններով ճոխացած գրականութիւնները՝ զիրար « լրացնելու » կոչուած են :

Ի՛նչ պէտք է ընել որպէս զի երկու հասարակութիւնները իրարու գրական կեանքին աւելի մօտանց ծանօթութիւն ունենան . ներկայ յօդուածիս մէջ՝ ասո՛վ է մանաւանդ որ կ'ուզեմ զբաղիլ : Պէտք է մեքոսական ձեւ մը տալ ջանքերուն որ պիտի կատարուին այդ նպատակով : Առաջին ընելու բանը՝ թէ՛ թրքահայոց եւ թէ՛ ռուսահայոց բոլոր գպրոցներուն մէջ երկու բարբառներ հաւասար խնամով աւանդելն է առակերտելուն . երկու հասարակութեանց մէջ ալ , բաց ի գրական գասակարգէն , որ քիչ շատ ծանօթութիւն ունի քոյր հատուածին բարբառին ու գրականութեան (« քիչ շատ » կ'ըսեմ , որովհետեւ նոյն իսկ մեր գրագէտներուն մէջ քիչեր են որ լիակատարօրէն ծանօթ են միւս բարբառին ու անով արտադրուած գրականութեանը) , սովորական ընթերցողներու զանգուածը միւս հատուածի լեզուն կիսովիմ միայն կը հասկնայ . պէտք չէ ճշմարտութիւնը ծածկել , ինչքան ալ սխուր ըլլայ . դժբաղդ պայմաններ ուղեր են որ մենք երկու գրական բարբառ ունենանք . այդ երկու բարբառները նոյն լեզուին ճիւղերն են , իրարու շատ կը նմանին , բայց թէ՛ քերականութեամբ , թէ՛ բառարանով , թէ՛ ֆրազաչինութեամբ , շատ խորունկ տարբերութիւններ ունին . ինծի շատ քիչ պատահած է Կովկասի մամուլին մէջ Թրքահայ գրողներու յօդուածները տեսնել՝ առանց բաղմաթիւ սրխայներու տպուած . անհրաժեշտ է լուրջ ուսումնասիրութիւն մը՝ հիմնովին սորվելու համար մէկ կամ միւս բարբառը . գպրոցին մէջ է որ նոր սերունդները այսուհետեւ պէտք է այդ ուսումնասիրութիւնը կատարեն . այդպիսի բան դեռ չէ եղած մեր մէջ , եւ կամ շատ քիչ՝ պատահական , հատուածական կերպով :

պէտք է երկու հասարակութիւններն ալ իրենց գւորոցներու ծրագրին մէջ մտցնեն ատիկա : Երկու բարբառներուն միացման մասին ցանկութիւններ յայտնուած են ատենով : Գեղեցիկ ցանկութիւն բայց անիրագործելի : Երկուքը պիտի մնան , եւ իրենց ուրոյն ճամբուն մէջ զարգանան հետզհետէ : Ինչ որ կարելի է , այն է որ երկու կողմի գրագէտները՝ իրարու գործն աւելի մօտանց ծանչնալով , փոխադարձաբար մէկ բարբառը միւսէն ստանայ այն ասութիւնները , բառերը , ձեւերը որոնց համարժէքը իւրաքանչիւրը չունի իր մէջ . կարող են նաեւ օգտուիլ իրարու յաջող ջանքերէն դէպ ի նրբացում , երանգաւորում : Ատոր համար մասնաւորապէս անհրաժեշտ է որ երկու կողմի գրագէտները շատ աւելի կանոնաւոր , սեւեական ու մօտիկ յարաբերութեան մէջ ըլլան իրարու հետ : Յանկալի է որ երկու կողմէն , գրագէտները միշտ իրարու հետ փոխանակեն իրենց գործերը : Ռուսահայ գրագէտները աւելի յաճախ աշխատակցելու են թրքահայ մամուլին եւ փոխադարձաբար : Հոն ու հոս , մամուլը պէտք է լայն բաժին մը յատկացնէ՝ միւս հատուածին ազգային , ընկերական ու մտաւորական կեանքին , վերաբարձրէ քոյր մամուլին մէջ երեւցած ամենէն գեղեցիկ գրական նորութիւնները , կանոնաւորապէս տեղեկութիւն տայ՝ միւս կողմի ուշագրաւ հրատարակութեանց մասին . ամէն անգամ որ սահմանէն աստիկ կամ անդին հայ տաղանդի յայտնութիւն մը տեղի կ'ունենայ , ըլլայ գրական , գեղարուեստական , գիտական կամ հանրային գործունէութեան մէջ , պէտք է արեւելեան ինչպէս արեւմտեան մամուլը հաւասար եռանդով ու մանրամասնութեամբ արձանագրէ իբր « ներքին լուր մը » իբրեւ հայ կեանքի կարեւոր եղելութիւն մը , ո եւ է Հայու համար աւելի կարեւոր քան զրացի Յոյնին կամ Վրացիին վերաբերեալ իրողութիւններ : Ինչո՞ւ նոյն իսկ մերթ խումբեր մտաւորականներու , չանցնին սահմանէն անդին , այցելել իրենց հեռաւոր եղբայրներուն , անձամբ ծանօթանալ իրարու , ծանօթանալ եւ այն վայրերուն , միջավայրերուն ուր այդ եղբայրները կ'ապրին , տեղոյն վրայ կատարել ուսումնասիրութիւններ հայ անցեալ ու ներկայ կեանքի :

Ահա ինչ որ պէտք է ընեն մտաւորական գործիչները , բայց սպասել որ ամէն բան անոնք ընեն՝ անարդար է եւ անիմաստ : Պէտք է որ հասարակութիւնն ալ կազմակերպուի ու գործէ : Գործիչ մը որ ինքզինքը կը պայ կենդանի , թրթռուն , գործօն հասարակութեան մը մէջ , հարիւրապատիկ զօրացած կը գտնէ իր ուժերը , եւ հարիւրապատիկ աւելի արդիւնք կարող է տալ : Մեր մէջ հասարակութիւնը դեռ շատ թոյլ է , անկազմ , անգիտակից : Աբովեանի եւ Ալիշանի , Նալբանդեանի եւ Պարոնեանի , Շիրվանզադէի եւ Զօհրապի գործերը առնուազն 20 հազար օրինակ պէտք էր սպառուած ունենային . տաղանդաւոր թատերագի մը մեր մէջ իր գործերուն ներկայացման արդիւնքով լայնօրէն պէտք էր կարենար ապրիլ . ի՞նչքան հեռու է իրականութիւնը՝ այս երազէն՝ որ սակայն շատ համեստ է դեռ . մեր ամենէն շատ տարածուած լրագիրները 4-5000 էն աւելի բաժանորդ չունին , ողորմելի՛ թիւ . լրագրի աշխատակցող գրագէտները մեծ մասամբ չեն վճարուիր կամ շատ խեղճ գումարներով կը վճարուին . գիրք հրատարակող հեղինակները իրենց գրքերէն չափազանց քիչ կ'օգտուին , եւ այն ալ այն հազուադէպ պարագային երբ բարեխիղճ գրավաճառներու հետ է իրենց գործը : Մեր ունեւոր դասակարգը՝ քիչ բացառութեամբ՝ չի հետեւիր գրական շարժումին , գրասէր չէ , մերթ « կ'օգնէ » բարեգործաբար , ազգասիրաբար : Միջակ գիրք ունեցողները կամ աղքատներն ալ նոյնքան թոյլ են , անհոգ , ճրի կարգալու հետամուտ , եւ ամէն բան հարուստներէն սպասելու սխալը գործող . Աբովեանի հատորը ունենալու համար միլիոնատէր ըլլալու պէտք չկայ , է՛ն աղքատ Հայը կրնայ զայն գնել՝ եթէ ուզէ իր « բերնէն կտրել » մտաւոր հացը ճարելու համար : Պէտք է այդ ոգին արծարծել , զարգացնել հայ հասարակութեան մէջ , այդ թանկագին ոգին , որ կը մղէ յառաջացեալ ժողովուրդներու ամէն մէկ անհատը՝ գրական սընունդը՝ նիւթականին չափ , անկից աւելի անհրաժեշտ նկատելու : Պէտք է վարժեցնել հայ հարուստը՝ ոչ թէ « օգնել »՝ քմահաճ ու անկանոն , անտեւական եղանակով մը , այլ ինքն իսկ հետաքրքրուելով գրական շարժումին , օգտուելով անկէ՝ իր յարատեւ ու բնական այդ

**

գրասիրութեամբն իսկ նպաստել անոր զարգացման . ու պէտք է վարժեցնել աղքատ Հայը՝ աչքը միշտ հարուստին դարձնելու վնասակար ունակութենէն ետ կենալու . հարուստներէն անշուշտ կը սպասուի իտէալ մը ունենալ , ազգօգուտ խոշոր հիմնարկութիւններով , որոշ նպատակի յատկացուած մեծ նուիրատուութիւններով՝ աջակցիլ ազգային յառաջդիմութեան եւ անմահացնել իրենց անունը . ատով է արդէն որ անոնք « հասարակութիւն » ըլլալէ կը դադրին , եւ իրենց կարգին « գործիչներ » կը դառնան : Բայց ամէն բան անոնցմէ սպասելն է որ սխալ է ու վտանգաւոր : Ամենամեծ ազգերուն մէջ , յաճախ շատ մեծ գործեր կ'իրականանան՝ ամենէն աղքատ քսակներուն փոքրիկ բայց բազմութիւ , ինքնաբերաբար , փութկոտորէն , հեղեղօրէն թափող լուծանքովը : Մեր ցեղին հոգւոյն խորը կայ բնածին սէր մտաւորական բաներու . դարերէ ի վեր տիրող այլանդակ , ցաւագին , յարափոփոխ պայմաններն են որ թմրեցուցած , թուլցուցած են այդ սէրը . մեր մտաւոր գործիչներուն , մեր հարուստ զասակարգի մէջ գտնուող « իտէալիսթ »ներուն , եւրոպական ուսում ստացած եւ մեծ կեդրոններու մէջ գրականութիւնը ջերմօրէն սիրել սորված երիտասարդներուն պարտքն է՝ թօթուել ժողովրդին վրայէն այդ թմրութիւնը , արթնցնել անոր մէջ բուն յարգանք , հետաքրքրութիւն , սէր մտաւոր կեանքի ամէն երեւոյթներուն համար : Հրապարակագիրները , ուսուցիչները և քարոզիչ կրօնաւորները մասնաւորապէս կարող են և պարտական են այդ ուղղութեամբ՝ կորովի և յարատե՛ ձեով՝ գործելու : Զարգացնենք այն բոլոր կազմակերպութիւնները որ այդ նպատակին իրականացման նպաստելու բնոյթ ունին . և հիմնենք նոյն նպատակին ուժեղօրէն ծառայել կրցող այն կազմակերպութիւններն ալ զոր չունինք : Կովկասի Հայք , որ՝ ուսու միջավայրէն ազդուելով , կազմակերպուած գործունէութեան մէջ՝ միշտ աւելի գերազանց են եղած քան օսմաննան պետութեան անկարգ միջավայրին մէջ ապրող արեւմտեան Հայք , ունին գրեթէ բոլոր էական կազմակերպութիւնները որ հարկաւոր են , Բարեգործական ընկերութիւն մը՝ որ մտաւոր օգնութիւն բաշխելու այնքան հետամուտ է որքան նիւթական նպաստ , Կուլտուրական ընկերու-

թիւն մը՝ որ ժողովրդին մտաւոր յառաջդիմութեան օժանդակելու նպատակ ունի . Դրամատիրական ընկերութիւն մը , եւ Հրատարակչական ընկերութիւն մը (որ Կալիցիինի օրով խափանուած՝ այժմ կը վերսկսի իր գործունէութիւնը) : Ռուսահայոց կը մնայ ուրեմն զարգացնել , զօրացնել այդ հիմնարկութիւնները , անոնց գործունէութեան եղանակին մէջ դնել հետզհետէ աւելի մեթոտ , գործնական ոգի , ճաշակ ու եռանդ : Թրքահայք ունին Միացեալ ընկերութիւնը , Ազգանուէր Հայունեաց ընկերութիւնը , եւ Եգիպտոսի Բարեգործականը . իրենց կը մնայ հիմնել , անհրաժեշտօրէն , հրատարակչական ընկերութիւն մը , թատրոնական ընկերութիւն մը , ու նաև կեանք տալ այն անկենդան ու անունով միայն գոյութիւն ունեցող էակին՝ որ կը հոչուի Ղալաթիոյ Ազգային Մատենադարան : Կամք ունեցող ու գործել գիտցող քանի մը անձնաւորութեանց նախաձեռնութիւնը կը բաւէ քիչ ատենուան մէջ այս ծրագիրները իրականութեան փոխելու համար (1) : Ռուսահայ դերասանական խումբերը որ երկու տարիէ ի վեր կուգան պտոյտ ընել թրքահայոց մէջ , շատ ազնիւ եւ օգտակար դեր կատարեցին , մեծ խանդավառութեամբ ալ ընդունուեցան թրքահայ հասարակութենէն , և այսուհետեւ ալ անշուշտ՝ երբ գան՝ նոյնքան համակրութեամբ պիտի ընդունուին . բայց Պոլիսը՝ որ ատենով այնքան փայլուն դեր ունեցած է Հայոց թատերական շարժումին մէջ , ինչո՛ւ չունենայ թատրոնական

1) Այս յօդուածը գրուած է փետրուարին : Հիւանդութեանս պատճառաւ « Անանիս » ի հրատարակուիլը ընդհատուելով , մնաց ցարդ անսխալ : Անկէց ի վեր , կազմուեցան Պոլիս՝ Հրատարակչական ընկերութիւն մը , քատրական ընկերութիւն մը , եւ Ազգային Մատենադարանը վերակազմելու նիգրէ կը քափուին այս պահուս : Ես սակայն նոյնութեամբ կը հրատարակեմ յօդուածը՝ պահելով քուականը : Ինչքան ալ անոր այս հասուածը ուս մնացած բուի , կրնայ քերես բարոյական զգացումքիւն մը բերել նոր հիմնուած այդ ընկերութեանց գործունէութեան : Մեր մէջ աս անգամ յօդուածներու մէջ առաջարկներ կը ներկայացնենք , եւ սարխներով ի զուր կը սպասենք անոնց իրագործման . այս անգամ՝ իմ այս առաջարկներս դեռ հրատարակ չելած՝ հասարակութիւնը անոնց պէտքը ինքնին զգացեր եւ զանոնք իրականացուցեր է . ասիկա ճշման է թէ հասարակութիւնը քրքամայոց մէջ թկսած է արթննալ եւ կազմակերպուիլ , ինչոր հանոյթ միայն կարող է պատճառել ինձի :

ընկերութիւն մը, չկազմէ թրքահայ ուժերով դերասանական խումբ մը, չուզարկէ Եւրոպա տաղանդ ցոյց տուող նոր ուժեր՝ որ լիակատարորէն պատրաստուին և վաղուան Ադամեանները, Ռչտունիները, Հրաչեանները և Սիրանոյշները դառնան: Ինչո՞ւ օրինակ ասնելով ուսուսանայերէն որ այս րոպէիս իրենց Հրատարակչանը վերակազմելու վրայ են, չհիմնել թրքահայոց Հրատարակչական ընկերութիւն մը. այդպիսի ընկերութիւն մը բացարձակ անյետաձգելի պահանջի մը պիտի համապատասխանէ (1). Թէ ան — ինչպէս և Կովկասի Հրատարակչականը — ինչե՞ր կարող են ընել, ծրագրին մէջ ամենէն աւելի ի՞նչ բաներու ուժ տալու են, այդ մասին ուրիշ անգամ աւելի մանրամասն մտադիր եմ գրել: Առ այժմ սա միայն պիտի շեշտեմ՝ մասնաւորապէս թրքահայոց Հրատարակչականին մասին խօսելով, որ ան պէտք է ապ մեզի այն շարք մը հատորները ուր պիտի ամփոփուին թրքահայ գրականութեան այնքան մեծաթիւ գրագէտներու գործերը որ հանգէսներու և լրագիրներու մէջ ցրուած կը մնան. թրքահայ գրականութեան վրայ թէ՛ ուսուսանայ թէ՛ տաճկահայ քննադատներ մերթ ամբողջական կարծիքներ կը յայտնեն՝ առանց նկատելու թէ այդ գրականութեան երեք քառորդը անծանօթ է ուսուսանայոց և թրքահայ արդի սերունդին. Երեմիա Քեօմիւրճեանի, Խաչատուր Միսաքեանի, Տէրոյնցի, Նիկողայոս Զօրայեանի, Գրիգոր Օտեանի, Մամուրեանի, Պարոնեանի, Թովմաս Թերզեանի, Եղիա Տէմիրճիպաշեանի, Արփիար Արփիարեանի ցիրուցան գործերը պէտք է հատորներու վերածուին. թրքահայ Հրատարակչական ընկերութիւն մը անհրաժեշտ է՝ թէ՛ տաղանդաւոր նորերու դիւրութիւն տալու համար որ իրենց գործերն ի լայս ընծայեն, և թէ՛

հին վարպետներու տարողնած, մոռցուած էջերը ամփոփելով՝ կորուստէ փրկելու, մեր նոր սերունդներուն և մեր հեռաւոր եղբայրներուն ծանօթացնելու համար:

Այս ծրագիրներուն իրականացմանը պէտք է մտածեն, աշխատին և ուժ տան մեր Պատրիարքարանը, մեր Ազգային Ժողովը և մեր բոլոր կուսակցութիւններն ու մասնաւորապէս Եգիպտոսի Բարեգործականը: Ամենամեծ սխալ մըն է կարծել թէ մեր Պատրիարքարանը ու Ազգային Ժողովը միայն քաղաքական, վարչական, կրօնական կամ անտեսական գործերու համար ստեղծուած են. ատոնք էական են, բայց ատոնց հետ՝ այդ հիմնարկութիւնները պէտք է ամենամեծ ու յարատեւ աչալրջութեամբ, հոգածութեամբ ու կորովով աջակցին Հայոց մտաւոր յառաջդիմութեանը, նախաձեռնութիւններ առնելով, ծրագիրներ յղանալով, գոյութիւն ունեցող ձեռնարկներու օգնելով: Գալով Եգիպտոսի Բարեգործականին, անոր գոյութեան իմաստն իսկ այդ է ամէն բանէ առաջ՝ քանի որ իր հիմնադիրներուն — և մեր ամէնուս ալ — փափաքն այն է որ Հայոց « Ալիանս Իզրայէլիթն » ըլլայ անիկա. « Ալիանս Իզրայէլիթ » ի վըլխաւոր գործունէութիւնը եղած է դպրոցներ հիմնել, գրքեր հրատարակել, հրէայ ցեղին մտաւոր պարգացմանը աջակցիլ, Հրէութեան վարկն ու պատիւը պաշտպանել՝ երբ պէտք է, հալածանքներու ատեն՝ ոչ միայն կարօտեալներուն նիւթական օգնութիւն հասցնել, այլ և Հրէութեան դատին իսկ բարոյապէս ծառայող բոլոր միջոցները ձեռք առնել:

Թող ցոյց չտան Կիլիկիոյ որբերը, կամ Հայաստանի չքաւորները. ատոնք արգելք մը չեն, ու պէտք չէ ըլլան, մեր մտաւոր յառաջդիմութեան: Ատոնք արդէն պէտք չկայ ցոյց տալու: Չկայ Հայ մը որ դանոնք վայրկեան մը աչքէ վրիպեցնէ: Անոնց ամէն մէկ Հայ՝ իր չարիով՝ կ'օգնէ: Իր պատմութեան ընթացքին մէջ հայ ցեղը՝ գրեթէ միշտ արիւննիւրու մէջէն, որբերով ու խեղճերով ուսերը ծանրաբեռն՝ քալած է, բայց միշտ իր լաւագոյն ու արիագոյն գաւըրները, որբերուն ու խեղճերուն վրայ մը-

1) Մէկի տեղ երկու Հրատարակչականի ստեղծուիլը ցաւալի եւ անիմաստ կը գտնուի: Պոլսոյ մտաւորականները ունեցան զադափարը եւ նախաձեռնութիւնը, Եգիպտոսի գրասէր հարուստներէն ոմանի նոյն նպատակին համար գումար մը նուիրեցին. անհրաժեշտ է որ միանան եւ ձուլուին երկու խումբերը. գրականութիւնը ամէն դասակարգէ վեր է. քրիստոսի պէտք է ունենան միակ Հրատարակչական ընկերութիւն մը, որ ըլլայ՝ ամէն կուսակցամոլութեան գեշ՝ միմիայն հայ գրականութեան զարգացման նուիրուած:

տածելով հանդերձ, անհոգ չեն եղած դէպ ի
 ցեղին մտաւոր կեանքը: Շրջանը որուն մէջ
 ծաղկեցաւ Շնորհալին՝ ամենէն փոթորկալիցնե-
 րէն մէկն էր հայ ցեղի պատմութեան. « Բաղաբ
 թագաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի
 մերում, կը գրէ ինքն իսկ, որպէս զի անգանօր
 նստելով յաթոռ հայրապետութեան և վարդա-
 պետութեան՝ ուսուցանէպք ժողովրդեան մերոյ
 զաստուածային պատուիրանս, ըստ առաջին հայ-
 րապետացն և վարդապետացն. այլ եմք իբր
 զայծեամն յորսորդաց եւ ի շանց փախուցեալք՝
 ի քաղաքս (1) յայս բնակելով, յորում ոչ
 և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք՝
 ի գեղից կամ յազարակաց, յորոց ունիմք և ոչ
 մի, նա և ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք
 և աշխատութեամբ զպէտս մեր ընուաք, և ոչ
 օգնութիւն ուստեք, որպէս արժան էր ի թա-
 գաւորաց և ի շխանաց ի Քրիստոս հաւատացե-
 լոց, այլ միայն ի Տեառնէ Աստուծոյ »: Բայց
 այդ « այծեամի » պէս ապրելու դատապար-
 տուած մարդը ամբողջ կեանքը նուիրեց հայ
 մտաւոր բուրաստանը հարստացնելու: Ի՞նչ
 պիտի արժէր այսօր հայ ցեղի մը գոյութիւն
 ունենալը կամ չունենալը եթէ Շնորհալիներ
 արտադրած չըլլար այդ ցեղը:

Արտաքին պատճառներուն վրայ որ յաճախ
 խափանած, դժուարացուցած են մեր մտաւոր
 թուիչը, — և որ ուրիշ ձեւով կրնան կրկնուիլ
 նորէն — մեր ներքին անհոգութեան, ան-
 տարբերութեան արգելքը չաւելցնենք: Մէկ
 կողմէ դարմանենք մեր վէրքերը, հոգանք մեր
 որբերը, հաց տանք մեր խեղճերուն, աչա-
 լուրջ ըլլանք վաղուան վտանգներուն, բայց
 միւս կողմէ՝ անվհատօրէն, յարատւօրէն,
 ամէն ըսպէ աշխատինք վառ պահելու մտաւոր
 Ջահը, առանց որուն մեր ճամբան խաւարէն
 աւելի խաւար կը դառնայ: Ունենանք ար-
 ուեստ մը, գրականութիւն մը՝ լեզու մը հետ-
 զհետէ աւելի նուրբ, աւելի ճոխ, աւելի ինք-
 նատիպ. որպէս զի օտարները (ինչպէս նոյն իսկ
 փրօվանսներէն կը ւորվին եւրոպացի մեծ գե-
 ղեցկապէտները՝ միմիայն Միսթրալը բնագրին
 մէջ կարգալու համար) մղուին սորվելու մեր
 լեզուն, հետեւելու մեր գրականութեան և

1) Հռոմկլայ:

արուեստին, և որպէս զի նոյն իսկ մեր ապագայ
 սերունդները՝ հայկական քաղաքակրթութեան
 մը անդիմադրելի փայլէն իսկ շլացած, գրաւ-
 ուած, տիրապետուած, ամէն օտարացման փոր-
 ձութեանց հակառակ՝ Հայ մնան:

Ա. 20 ՊԱՆԵԱՆ

Փետրուար, 1910

Օ Ճ Ա Ն

Թաղին Եօրը, ուռիներուն շուրջն ակ,
 Սաղարթախիս քառուսի մ'մէջ լրտանիս,
 Նախնիներէ մեզ մընացած հրիսակ,
 Երդիք մը կար տ'յնման խաղաղ ու հանգիս:

Սյնեղ մեծցեր էինք մեքն հոյր ու եղբայր,
 Մայրս ո'րքան մեզ կը ծեծէր հոն ո'րքան,
 Ամէն անգամ որ մեքն կասդած՝ խօսարար,
 Կը գրգռէինք՝ մէկ կողմ մեզած ներկան:

Այդ լացերը սակայն չէին սար մեզ ցաւ,
 Հոն ամէն բան արցունէնք վերք ինից ունէր,
 Բայց ի՞նչ արագ այդ կեանքն այսպէս հուսկ անցաւ:

Այժմ նրժոյն օտար երկինք՝ խո'րք տուներ .
 Կարօտախար կը դաւունէ գիս յանախ,
 Ծաղիկ կեանքիս քաղա'ր, աղու'ր դուն օնախ...:

Ա Ղ Բ Ի Ի Ն Ա Ղ Զ Ի Կ Ը

Ծորակն է չիճջ կը ցայտ արծաթափայլ ու ծրճուն,
 Ջուրը կաթէ փրփուրներ շինած կ'երթայ դարն ի վար.
 Ճապուկ իրանն հեղուկին կը նապկոսի սեղոյալար,
 Սէզերուն մէջ քաթքաթուր, մարզին վրայ սարածուն:

Ու սարերէն կապսանուց այն ինչ ծաղիկն առօրին
 Իր շափաղկներն կը բանայ ոսկեծրդի, ծիրանի,
 Երէկուան պէս ա'ն, դարձեալ, վարսերը քակ՝ հոլանի,
 Ջուր սանելու է եկեր աղուր աղջիկն աղբիւրին:

Հողէ սափորն ուսամբարձ կ'երգէ յուշիկ ինճիրին .
 Խա'չ որ՝ ջուրը պատրուակ, ինճ եղած է ժամայիր,
 Նրօպնամի սէրն հիմա կը վարէ զայն անխափիր:

Քուճայք փառչա'մը փափուկ կախ գրեթէ փուններէն՝
 Լուսնիկայէ մանչ մըն է գոր կը սրէ խանդաբորբ,
 Անոր համար կը հեծէ սիրտն աղջիկն սիրատոփ:

Հ Ա Ր Ս Ն Ի Ք

Ծափի դափի զիլ աւաչներ կը ծագին .
Կը կայրեն խօլ պարմաները ձեռն ձեռնի .
Հոս դարձաբարձիկ , մինչդեռ անդին կը կր՛ի ,
Շուրջպարս անոնց համերգներով ցրեծագին :

Կ'ալավրկին , ու կ'ոսոսեսն , կը ցասկեն ,
Գիներբուէէ բրունըողներ ամէնն ալ ,
Գոզցես չունին խոնջլեն , գիւեր , կընամալ .
Հարսնի՛ք է , պէ՛տէ է լուսօրնեն ապալէն :

Ի՛նչ փոյր իրենց , սենեսկի մ' մէջ միսմանակ ,
Թարմ աղջիկ մը նախուռն հիման ձեռներուն ,
Իր կեանն հարսի կ'անդանէ լուռ երազուն :

Ժրպսուն արտով կը բաւէ որ զոնունակ ,
Կընամայրն ալ խըմբսւմ սաներն էգ , արու ,
Տառօս կուսայ ասանկ աղւոր օրերու...:

Ծափի դափի զիլ աւաչներ կը ծագին..

Մ Ա Ս Ո Ւ Ն Ք Ը

Փայտէ մոմոս զբրակալի մը սակ ցած ,
Նորէն կիներն հաւախուեր են ջերմուանդ ,
Թախմոս կիներ՛ր ցաւագար ու հիւանդ ,
Դարդերով լի կիներն ամէն զառամած :

Իրիկուն մ'է մեզ աւեսող կիրակին .
Հողէ կանքեղ մը կը հեւայ ժամուն մէջ .

Փրկչին կանքեղն , առկախ վերէն , միտ անեւջ ,
Որուն համար կուսան կիներն իւղաղին :

Սնոնկ անփոյր արսափնով աղբափ ,
Հասած մաւած ըզգեսներով հիմունին ,
Մատունն հանել սալ եկեր էն վրանին .
Մատունի ջուրն իրենց աչէն կը կաթի :

Կ Ա Ն Ա Չ Կ Ի Ի Ր Ա Կ Է

Կանա՛չ , կանա՛չ , ծառ ծիծաղ ծիլ կափ կանաչ .
Կանաչ դաւեսեր , կանաչ այգի , հովիտ ձոր ,
Կանաչ կարմիր , կանաչ գօտի , լեռ ծորձոր ,
Համակ կանաչ ինչ որ ժր՛տի ձախ ու աջ :

Երնձող պարեր կանաչ զբւարք կայտրուն ,
Կանաչ ձայներ պարմաններու փողջալուր ,
Կանաչ զարթօն , կանաչ Չասիկ , կանաչ օր ,
Կանաչ յուճեր կ'օրէ իր մէջ խառ առուն ...:

« Զարգարգար » ի հարսն ալ կանաչ՝ ջանիլ կին ,
Կանաչներու մէջ կը ծափէ կը ցրեծայ ,
Ի՛նչ աղւոր է , սօնն այս չրկնաղ նորրեծայ :

Ու « նոյնա »ն դեռ , կանաչ ուխտն այն մեր վանին ,
Ու մանչ աղջիկ կանաչ սրբով պիտ' երգեն
Կանաչներով նախուռն կանաչ կիւրակէն...

Կանա՛չ , կանա՛չ , ծառ ծիծաղ ծիլ կափ կանաչ...

Զիբակօ

ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ

Ա Ն Տ Ո Ն Ի Ո Ս Ե Ի Կ Լ Է Ո Պ Ա Տ Ր Ա

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Դ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա

Աղեհաանդրիոյ առջեւ — Կեսարի բանակեղը կը մտնեն
Կեսար , Ագրիպպա , եւ ՄԼԿիմաս իր բանակով .
Կեսար նամակ մը կարդալով :

ԿԵՍ. Զիս տրղա՛յ կը կոչէ , ու կը չեխէ որպէս թէ
Ոյժ ունենար զարնելու զիս վանելու Եգիպտոսէն .
Իմ բանագնացքս ըրբածեծ ըրեր է . ինձի հրաւէր
կը կարդայ առանձնակի հետը կառիլ , Անտոնիոս՝
Կեսարի՛ն : Թող սառ ծեր սրիկան գիտնայ՝ ես ուրիշ չա՛մ

Կերպեր ունիմ մեռնելու, մինչև այն օր՝ ես կը խնդամ
Իր կոչին վրայ:

ՄԵՎ. Պէտք է կեսար խորհի թէ, երբ այդպիսի
Մեծ մէկ անձ մը կը սկսի մոլեգնոտիլ, հալածուելէն
Կեղն է մըտած ա՛լ իյնալու աստիճան: Շունչ առնել
Մի՛ տաք իրեն, այլ հիմա օգտուեցէք իր մտախռով
Վիճակէն: Երբէք ցասկոտն ինքըզինքին չընեն լաւ
Զգուշութիւն:

ԿԵՍ. Մեր ամենէն կարող պետե՛րը թող գիտնան.
Մեր միտքն է բազմաթիւ մեր մարանչմանց ա՛լ այս վերջի՛նը
Կռուիլ: Մեր շարքերուն մէջ այնպիսիք կը գտնուին
Որոնք ասկէ քիչ յառաջ Անտոնիոսի քով սպասի
Մէջ էին: Անոնք բա՛ւ են զինքը ձեռք անցընելու:
Տե՛ս կատարուի. ու բանակին խնջոյք տուր. առատ պաշար
Ունինք առ այդ, ու արժանի՛ են որ իրենց վրայ մտախռով
Հէք Անտոնիոս:

(Կը Բէկէն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Ա.դիւստանդիս — Կլէուպատրայի պալատը,
կը մտնեն Անտոնիոս, Կլէուպատրա, Էնոքարքոս, Ծարմիան,
Իռաս, Ալէքսանդր Երեմիայի որդիներու հետ:

ԱՆՏ. Չո՛ւղեր ուրեմն ինծի՛ հետ կռուիլ, Դո՛մետ.
ԷՆՈ. Ո՛չ:

ԱՆՏ. Ինչո՞ւ համար:
ԷՆՈ. Կը խորհի թէ քրտան անգամ լաւագոյն բազդ ունենալով
Քրտան մարդ է մէկի դէմ:

ԱՆՏ. Վաղը, զի՛նւոր, ցամաքի ու
Ծովի վըրայ պիտի կռուիմ: Կամ կ'ապրիմ, կամ մահամերձ
Իմ պատիւս կը լողցընեմ արիւնի մէջ որ գայն կրկին
Ապրեցընէ: Աղէկ կռուի՞ս պիտի դուն:

ԷՆՈ. Պիտի զարնեմ
Ու գոչեմ «կամ ոչինչ, կամ ապրողին ամէն ինչ»:

ԱՆՏ. Լաւ կ'ըսես, եկուր օ՛ն: Կանչէ անասուն իմ ծառաներս.
Աս գիշեր առատապէղ թող ըլլանք մեր խնջոյքին
(Կը մտնեն Երեմ Զառաներ)

Չեռքդ ինձ տո՛ւր: Դուն կատարեալ հաւատարիմ եղած ես,
Նոյնպէս դո՛ւն: Դուն, ու դուն, ու դուն, ամէնքդ —
Ինծի լա՛ւ սպաս տարած էք, ու արքաներ ձեզ ունեցած
Դասակից:

ԿԼԷՈ. (Մեկտախ Է.Ո.ին) Աս ընելուն միտքն ի՞նչ է:

ԷՆՈ. (Մեկտախ Կլէո.ին) Ցաւն այս կերպ
Նորանըջան քրմայքներ մարդուս խեղքէն դուրս թռել կուտայ:

ԱՆՏ. Դո՛ւն ալ նոյնպէս պարկեշտ մարդ ես: Կ'ուզէի որ կարենայի
Այդքան թուով մարդեր ըլլալ ու դուք ամէնքդ միացուէիք

Չուրուէիք մէկ Անտոնիոսի որ ձեր ինծի ծառայածին
Պէս լաւ ե՛ս կարենայի ձեզ ծառայել :

ԱՄԷՆՔԸ :

Աստուածք չընեն :

ԱՆՏ. Ինչ և իցէ , բարի մարդեր , ծառայեցէք ինձ այս գիշեր ,
Բաժակներս մի՛ կարէք , ու զիս այն կերպ մեծարեցէք
Ինչպէս առաջ այն օրերուն երբ կայսրութիւնս ձեզ հետ մէկ էր ,
Ու հրամանքս կ'ընդունէր հլու հպատակ :

ԿԼԷՈՒ :

(Մէկուսի Էնթարթոնն) Միտքը ի՞նչ է :

ԷՆՈՒ :

(Մէկուսի Կլեոնն) Հետեւորդներն արտասուել տալ :

ԱՆՏ.

Խընամք տարէք ինձ այս գիշեր :

Գուցէ թէ ձեր սպասարկին յետին կէսն է . կրնայ ըլլալ
Ձիս չտեսնէք այլ ևս , կամ թէ՛ ըստուեն մը կարեկէր .
Թերեւս վաղն ուրիշ տիրոջ ծառայէք : Նայուածքս ձեզ
Կ'ուզղկմ հիմա ինչպէս մէկն որ իր հրաժե՛շտը կ'առնէ :
Իմ պարկեշտ բարեկամներս , ես ձեզ չեմ հաներ . քովէս ,
Այլ իբրև ձեր լաւ ըսպասին հետ պըսակուած , տէր եմ ձեզի
Մինչև ցըմահ ու կը մընամ : Խընամ տարէք ինձ այս գիշեր
Երկու ժամ , աւելին չե՛մ ուզեր ձենէ . ու փոխարէնն
Աստուածները տան ձեզի :

ԷՆՈՒ :

Ի՞նչ է , տէր իմ , միտքերնիդ որ

Ձիրենք այսպէս կը տրամեցնէք : Տեսէ՛ք , մարդի՛կը կ'արտասուեն ,
Ու աւանակ մըն ալ ե՛ս , սոխը առած կըզգամ աչքերս ,
Գէթ ամթուն ըլլայ , մեզ մի՛ փոխակերպէք կիներու :

ԱՆՏ.

Հո՛ , հո՛ , հո՛ : Կախարդ ջատո՛ւկը զիս կոպէ իրաւ որ ,
Եթէ իմ միտքս ատանկի էր : Բարի՛ք բուննին ուր կը կաթին
Այդ արցունքներ : Իմ բարեսի՛րտ բարեկամներս , գուք չափազանց
Թախծոտ մտքի զին կ'առնէք : Ձեր սիրտումին համար ես ձեզ
Խօսեցայ . փափոք ըրի իմ այս գիշերըս ջահերով
Բորբոքել : Գիտցէք ինձմէ , սիրելիներս , վազուան վըրայ
Բարի յոյսեր ես ունիմ , ու պիտի ձեզ առաջնորդեմ
Հոն ուր յաւէտ կ'ակնկալեմ յաղթապանծ կեանք քան մահ պատուով
Երթանք ճաշի , օ՛ն եկէք , ու մտածումն ընկուզե՛ր :

(Կը Գլեոնն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ .

Ա. դիմաւորիս — Պալատին առջեւ

Եր մահեն երկու Զինուորներ իրենց պահնորդութեան :

- Ա. ԶԻՆԻՈՒ. Ընկե՛ր , գիշեր բարի . օրը վաղն է :
- Բ. ԶԻՆ. Վաղը մէկ կերպ պիտի վճուէ . մնաք բարով : Չը լսեցի՞ք
Փողոցներուն մէջ բընաւ տարօրինակ որ և է բան :
- Ա. ԶԻՆ. Ոչինչ : Ի՞նչ լուր :
- Բ. ԶԻՆ. Թերեւս ալ լոկ զրոյց է : Գեշեր բարի գայ վրանիդ :
- Ա. ԶԻՆ. Ի՛հ , պարոն , գիշեր բարի :

(Կը Զինուորներէն Էրիս — Զինուորներ)

- Բ. ԶԻՆ. Զինւորներ, զգուշութեամբ պահ կեցէք:
- Գ. ԶԻՆ. Նոյնպէս դուք: Գիշեր բարի, գիշեր բարի:
(Թարերաբէտին զն զ անկեանք տեղերինն կը բանեն)
- Դ. ԶԻՆ. Հոս կը կենանք. և եթէ վաղուան օրն յաջող երթայ
Մեր տորմիզն, ես կատարեալ յոյս ունիմ որ ցամաքի
Մեր կուռողնն'րն ուժով պիտի դէմ ղընեն:
- Գ. ԶԻՆ. Քաջարի
Բանակ մ'է ան. ու ես անդոս:
(Նեյերոս չափ մը որդե՛ս թէ թարերաբէտին ներտենն)
- Դ. ԶԻՆ. Սո՛ւս. այս ի՞նչ աղմուկ է:
- Ա. ԶԻՆ. Մտիկ ըրէք, մտիկ ըրէք:
- Բ. ԶԻՆ. Ականջ դըրէք:
- Ա. ԶԻՆ. Օգին մէջ նուագ:
- Գ. ԶԻՆ. Գեանին տակն է:
- Դ. ԶԻՆ. Բարի բանի նըշանակ է, անանկ չէ:
- Գ. ԶԻՆ. Ո՛չ:
- Ա. ԶԻՆ. Սուս կ'ըսեմ, ի՞նչ պիտի ըլլայ ասի:
- Բ. ԶԻՆ. Հերակլէս դիքն է ասի, Անտոնիոսի սիրելին
Զինքը ճիմա ան կը լըքէ:
- Ա. ԶԻՆ. Քաղեցէ՛ք, տեսնենք ուրիշ
Պահակներ ալ մեր լըսածը կը լըսեն:
- Բ. ԶԻՆ. Ի՞նչ է աս, բարեկամներ:
- ԱՄԷՆՔԸ. (Մէկանց խօսելով) Ի՞նչ է աս, ի՞նչ է աս, կը լըսէ՛ք աս:
- Ա. ԶԻՆ. Այո՛, տարօրինակ չէ՞ ասի:
- Գ. ԶԻՆ. Կը լըսէ՛ք, բարեկամներ, կը լըսէ՛ք:
- Ա. ԶԻՆ. Մինչև սահմանը մեր պահին օ՛ն հետեւինք այս աղմուկին
Տեսնենք ինչպէս պիտի դադրի անհետանայ:
- ԱՄԷՆՔԸ. Համամիտ ենք: Տարօրինակ բան, իրա՛ւ:

(Կը զգնին)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ.

Աղէքանդրիս — պարասին մէջ սենեակ մը
Կը մտնեն Անտոնիոս եւ Կլեոպատրա, Շարմիստ եւ որիցներ հետեւորդ

- ԱՆՏ. Երո՛ս, զրահըս երո՛ս:
- ԿԼԵՈ. Քընացի՛ր սակայն քիչ մը:
- ԱՆՏ. Ո՛չ, տատրակըս: Երո՛ս, օ՛ն, զրահըս երոս:
(Կը մտնէ Սերոս շքանք բերելով)
- Օն, ազնիւ մարդ
Եկուր պողպատըս վրաս հագցուր: Եթէ բաղնն այսօր մերի՛նը
Չըլլայ, պատճառն այն է որ մենք զինք կը քամահարենք:
Օ՛ն, օ՛ն:
- ԿԼԵՈ. Չըլլար, ես ալ պիտի օգնեմ: Ինչո՞ւ է աս:
- ԱՆՏ. Ա՛հ ձըգէ՛, ձըգէ ընէ: Գունն իմ սրտիս զըրահողն ես:
Սըխա՛լ, սըխա՛լ. ասի, ասի:

ԿԼԻՌ

Իրաւ, չըլլար, ե՛ս պիտի գամ

Օգնելու: Աս կերպ պէտք է որ ըլլայ:

ԱՆՏ

Լա՛ւ, լա՛ւ,

Հիմա յաջող պիտի երթանք: Կը տեսնե՞ս, ազնիւ մարդըս:

Գընա հազի՛ր պահպանակներդ:

ԵՐՈՍ

Փութով, տէր իմ

ԿԻՌ

Աղէկ չէ՞

Աս ճարմանգները գրուած:

ԱՆՏ

Աքանջելի՛, սքանջելի՛:

Ան որ ասի քակել փորձէ, մինչև որ մենք կամք ունենանք
Վրանուս հանել հանգչելու, փոթորիկի ՚մ պիտի գոռո՛ւմը
Լըսէ: Ծուռ մուռ բաներ կ'ընես, Երո՛ս, և թագուհիս
Այս գործին մէջ քենէ ճարպիկ զինակիր է: Օն լմնցուր:
Ո՛հ սիրեցեալս, ո՛ւր էր թէ կարենայիր մարտնչումներս
Այսօր տեսնել, ու գիտնայիր զբազանքն արքայական,
Արհեստաւոր մը պիտի դուն տեսնէիր անոր մէջ:

(Կը մտնէ սպասուէն շինար մը)

Բարի լոյս քեզ, բարի եկար: Երեւոյթը՛ր՝ ռազմամուտ
Յարձակումի ընտել մարդու նրմանակ է: Մեր սիրական
Գործին կանոնս կ'իլլենք զբազիւ, ու բերկրանքով կ'երթանք անոր:

ԶԻՆ

Հազար հոգի մը, տէր իմ, թէպէտ կանուխ, ազուցիկ
Զըրահներնին արդէն վրանին, քաղքին դուռն են, Չեզ կրսպասեն:

(Բուռա՛— Ժողովոյն)

(Կը մտնէ Սպաներ և շինարներ)

ՍՊԱՅ

Առաւօտն աղեր է: Բարի առտու, զօրապետ:

ԱՄԷՆՔԸ:

Բարի առտու, զօրապետ:

ԱՆՏ

Լաւ բացուած է ան, տըղաք:

Այս առաւօտն ինչպէս աշխոյժ հոգիի տէր մի պատանի
Որուն միտքն է նշանաւոր հանդիսանալ, կանուխ սկիզբ
Կ'ընէ իրեն: Այսպէս, այսպէս, օ՛ն տուր ինձ ատ, աս կերպ լաւ է:
Մնացի՛ր բարեաւ, ով տիկին, ինչ որ ալ ինձ պատահի.
Աս զինուորի՛ համբոյր է. այպանելի, ամօթապարտ
Կշտամբանքի վարմունք կ'ըլլար ասկէ պակաս սրտագին
Լոկ ձեւական պատուասիրում: Հիմա քենէ կը մեկնիմ
Պողպատէ մարդ ես դարձած: Մարտնչողներ, ետեւէս
Եկէք մօտէն: Հիմա ճակատ ձեզ կը տանիմ: Մնաս բարեաւ:

(Կը մտնէ Անրանիտ, Երոս, Սպաներ ու Չինարներ)

ՇԱՐՄ

Շնորհ ըրէք, Ձեր սենեակը քաշուեցէք:

ԿԻՌ

Տար զիս հոն:

Քաջասիրտ ան կը դիմէ դէպի ճակատ: Ուր էր թէ
Ան ու կեսար մենակուիւ այս միծ մարտին ելք տային:
Ան ժամանակ Անտոնիոս... բայց հիմա... փոյթ չէ, օն:

(Կը մտնէ)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե .

Աղեփանդրիա . — Անտոնիոսի բանակեցող
փողեր կը հնչեցնեն : Կը մտնեն Անտոնիոս եւ Յրոս ,
Զինուր մը հանդիպելով տնոնց :

ԶԻՆ . Աստուածներն առ բարեբաղդ օր մը ընեն Անտոնիոսին :
ԱՆՏ . Իցիւ թէ դուն ու սպիներդ այդ քունն՝ վըրաս ազգած
ԸԼԼային ցամաքի վրայ մարտնչելու :

ԶԻՆ . Եթէ ըրած
ԸԼԼայիւր առ , ընդվզող արքաներն ու զօրականն
Որ այս առտու քեզ լըքեց , դեռ թիկունքեդ քեզ հետեւող
Պիտ՝ ըԼԼային :

ԱՆՏ . Ո՞վ մեկնեցաւ այս առտու :

ԶԻՆ . Ո՞վ ,
Մէկն որ միշտ քու քովդ էր : Էնորարբոս կանչէ հիմա ,
Ու քեզ լըսող չես գտներ , կամ Կեսարի բանակէն
Պիտի լըսես որ քեզ կ'ըսէ "Բուկըդ չեմ ես" :

ԱՆՏ . Ի՞նչ կ'ըսես

ԶԻՆ . Կեսարի քովն է ան , տէր իմ :

ԵՐՈՍ . Տէր իմ , իրեն սնտուկներն
Ու դրամա՛րկըը հետը չեն :

ԱՆՏ . Մեկնած է :

ԶԻՆ . Հաստատապէս :

ԱՆՏ . Գընա , Երոս , իր դրամա՛րկըը ետեւէն զրկէ շո՛ւտ :
Անպատճառ առ ընես : Մի՛ վար դըներ մէ՛կ շիւղ մը իսկ :
Հրաման կ'ընեմ : Գըրէ իրեն — կը ստորագրեմ աակը ես —
Գողտըր ողջերթ ու բարեւներրս , ըսէ թէ կ'ուզէի որ
Երբէք պատճառ ա՛լ չի գտնէ՛ր տէր փոխելու : Ո՛հ , իմ բաղդըս
Պարկեշտ մարդերը գեղծ կ'ընէ : Փութով ըրէ : Էնորարբոս :
(Կը Դեմէն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ .

Աղեփանդրիա — Կեռաբի բանակեցող
փողաճայն . կը մտնեն Կեսար , Ագրիպպա Էնորարբոսի եւ ուրիշներու հետ :

ԿԵՍ . Գընա ճակատ , Ագրիպպա , ու մարտնչունն ըսկո՛ւէ :

Մեր կամքն է՝ Անտոնիոս ողջ բռնուի : Այսպէս գիտցուր :

ԱԳՐ . Կ'ընեմ , Կեսար : (Կը Դեմէն)

ԿԵՍ . Տիեզերական խաղաղութեանն ժամը մտա է : Թող այս յաջող
Օր մը յայտ գայ , ու աշխարհս երեքհուսի ձիթենի
Պիտի բերէ այլ եւս առտա :

(Պատգամաբէր մը կը մտնէ)

ՊՏԳՄ . Անտոնիոս պատերազմի

Դաշտն իջած է :

ԿԵՍ . Գընա ինէ հըրաման տուր Ագրիպպայի

Որ անկէ ընդվզողներն յառաջամարտ զիրքի մէջ գնէ
Որպէս զի Անտոնիոս իր մուրացքն ինքն իր վըրայ
Թափել թուի :

(Կը Ֆիլիէն ափնու բայի Էնթարբուսն)

ԷՆՈ. Ալէքսաս ընդվզեցաւ , ու Հրէաստան պնաց որպէս թէ
Անտոնիոսի գործին հաշւոյն : Հոն մեծ Հերովդը շրջեց
Կեսարի կողմն հակելու : Կեսար կտխեց գանիկա
Փոխան իր այս աշխատանքին : Կանիդոս ու մնացեալ
Հեռացողներն քստացած են պաշտօններ բայց ոչ պատուոյ ,
Վրտահուլթեան : Չար գործեցի , որուն նս ինքըս կը կանգնիմ
Ամբաստան այնքան դառըն կսկծանքով որ ալ չունիմ
Ուրախութիւն զգալիք :

(Կը Դոնէ Կեսարի Ֆիլ Զինարը)

ԶԻՆ. Էնթարբուս , Անտոնիոս
Քու ետեւէդ զրկեր է բոլոր ինչքերդ , աւելցնելով
Վըրան առատ պարգեւն իրեն , պատգամաբերն իմ պահ կեցած
Տեղս եկաւ , ու քու վրանիդ առջեւ հիմա վրայի բեռները
Կը թափէ :

ԷՆՈ. Ա՛ն , քեզ ըլլայ :

ԶԻՆ. Մի՛ ծաղրեր զիս , Էնթարբուս :
Շիտակ կ'ըսեմ : Լաւ կ'ըլլայ որ բերողին երթն ապահովես
Բանակէն դուրս : Ես իմ պաշտօնս ունիմ , պէտք է անոր նայիմ ,
Եթէ ոչ՝ ես կ'ընէի : Քու կայսրըդ միշտ Արամազդ մը
Կը մընայ :

ԷՆՈ. Ե՛ս եմ միայն այս աշխարհիս անըզգամն ,
Ու ամենէն աւելի ե՛ս կը զգամ առ : Ո՛վ Անտոնիոս ,
Ո՛վ դու հա՛նք առատութեան , ի՞նչ կերպ վարձք պիտի տայիր
Իմ լաւագոյն սպասիս , երբ անպատիւ վարմունքըս գարչ
Այսպէս ոսկով կը պըսակես : Ալ աս լեցուց իմ սիրտըս ,
Պիտի պողծկայ : Եթէ սուր մտքի կռուվք գան չի քանդէ ,
Մտքէ սուր գործի մը պիտի կանխէ ան զարնէ ,
Բայց կը զգամ որ մտքի տանջանք պիտի ընէ ինչ որ պէտք է :
Ես կուուի՛մ քեզի դէ՛մ : Ո՛չ , ես երթամ փնտռեմ
Փոս մը որ մէջը մեռնիմ , ամենէն գարչ ու կեղտոտն
Յարմարագոյնն է իմ կեանքիս վերջի մասին :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է .

Ազդարար հնչում — փող ու բմբուկ :

Կը մտնեն ազդարարս եւ ուրիշներ :

ԱԳՐ. Նահանջեցէք , շա՛տ յառաջ մըլիուեցանք : Կեսար ինքն իսկ
Զբաղուած է , ու ձեր տագնապն աւելի է քան ինչ որ մենք
Կը սպասէինք :

(Կը Ֆիլիէն)

(Փողայտն կը ծոնեն Անտոնիոս և Սկարոս , Հերարբուսած)

ՍԿԱ. Ո՛վ իմ կայսրըս քաջարի , ահա ասոր կ'ըսեն կուուի՛ք

Եթէ սկիզբէն այսպէս ըրած ըլլայինք, տեղերնին
 Զանոնք վռնտած կ'ըլլայինք, լսթեր փաթթած գլխերնուն
 Արագ արիւն կը հոսեցնենս :

ՍԿԱ. Վէրք մ'ունէի որ ի ի
 Նըման էր, բայց հիմա փ մը դարձաւ ան :
 (Նահանջի յայն հետեւն)

ԱՆՏ. Կը նահանջեն

ՍԿԱ. Արդարեւ :
 Պիտի զարնենք զանոնք վանենք մինչև ծակե'րը
 Կոյուղոյ : Դեռ վեց խոցի համար տեղ կայ մարմնիս վըրայ :
 (Կը յորէ Երոս)

ԵՐՈՍ. Յաղթեցինք իրենց, տէր իմ, ու մեր այս զի'րքը նպաստաւոր
 Նախաշաւիղ է փառաւոր յաղթութեան :

ՍԿԱ. Եկէք դրոշմենք
 Թիկունքն իրենց, ու ծոծրակնուն բռնած զանոնք վեր թուցընենք
 Ինչպէս կ'ընենք նապաստակաց : Զբօսալից խաղ է փախչողը
 Խոշտանգել :

ԱՆՏ. Պէտք է քեզ ես վարձատրեմ մէկ անգամ մը
 Քու զուարթոցի սիրտ տալուդ, ու տասն անգամ ալ սիրալի
 Յաջողութեանըդ փոխարէն : Եկուր մէկտեղ :

ՍԿԱ. Ես կը կազամ
 Չեր ետեւէն : (Կը Բի'ն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ը.

Աղէքաւորիոյ պարիպներուն ներքեւ :
 Փողածայն, կը մտնեն Ա.նառնիոս, զօրախալով, Սկարս եւ ուրիշներ

ԱՆՏ. Զանի զարկինք մինչև բա՛ռն հալածեցինք, թող առաջէն
 Մէկը վազէ ու թագուհին տեղեկացնէ մեր քաջագործ
 Արարքներուն : Վաղը արե'ւը մեր երեսը չտեսած,
 Մեզմէ այսօր վրիպած արի'ւնը կը թափենք : Շնորհակալ
 Եմ ամէնքէդ. վասնզի կորովածեան էք. ու այնպէս
 Մարտնչեցաք որպէս թէ դուք այս գատին ծառայողներ
 Չըլլայիք, այլ աս ձերինն ըլլար ամէն մէկերնուդ
 Ինչպէս իմն է : Ամէնքնիդ մէյակէ Հեկտոր հանդիսացաք :
 Մըտէք քաղաք. ձեր կիներն ու ընկերնե'րը թեւերնուդ
 Մէջ առէք, պի'նդ գրկեցէք, պատմեցէք ձեր քաջ արա'րքը
 Անոնց, մինչ իրենք՝ պաղած փակչած արի'ւնը լուան
 Չեր խոցերէն ուրախութեան արցունքներով, ու պատուակիր
 Չեր բաց վէրքերն համբոյրներով միացընեն : (Սկարսն)

Չեր քաջ վէրքերն համբոյրներով միացընեն : (Սկարսն)
 (Կը յորէ Կլեոպարա Նախնիքով)
 Այս չքնա՛ղ պարիկին պիտի քու գործքդ յանձնարարեմ : անոր բերնէն
 Բարիք քեզի շնորհակալիք առնել տամ : (Կլեո.ն) Ո՛վ աշխարհիս
 Լոյսը դուն, իմ զինադարդ վըզիս անուր ըրէ թեւերդ,
 Ցատկէ՛, հագուստ ու ամէն ինչ միասին, մուխ զըրահիս

Մէջէն անցիր սիրտս եկուր, ու հոն հեծիր հեքերուն վրայ
Յաղթական:

ԿԼԷՈ.

Ո՛վ իշխան իշխաններու, ո՛վ անսահման
Արութիւն, ժպտադէմ այսպէս կուգաս աշխարհիս մեծ
Ծուղակէն չբռնուած:

ԱՆՏ.

Սոխակըս, զիրենք զարկինք
Հայածեցինք անկողինին: Ի՞նչ կ'ելլէ, աղջիկըս,
Եթէ գորշ մազ քիչ մը խառնուի մատղաշագոյն մեր թուխին.
Մեր գլխին մէջ ունինք ըզե՛ղ որ ջիղերնուս սընունդ կուտայ,
Ու կարող է խաղ շահել տալ պատանիի մը շահած
Մէն մի խաղին փոխարէն: Խո՛ղբեմ նայէ սա մարդուն:
Շնորհաձիր քու ձեռքըդ իր շուրթերուն յանձնել հաճէ:
Համբուրէ զան, քաջ ուզմիկըս. այսօր այնպէս ան կուուեցաւ
Որպէս թէ աստուած մը, այդ կերպարանքը մըտած,
Մարդկութեան դէմ հեռով լեցուն, կոտորելու եկած ըլլար:
Բարեկամ, քեզի կուտամ համակ ոսկի զըրոհ մը:
Թագաւորի մըն էր ան:

ԿԼԷՈ.

ԱՆՏ.

Իր արժանն է ատ, եթէ
Սրբահայեաց Արեգին կառքին չափ խիտ շողակներ
Ունենայ իսկ: Տուր ձեռքդ ինձի: Աղէքսանդրիոյ քաղքին մէջէն
Զուարթ զօրաքայլ մը ընենք, մեր գրծուած ասպարներն
Անոնց խրոխտ տէրերուն պէս կըրելով: Եթէ մեծ
Պալատնիս կարող ըլլար այս զօրքերն համագունդ
Բանակեցնել, միասին կը ճաշէինք ամէնքնիս,
Ու բաժակներ կը պարպէինք մինչև յատակ յարթօրդ օրուան
Բարի բաղդին որ կանխաւ կը խոստանայ արքայական
Գործ վրտանգի: Փողահարներ, ձեր արուրէ շրոխնդով
Քաղքին ականջը քանդեցէ՛ք. ձեր հնչումները խառնեցէք
Մեր թնդացնող թմբուկներուն, որպէսզի երկինք գետին
Իրար խառնեն հնչումներնին, ցնծագին խինդով մեր ե՛կը
Տօնելու: (Կը խօսին)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ.

Կեսարի բռնակը. — պահակներ, իրենց պահասեղից

Ա. ԶԻՆ.

Եթէ այս մէկ ժամուս մէջ մենք չի փոխուինք, պէտք է դառնանք
Պահակետղ. նըշուլոտ է այս գիշեր, և կ'ըսուի թէ
Առաւօտեան երկրորդ ժամուն պիտի ուզմի յարգարուինք:

Բ. ԶԻՆ.

Այս վերջին օ՛րը մեզ սուղի նստեցաւ:
(Կը յընէ Էնթարթս)

ԷՆՈ.

Ինձ եղիր դուն, ո՛վ գիշեր...

Ո՛հ վրկա՛յ

Գ. ԶԻՆ.

Ի՞նչ մարդ է աս:

Բ. ԶԻՆ.

Թաքած կեցիք

Ու մըտիկ ըրէք անոր:

ԷՆՈ.

Վրկայ եղիր ինձ ո՛վ դուն

Օրհնեալ լուսին, երբ պատմութեան մէջ ուրացող մարդեր կըրեն
Անարգանաց յիշատակ, թէ ինչպէս հէք Էնորարբոս
Քու երեսիդ յանդիման զղջման եկաւ:

Ա. ԶԻՆ. Էնորարբոս.

Գ. ԶԻՆ. Հանդարտ: Շարունակենք մըտիկ ընել:

ԷՆԱ. Ո՛վ ճշմարիտ

Թախծութեան առաջագահ թագուհի, գիշերուան
Թիւնաթաթախ խոնաւութի՛ւնը վրաս քամէ, որպէսզի
Կեանքն՝ իմ կամքիս դէմ ապստամբ այլ և՛ս չի մնայ
Վըրաս յարած. իմ յանցանքիս խիստ վէժին դէմ զարկ սիրտս
Որ կսկիծէ չորցած ցամքած, պիտի փշրի փոշի դառնայ,
Ու վերջ դընէ ամէն կեղտոտ մըտածման: Ո՛վ Անտոնիոս,
Շա՛տ աւելի աղնուական քան ուրացումս է գարշելի,
Ինծի ներէ՛ իմ յանցանքս որչափ ան քեզ նըկատմամբ է.
Իսկ աշխարհ յիշատակաց գըքին մէջ զիս թող դրոշմէ
Տիրաթող մ՛ու դասալիք: Ո՛վ Անտոնիոս, Անտոնիոս:

(Կը Դոնէ)

Բ. ԶԻՆ. Խօսինք իրեն:

Ա. ԶԻՆ. Մըտիկ ընենք, զի այն բաներն որ կը խօսի
Թ.երևս կեսա՛րը նըկատեն:

Գ. ԶԻՆ. Լաւ, ընենք: Բայց կը քնանայ:

Ա. ԶԻՆ. Ոչ, ան մարած է յաւէտ, զի այդքան գէշ աղօթք մը
Քուն մտնելու համար երբէք չըլլուիր:

Բ. ԶԻՆ. Քոյն երթանք:

Գ. ԶԻՆ. Արթնցիր, պարոն, օ՛ն, արթնցիր, խօսէ մեզի:

Բ. ԶԻՆ. Կը լըսէք, պարոն, ըսէք:

Ա. ԶԻՆ. Մահուան ձեռքն եկած հասած
է իր վրայ: (Թ՛ժբոսի յոյն հետաւանց) Մըտիկ ըրէք, թմբուկնե՛րը
Կ'արթնցնեն քնացողներն: Պահակետդ եկէք տանինք զանիկա.
Ծանօթ մարդ է, մեր ժամն ամբողջ լըրացաւ:

Գ. ԶԻՆ. Օն ուրեմն

Եկէք տանինք. կարելի է, դեռ կ'աղէկնայ:

(Կը Դեկնին մարտնը հետ առած)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ.

Երկու բանակներուն մէջեղ

Կը մտնեն Անտոնիոս եւ Սկարոս իրենց բանակին հետ:

ԱՆՏ. Անոնք այսօր ծովի վըրայ պատրաստութիւն տեսած են.
Ծովի վրայ հաճելի չենք գար իրենց:

ՍԿԱ. Երկուքին ալ

Վըրայ, տէր իմ:

ԱՆՏ. Կ'ուզէի որ կըրակին մէջ կամ օդին մէջ
Մարտնչէին: Հոն ալ իրենց հետ կը կռուինք: Բայց բանն այս է.
Մեր հետեւակը քաղաքին մօտակայ լեռներուն վրայ

Պէտք է մեզի հետ կենայ . ծովի վրայ կուռի հրաման
Տրուեցաւ . անոնք արդէն նաւակայքէն դուրս ելան . . .
Ուրեմն յառաջ , հոն ուր կրնանք ամենէն լաւ գտնել իրենց
Կաղմութիւնն ու դիտել ճգնիրն իրենց :

(Կը Ռէկէն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ա .

Նոյնին մէկ ուրիշ կողմը .

Կը մտնէ Կեսար եւ իր բանակը .

ԿԵՍ . Սակայն եթէ յարձակին , պիտի հանդարտ կենանք մենք
Ցամաքի վրայ , զոր , իմ կարծեօք , թոյլ պիտի տան , զի մեծագոյն
Զօրութիւննին դուրս հանած են ցովանաւերը մարդ գնելու :
Հովիտներն , օ՛ն , գացէք բռնել գերակշիռ մեզի դիրքով :

(Կը Ռէկէն)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Բ .

Աղէքանդրիոյ մօտակայ լեռներ .

Կը մտնեն Անտոնիոս եւ Սկարոս .

ԱՆՏ . Մինչև այս կէտ մեկտեղած չեն . սա նոճիին կեցած տեղէն
Պիտի ամէն բան հասկընամ , քեզի խնայն լուր կը բերեմ ,
Թէ գործը ի՞նչ ընթացք կ'առնէ :

(Կը Ռէկէն)

ՍԿԱ . Ծիծեռնակներ բոյն դըրեր են

Կլէոպատրի նաւերուն մէջ : Հաւահաման'ը կ'ըսեն թէ
Չեն գիտեր ի՞նչ ըսելին . երեսներնին կախուած է
Ու գիտցածնին խօսելու չեն համարձակիր . Անտոնիոս
Մերթ քաջասիրտ է , մերթ վըհատ , ու փօխն ի փօխ
Իր խառնաման բաղդին գեպքերն իրեն կ'ազդեն մերթ յոյս
Եւ մերթ վախ , իր ունեցածը պահելուն կամ կորչելուն :

(Հետաւանց գուտամ եւ յըխար իբր ծովամարտի)

(Կրկին էլ մտնէ Անտոնիոս)

ԱՆՏ . Կորսուեցա՛ւ ամէն բան : Աս գարշելի եգիպտուհին
Չիս մատնեց . թշնամիին անձնատուր եղաւ տորմիզս ,
Ու հունա գըզակնին վե՛ր կը նետեն ու՛ մէկտեղ բաժակ
Կը պարպեն նրման շատոնց իրարու տեսքէն զրկուած
Ընկերներու : Եռափոփո՛խ պունիկ դու , գուն ես որ զիս
Ծախեցիր այս նորաթեք աշակերտին , ու սիրտըս միայն
Քեզի դէմ մարտ կը մըղէ : Հրաման տուր որ փախչին ամէնք ,
Չի երբ իմ վրէ՛ժըս լուծեմ զիս կապող կախարդանքէն ,
Այ ամէն բան ըրած կ'ըլլամ : Հրաման տուր որ փախչին ամէնք :
Գընա հոսկէ :

(Կը Ռէկէն Սկարոս)

Ո՛վ արեգակ , ալ չպիտի տեսնեմ ծագելդ ,
 Բաղդն ու Անտոնիոս Տոս իրարմէ կը բաժնուինք .
 Ճիշդ այստեղ ձեռք կը մեկնենք : Միթէ ամէն բան ասո՞ր
 Պիտի հասնէր կատարէր : Գարշապարիս որսի շունի
 Պէս հետեւող մարդոց սրտերն որոնց շնորհած եմ բոլոր
 Խնդրածն իրենց , շաքարաթափ կ'ըլլան հիմա , ու անուշին
 Կը քամեն արագ ծաղկող Կեսարի վրայ , և ամենուն վրայ
 Բարձրագլուխ այս նոճիս կեղեւամերկ կը չորնայ :
 Մատնուած եմ : Ո՛հ այս սո՛ւտ պատրող հոգին Եգիպտոսի ,
 Այս խորճենկ կախարդանքն՝ որուն աչքին մէկ նշանն իսկ
 Ջիս մարտերու դիմել կուտար , ու անոնցմէ ետ կը կանչէր ,
 Որուն ծոցն իմ պըսակս էր , ծայր ու հուսկ կէտ նըպատակիս ,
 Ճիշդ գնչուի մը նըման , զիս խաղցուցած խաբեց տարաւ
 Կորստեան բուն խորխորանն : Ո՛ւր ես Երոս , Երոս :

(Կը մտէ Կլէոպատրոս)

ԱՏ դիւթանք դու , անդի՛ն աչքէս .

ԿԼԷՈ՝

Ինչո՞ւ իշխանս իր սիրելւոյն

Դէմ կատղած է :

ԱՆՏ՝

Անհետացի՛ր , եթէ ոչ քու արժանի
 Պատիժդ հիմա կուտամ քելի , ու յաղթանակը Կեսարին
 Թերի կը ձգեմ : Թող քեզ առնէ , ու վերամբարձ քեզ բռնէ
 Աղմըկագոջ խուժանին , գնա ետեւէն իր կառքին
 Իբր ամենէն խայտառակն ամբողջ սեռիդ , իբրև ցուցանք
 Մ'ամենամեծ , ամենէն ողորմելի կոտորակի՛մ
 Մէկ փարայի ցոյցի դրուէ , ու համբերող Հոկտաւիան
 Թող երեսներդ արօրէ իր պատրաստուած եղունգներով :

(Կը մտէ Կլէոպատրոս)

Աղէկ եղաւ որ գացիր , եթէ աղէկ է ապրիլ ,
 Բայց աւելի աղէկ կըլլար որ մոլուցքիս մէջ իյնայիր ,
 Ջի մէ՛կ մահ կրնար թերեւս շատ ուրիշներ խափանել :
 Երոս , հո՞տ ես : Նեսոսի շապիկը վրաս է կարծես .
 Կատաղութիւն ինձ սորվեցուր , ո՛վ Ալկիդէս , նախահաւգ իմ ,
 Որ լուսինին եղջիւրներուն վըրայ Լիքա՛սը զետեղեմ ,
 Ու ամենէն ծանրակիր լա՛խար շարժող այս ձեռքերովս
 Իմ գերագնիւ անձրս նուաճեմ : Կախարդուհին պիտի սատկի :
 Ջիս դեռահաս Հռովմայեցի տղուն ծախեց , ու այս դաւին
 Ներքև կ'իյնամ : Կեանքն հատուցում ինձ պիտի տայ : Երոս , հո՞տ ես :

(Կը մտէ)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ԺԳ.

Աղէֆանդրիա — Կլէոպատրոսի պալատը .
 կը մտնեն Կլէոպատրոս , Ծարժիան , Իռատ ու Մարդիան

ԿԼԷՈ՝

Օգնեցէք ինձ , ո՛վ իմ կանայք : Ո՛հ , խենթ կտրեր է անիկա , Աւելի քան Տելամոնն *) իր ասպարին պատճառով .

*) Այսինքն Տելամոնեան էաս , Տելամոն՝ էասի հայրն էր :

Թեսալիոյ վարացն անգամ երբէք ասոր չափ չէ փրփրած :
ՇԱՐ. Օ՛ն, դամբարանը դիմեցէք : Հոն փակուեցէք, ու իրեն լուր
 Ղրկեցէք թէ մեռած էք : Հոգի, մարմին այնքան զբժուար
 Չեն ձեզքուր՝ Թողուր զիրար որքան մեծ մարդն ու մեծութիւն՝
ԿԼԷՈ. Օ՛ն, դամբարան : Մարդիան, գընա ըսէ՛ իրեն որ
 Ես ինքզինքս սպաննեցի : Ըսէ վերջին բառն որ ըսի
 Անտոնիոն էր, ու ինդրեմ, սրտայոյզ բառեր գըտի՛ր :
 Գնա Մարդիան, ու լուր բեր ինձ թէ ան ի՛նչ կերպ մահըս կ'առնէ՛
 Օ՛ն, դամբարան :

(Կը Դեկտեմբեր)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Դ.

Նոյնը — ուրիշ սեռեակ մը.
 Կը մեռնեն Անտոնիոս եւ Երոս :

ԱՆՏ. Երոս, չէ՞ որ կը տեսնես զիս :
ԵՐՈՍ. Այո՛, իշխանդ իմ ազնիւ :
ԱՆՏ. Մերթ կը տեսնենք մէկ ամպ մը վիշապածե, մերթ գոլորշի՛մ
 Նըման արջի կամ առիւծի, բարձրաշտարակ միջնաբերդի,
 Առկախ ժայռի, երկձիւղ լեռան, կամ ծիրանի հրուանդանի
 Ծառեր վրան որ այս երկրիս կարծես գլխով նըշան կ'ընեն,
 Եւ օգեղէն լոկ պատրանք կը պատկերեն մեր աչքին .
 Դուն տեսած ես երկինքն այս երեւոյթներն. անոնք
 Սեւադէմ Երեկոյին հանդիսագրած ցոյցերն են :
ԵՐՈՍ. Այո՛, տէր իմ :
ԱՆՏ. Այն որ հիմա դեռ ձի մըն էր, մտքի՛նթացման
 Պէս սրագ, օգածըփիկ գոլորշին կը ցնդէ զայն
 Պատկերաջինջ ու անորոշ կը դարձընէ ինչպէս է ջուրը
 Ջըրին մէջ :
ԵՐՈՍ. Կ'ընէ, տէր իմ :
ԱՆՏ. Իմ բարի՛ ծառաս Երոս,
 Քու զօրապետը հիմա ձիշտ այդպիսի մի մարմին է :
 Հոն կամ ահա ես Անտոնիոս, սակայն իմ այս տեսանելի
 Կերպարանս ես կարող չեմ պահպանել, ազնիւ ծառաս *) :
 Այս մարտերն Եգիպտոս համար ըրի, ու թագուհին
 Որուն սիրտն իմինս ըլլալ կը կարծէի, զի անորն
 Էր իմըս, որ երբ անոր չէր տրուած, իրեն կապած
 Էր միլիոններ՝ այժմ հորսուած — նոյն ան, Երոս, Կեսարի հետ
 Թուղթ շտկեց, ու իմ փառքի բարձրը խաղըս խարդախեց,
 Թշնամիին կանգնել տալով յաղթանակ : Բայց ո՛չ, մի՛ լար,
 Ազնիւ Երոս : Ինքզինքնիս մենք դեռ ունինք, ինքզինքնուս
 Վերջ տալու :

(Կը Դուրեմ Մարտիան)

*) Ըսել կ'ուզէ՛ իմ փառքս ինչ մեկնած ըլլալով, այլ ես պէտք է դադրիմ երեւալէ
 այն Անտոնիոսը որ էի :

Ա՛Տ անըզգամ քու տիրուհիդ, ինէ իմ թնւորս
կապտեց նէ:

ՄԱՐ.

Ա՛Յ, Անտոնիոս, քեզ կը սիրէ՛ր տիրուհիս,

ու իր բախտն ամբողջովին քուկինիդ հետ խառնած էր:

ԱՆՏ.

Կորի՛ր, ցած աներես ներքինի, լեզուդ քաշէ.

Մատնեց զիս նէ, ու մահուան պիտի պատիժ նէ կրէ:

ՄԱՐ.

Մարդ մէ՛կ անգամ

Միայն կրնայ մահուան պարտքն հատուցանել. ու առ արդէն

Վըճարած է: Ինչ որ քու կամքդ էր ընել, կատարուած է

Քեզի ահա: Վերջին բառն որ նէ ըսաւ, Անտոնիո՛ս էր,

Ա՛Վ վեհագո՛յն Անտոնիոս, երբ խօսքին մէջ մարմին քակող

Մէկ հառաչա՛նք մը եկաւ կտրեց անունն Անտոնիոսի.

Իր շուրթերուն ու սրտին մէջ ան երկուքի բաժնուեցաւ.

Քու անունդ այս կերպ իր նե՛րսը թաղուած տուաւ հոգին:

Մեռա՛ւ ուրեմն.

ԱՆՏ.

ՄԱՐ.

ԱՆՏ.

Այո՛, մեռաւ:

Հանէ գէնքերս այլեւս երոս.

Երկայն օրուան աշխատութի՛ւնը վերջացաւ, ու ալ պէտք է

Քուն մտնենք: (Մարդիանի՛ն) Հոսկէ քու ողջ մեկնելըդ ճոխ վճարք է

Փոխան կըրած այս յոգնութեանդ: Օ՛ն, գընա՛ (Կը Քի՛ն)

Հանէ՛, հանէ՛

Վըրայէս, Էսաի եօթնասուե ասպարն իսկ

Բաւական չէ սրտէս թնգիւնն արգիլելու: Ա՛Վ իմ կողերս,

Ճեղքուեցէ՛ք, շատուեցէ՛ք, ու դուն սրտեա՛կ, մէկ այս անգամ

Պարունակչէ՛դ ուժով եղիր, պայթեցո՛ւր քու այս պատեանըդ

Դիւրաբեկ: Արա՛գ, երո՛ս, արագ ըրէ: Ա՛լ ուազմիկ չեմ.

Ա՛Վ ճգմուած կտորուանք, գացէ՛ք: Վեհօրէ՛ն դուք կըրուեցաք:

Չգէ զիս պահ մը:

(Կը Քի՛ն երոս)

Քեզի պիտի գամ հասնիմ, ո՛վ կէոպատրա,

ու իմ ներմանս համար լամ: Այդպէս պէտք է որ ըլլայ,

Զի հիմա, ալ որ և է երկարացում տանջանք է.

Քանի որ ջա՛հը մարած է, պառկէ հանգչէ, ու ա՛լ հեռուն

Մ'երթար մոյր. այլ ևս ամէն աշխատանք ըրածը լոկ

Կ'եղծանէ. այո՛, բուռն կորովն անգամ ինքն իր ուժին

Հետ բռնուած կը տագնապի: Կնքէ՛ ուրեմն ու ամէն բան

Կը վերջանայ: Երո՛ս... կուգա՛մ, իմ թագուհիս: Երո՛ս...

Սպասէ՛ ինձի: Հոն ուր ծաղկանց հոյլերու վրայ հոգինե՛րը

Կը հանգչին, ձեռք ձեռքի պիտի ձեմենք միասին,

ու ոգինե՛րը ակնապիշ նայիլ տանք ոգեւորուած

Մեր գնացքին: Դիդոն ու իր Ենէաս պիտի զրկուին

Շրջապատող խումբերէ, ու բովանդակ խոնոււմը մեր

Շուրջը պիտի ըլլայ միշտ: Եկուր երոս, օ՛ն, երո՛ս:

(Կը Քի՛ն կը Գոնէ երոս)

ԵՐՈՍ.

ԱՆՏ.

Իշխանըս ի՛նչ կամք ունի:

Կէոպատրի մահէն ի վեր,

Այնպիսի անպատուութեան մէջ ապրեցայ, որ աստուածնե՛րը

Կ'անգոսնեն իմ ցածութիւնս : Ես որ թըրիս ծայրովն աշխարհս
 Համօրէն բաժին բաժին կ'ընէի, ու կանանչ
 Պոսիգոնի թիկունքին վրայ քաղաքներ կ'յօրինէի
 Նաւերով, ինքըզինքս կը գսրովեմ որ կընող
 Մը քաջութիւնը չունիմ : Նուազ վեհօգի քան ան որ
 Իր մահուամբ կը զգացընէ Ահարին թէ "Ինքըզինքս
 Նուաճողն ե՛ս եմ" : Երգուընցած ես, դուն Երո՞ս, որ երբ ժամուն
 Պահանջը գայ, որ իրա՛ւ հիմա եկած՝ հասած է,
 Երբ ետեւէս անխուսափելի հետապնդի՛լը տեսնեմ
 Անուանարկում ու սոսկում՝ իմ հրամանիս վրայ այն ատեն
 Պիտի դուն զիս սպաննես : Ըրէ՛ ատ, ժամանակն
 Եկած է : Չես գարներ զիս, այլ ըզկեսար կը քայքայես :
 Երեսըզ գոյն բեր քիչ մը :

ԵՐՈՍ. Աստուածներն հեռու ընեն :

Պիտի ե՛ս ընեմ ան որ՝ Պարթև նետերն համայն, թէպէտ
 Թշնամի, վըրիպեցան նըպատակնուն ու չկըցին :

ԱՆՏ. Երո՞ս, միթէ կ'ուզէի՞ր մեծ Հըռովի մէջ պատուհան
 Մը կեցած, տեսնել տէրըզ, այսպէս թեւերը խաչկապած,
 Խոնարհազարկ գլխակորած, իր երեսները նըկարուած
 Խորթաթափանց ամօթէն, մինչ առջևէն պերճավար
 Քաջաբաղդիկ Ահարի գահն անուաւոր՝ հետեւորդին
 Ստորնութիւնը խարանէր :

ԵՐՈՍ. Ա՛յ, չեմ ուզեր տեսնել ատ :

ԱՆՏ. Ուրեմըն օ՛ն, յառա՛ջ, զի՛ պէտք է ե՛ս վէրքով մը բուժուիմ :
 Քաշէ քու այգ սուրըզ պարկեշտ, զոր դուն այնքան յօգուտ երկրիդ
 Կըրած ես :

ԵՐՈՍ. Ո՛հ, ներէ, տէր :

ԱՆՏ. Երբ ես ազատ ըրի քեզ,
 Դուն այն ատեն չ'երգուընցա՞ր աս ընելու, երբ հրամայեմ :
 Ըրէ՛ իսկոյն, եթէ ոչ՝ քու նախընթաց ըսպաններդ
 Ամէնքն ալ զիպուածո՛վ են կատարուած, ո՛չ խորհելով :
 Քաշէ՛, օ՛ն :

ԵՐՈՍ. Ուրեմն անդին դարձուցէք այդ վեհ երեսն

Որ իր վըրայ կը կըրէ պաշտանքը ո՛ղջ աշխարհի :

ԱՆՏ. Ուզածդ ա՛հա՛ :

ԵՐՈՍ. Սուրբս քաշած է ա՛հա :

ԱՆՏ. Ուրեմըն ի՛նչ

Բանի համար որ քաշեցիր, իսկոյն ըրէ՛ :

ԵՐՈՍ. Իմ սիրելի

Տէրըս, պետըս, ու իմ կայսրըս, սա արիւնոտ հարուածն հիմա
 Տալէ առաջ, թոյլ տուէք՝ ըսեմ երթաք բարեա՛ւ :

ԱՆՏ. Ըսիր, եղաւ :

Մա՛րդ շուտ ըրէ, ու մնաս բարով :

ԵՐՈՍ. Երթաք բարեա՛ւ,

Մեծ զօրապետ : Զարնե՛մ հիմա :

ԱՆՏ. Օ՛ն, զա՛րկ, Երո՞ս :

ԵՐՈՍ. Ա՛ն ուրեմըն,

Ա՛հա այսպէ՛ս ես կ'ազատիմ Անտոնիոսի մահուան ցաւէն :

(Ինչպէս ինչպէս ինչպէս)

ԱՆՏ. Երիցս անգամ ինչ ազնիւ, ո՞վ քաջ Երոս, դուն ինձի
 Կը սորվեցնես ինչ որ պէտք էր ու չի կրցի ես ընել:
 Իմ թագուհիս ու Երոս իրենց տըւած արիական
 Օրինակով՝ ազնուութեան յիշատակաց մէջ ինչ վեր
 Տեղ գրաւեցին. բայց ես հիմա նոր փեսայ պիտի դառնամ
 Իմ մահիս մէջ, ու ես անոր պիտի վազեմ որպէս թէ
 Տարփաւորի մը անկողինն ըլլար ան: Օն ուրեմբն,
 Ու ահա, Երոս, քու տէրդ քու աշակերտդ կը մեռնի:
 Ես քենէ այսպէս ընել (տարին չբաւար) սորվեցայ: Ի՞նչ չմեռայ
 Ձի մեռայ: Պահակ մը, ո՞ն, հօ՛ եկուր, զիս լըմընցուր:
 (Կը մտնէ Իերկեբաս եւ պահակ մը)

Ա. ՊԱՀ. Ի՞նչ աղմուկ է:

ԱՆՏ. Բարեկամներ, իմ գործըս գէշ կատարեցի:
 Ո՛հ, սկըսածս աւարտեցէք:

Բ. ՊԱՀ. Աստղը ինկաւ:

Ա. ՊԱՀ. Ու Ժամանակն
 Եկած հասած է իր կէտին:

ԱՄԷՆ-ՔԸ. Վայ եւ եղ՞ուկ:

ԱՆՏ. Թող իս սիրո՞ղը
 Ջարնէ զիս լըմընցընէ:

Ա. ՊԱՀ. Ո՛չ ես:

Բ. ՊԱՀ. Ո՛չ ալ ես:

Գ. ՊԱՀ. Եւ ոչ որ:

(Պահակները ինչպէս)

ԴԵՐ. Մահէդ՝ բաղդէդ սաղրուած հետեւողներդ կը փախչին:
 Այս լուրին հետ երբ ես այս թո՛ւրը լոկ ցուցնեմ Կեսարին,
 Աչքը մտնել կուտան ինձի:
 (Կը մտնէ Իերկեբաս)

ԴԻՈ. Ո՞ւր է Անտոնիոս:

ԴԵՐ. Հո՛ս, Դիոմեդ:
 Կ'ապրի՞ մա՛րդ, պատասխան տուր:

(Կը մտնէ Իերկեբաս)

ԱՆՏ. Դիոմեդ: Սուրբդ քաջէ՛, ու բաւարար հարուածներ տուր
 Ինձ մահուան:

ԴԻՈ. Մեծագոր իշխանըդ իմ, տիրուհիս
 Կէտպատրա զրկեց զիս Ձեզ:

ԱՆՏ. Ե՞րբ զրկեց քեզ:

ԴԻՈ. Հիմա, տէր իմ:

ԱՆՏ. Ո՞ւր է նէ:

ԴԻՈ. Իր դամբարանն ամբարակ: Նախազգարար
 Վախ մը վրան կար այս եկած պատահածէն, զի երբ տեսաւ
 — Բան մը որ բնաւ տեղի չունի — թէ Դուք կասկած ունիք վրան թէ
 Կեսարի հետ յարմարած է, ու Ձեր գայրոյթն անբոյժ է,
 Ձեզ լուր զրկեց թէ մեռած է, բայց վախնալով յետոյ թէ ի՞նչ
 Արդիւնք կրնայ աս ունենալ, զիս զրկեց Ձեզ ճշմարտութիւնը

- Յայտնելու. և կը վախնամ, շատ ո՛ւշ եկայ :
- ԱՆՏ. Երանուշ, աղնիւ
Դիմեղ: Խնդրեմ կանչէ իմ անձնապահս :
- ԴԻՌ. Եկէ՛ք, Տօ՛
- Անձնապահ կայսեր օ՛ն : Անձնապահներ, օ՛ն եկէք :
Ձեր կայսրը ձեզ կը կանչէ :
(Կ-Յ անջնապահներ Անտոնիոսի կը մոնեն)
- ԱՆՏ. Տարէք զիս բարի մարդեր, Կէտպատրի կեցած տեղն :
Այս վերջին ըսպան է որ ձեզի ունիմ Տրամայելու :
- Ա. ՊԱՀ. Վա՛յ, վայ մեզ, տէ՛ր, որ կարող չէք ապրիլ մինչև Ձեր բոլոր
Հաւատարիմ հետեւորդնուդ մաշել սպառելն :
- ԱՄԷՆ-ՔԸ. Ի՛նչ ծանր օր :
- ԱՆՏ. Մի՛ մի՛, բարի՛ իմ մարդերս, մի՛ դժնէ բա՛ղրը գո՛հ ընէք
Ձեր վիշտն իրեն նուիրելով. մեզ պատժել եկողին
Բարի գալուստ մողթեցէք, ու մենք ան պատժած կ'ըլլանք
Թեթեւ առնել թուելով : Վերուցէք զիս, ես ձեզի
Առաջնորդած եմ յաճախ. հիմա դո՛ւք, բարի մարդեր,
Ձիս տարէք, ու տմենուն փոխարէն շնորհակալիքս
Ընդունեցէք :
- (Կը մոնեն Անտոնիոսը պառելով)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ե

Նոյնը. — դամբարան մը .
Կը մտնեն Կէտպատրու ու իր նաժիտները վերել ,
Եւրմիանի ու Իոասի հետ :

- ԿԼԻՌ. Եւրմիան, երբէք հոսկէ ես պիտի տեղ մը չերթամ :
- ՇԱՐ. Միտեցեալ Տիկին, սիրտիմ բերէք վրանիդ :
- ԿԼԻՌ. Ո՛չ, չեմ ըներ .
Անորինակ, զարհուրելի ամէն դէպքեր թող քան բարի ,
Բայց սիրտիմ մենք կ'անգոսնենք . մեծութիւնն իսկ մեր վշտին ,
Մեր գատին հետ զոյգ համեմատ, զայն ծընողին հետ համաչափ
Պէտք է ըլլայ :
- (Կը մոնէ, Վարէն, Դիմեղ)
- Ի՛նչ լուր, ինչպէ՞ս, մեռած է անիկա .
- ԴԻՌ. Մահը մօտ է, բայց չէ մեռած : Գամբարաննուդ միւս կողմէն
Նայեցէք : Անձնապահներն առին հոս զինքը բերին :
- (Կը մոնէ, Վարէն, Անտոնիոս, զար անջնապահները վերուցած կը բերեն)
- ԿԼԻՌ. Ո՛վ արև, այրէ՛ այն ծի՛րը որուն մէջ կ'ընթանաս ,
Խաւարամա՛ծ թող մընան փոփոխ սփունքն աշխարհիս :
Ո՛վ Անտոնիոս, Անտոնիոս, Անտոնիոս : Օգնէ՛, Եւրմիան ,
Օգնէ՛, Իոաս , օգնութի՛ւն : Օգնեցէ՛ք, բարեկամներ ,
Վարը հող : Եկէք քաշենք զինքը հոս :
- ԱՆՏ. Հանդարտեցէ՛ք :

Ո՛չ կեսարի քաջութիւնն է որ զգետնեց զԱնտոնիոս
 Այլ Անտոնիոս՝ իր քաջութիւնն է որ յաղթեց ինքզինքին :
 ԿԼԷՈ՝ Այդպէս պէտք է որ ըլլայ . ո՛չ մէկը բայց Անտոնիոս
 Պէտք է նուաճէ զԱնտոնիոս , բայց արտո՛ս որ ատ ըլլայ :
 ԱՆՏ . Կը մեռնիմ արդ , թագուհի , կը մեռնիմ . միմիայն հոս
 Մահն հիմա պահ 'մ յամենալ կը թախանձեմ , մինչև որ
 Բիւր հազար համբոյրներու յետինը հէք զետեղեմ՝
 Շուրթներուդ վրայ :

ԿԼԷՈ՝ Սիրելիս , չեմ համարձակիր . սիրեցեալ
 Իշխանդ իմ , ներողութիւն կը խնդրեմ , չեմ համարձակիր ,
 Ար չըլլայ թէ բռնուիմ : Լիաբաստիկ կեսարի
 Յաղթողական հանդէսն երբէք պիտի ինձմով չհիայլի
 Գոհարազարդ : Եթէ դաշոյն , դեղ , օձ ունին բերան , խայթ կամ
 Ազդեցութիւն , զերծ եմ վտանգէ : Ք . Լ ամուսինդ Հոկտաւիա՝
 Պարկեշտասուն իր աչքերով ու հանդարտիկ դատումով
 Պիտի պատիւ չի ստանայ շնորհունակ նայելով վրաս :
 Բայց եկուր , օ՛ն , եկուր վեր , Անտոնիոս . . . օգնեցէք ինձ ,
 Նաժիշտներս , պէտք է մենք քեզ վեր քաշենք : Օգնեցէք
 Ազնիւ ընկերք :

ԱՆՏ . Ա՛հ շո՛ւտ ըրէք . եթէ ոչ հատած եմ ես :
 ԿԼԷՈ՝ Ահա բուն խաղ՝ զբօսանք : Արքան ծա՛նր է իմ իշխանս :
 Մեր ուժն ամբողջ գացեր է ծա՛նրը վշտերնուս , որ բռնն այսպէս
 Կը ծանրացնէ : Կուզէի մեծ Հերայի կարողութիւնն
 Աւնենալ : Կորովաթեւ քեզ Հերմէս պիտի կըրէր
 Վեր բերէր ու՝ Արամազդի քով զընէր : Սակայն քիչ մ'ալ
 Եկուր վեր . . . «Կուզէի» ըսողներն անմիտներ են եղած միշտ .
 Ա՛հ , եկուր , եկուր , եկուր :

(Վեր կը տալէն Անտոնիոսը Կլեոպատրայի տով)

Աւ բարի՛ , բարի եկար ,
 Մեռիր հո՛ն ուր սպրեցար : Համբուրելով ողջնցիր .
 Եթէ շուրթներս այդ գորութիւնն ունենային , պիտի այսպէս
 Մաշեցնէի ես զանոնք :

ԱՄԷՆ-ԲԸ Ի՛նչ գժնգակ տեսարան :

ԱՆՏ . Կը մեռնիմ արդ , թագուհի , ես կը մեռնիմ :
 Քիչ մը գինի տուր ինձի , ու թոյլ տուր որ խօսք մը խօսիմ :

ԿԼԷՈ՝ Ո՛չ . թող որ ես խօսիմ ու այնքան սաստիկ առակեմ որ
 Բախտը՝ այդ կի՛նը պատրոզ՝ թշնամանքէս զրգըռուած ,
 Ինք իր անիւր խորտակէ :

ԱՆՏ . Մէկ բառ , անո՛ւշ թագուհիս :
 Նայէ որ կեսարի շընորհել տաս քու պատիւդ ու
 Անձիդ անվտանգ պահպանումն :

ԿԼԷՈ՝ Ատոնք մէկտեղ չեն երթար :

ԱՆՏ . Ազնիւ՛րս , մըտիկ ըրէ , կեսարի շուրջն եղողներէն
 Պառկուլոսի միայն հաւատք ընծայէ :

ԿԼԷՈ՝ Ես իմ մտքիս

Աւ ձեռքերուս կը հաւատամ , ու ոչ մէկուն կեսարի շուրջ

Հիմա կեսանքիս վախճանին այս եղկելի փոփոխումն

Ո՛չ ողբա զուն , ո՛չ կըսկըծա , այլ քու մտքիդ հաճոյք տուր

Իմ նախնիս վիճակիս վրայ որոճալով, որուն մէջ
 Ես կ'ապրէի աշխարհիս ամենէն մեծ իշխանն ու
 Ամենէն բարձրահոգին, ու հիմա չե՛մ ես մեռնիր
 Ստորնաբար, հայրենակցիս վատօրէն չե՛մ իմ սաղաւա՛րաբա
 Հաներ — այլ իբրև Հոռոմայեցի՛մ ինքզինքէն
 Արիաբար նուաճուած: Ա՛լ կը սպառի ոգիս, ա՛լ
 Չեմ կարող:

ԵԼԷՌ

Ո՛վ վեհագոյնը մարդոց, մեռնի՞լ կ'ուզես.
 Իմ վրաս փոյթ չունի՛ս բնաւ: Ես ի՞նչ ընեմ այս անհամ
 Աշխարհքը մնամ, որ առանց քո՛ւ ներկայութեանդ՝ խողանոցէ
 Վեր տեղ մը չէ: Ո՛հ, նաժիշտներս, տեսէ՛ք, տեսէ՛ք: Աշխարհիս
 Թագը պարծա՛նքը կը հալի կը սպառի (Անդրանիկ կը Քանի) իշխանըս...
 Օ՛հ, թողմեցա՛ւ ծաղկապրսա՛կը մարտի, զօրականի
 Կոթողն ինկաւ, մատղաշ տըղաք ու աղջիկներ հիմա հաւսար
 Են մարդոց հեա, տարբերութիւն ընողը գնաց: ու այցելող
 Լուսնին ներքև բան չի մընաց երեւելի: (Կը նոսալէ)
 Հանդարտեցէք

ՇԱՐ.
 ԻՌԱՍ.
 ՇԱՐ.
 ԻՌԱՍ.
 ՇԱՐ.
 ԻՌԱՍ.
 ՇԱՐ.
 ԿԻԷՌ.

Ո՛հ, վեհ տիկին:
 Մեռա՛ւ զընաց մեր մեծահոր թագուհին ալ
 Իշխանուհի:
 Տի՛կին:
 Ո՛հ տի՛կին, տի՛կին, տի՛կին:
 Արքայազարմ թագուհիդ Եգիպտոսի, կա՛յսրուհի:
 Սուս, սուս, Իռաս:
 Այլ եւս չեմ, այլ սո՛սկ կին մը միայն, ու կնթակայ
 Այնպիսի խեղճ կըքի յոյղի որպիսին կաթ քամող ու
 Ամենաստոր գործեր ընող սպասաւոր կինը կըզգայ:
 Ինձ կը վայլէր հիմա մակա՛նըս նետել վընասառիթ
 Աստուածներուն, իրենց ըսել թէ այս աշխարհս հաւասար էր
 Իրենցինն մինչև որ մե՛ր անգին գոհա՛րը գողցան:
 Ոչնչութիւն է ամէն բան: Համբերութիւն անմիտներուն
 Յատուկ է, ու անհամբեր ըլլալ կատղած շան կը վայլէ:
 Ուրեմըն մե՛ղք է միթէ մահուան գաղտնի տունը խուժել,
 Մահն ինք մեզի չի յանգգնած դեռ գալու: Ի՞նչպէս կըզգայք,
 Իմ նաժիշտներս ի՞նչ կայ, ի՞նչ կայ: Զուարթ եղէք: Ինչո՞ւ, ի՞նչ կայ,
 Շարմիան: Ազնուակա՛ն աղջիկներս: Ա՛հ կանա՛յք,
 Կանայք, տեսէ՛ք, մեր ճըրագն ալ հատած է, մարած է:
 Ազնիւ կանայք, սի՛րտ առէք: Մենք կը թաղենք զանիկա,
 Ու յետոյ, ինչ որ վեհ է, ինչ որ գործ է արիական
 Հոռովմէական բարձրը կերպո՛վ զայն ընենք, ու մահն
 Հըպարտ ընենք մեզ առնելուն: Օն երթանք: Այդ հոյակապ
 Հոգիին պատեանն հիմա պազ է ալ: Եկէք, երթանք:
 Չունինք ուրիշ բարեկամ բայց միայն հաստատ խորհուրդ.
 Ու ամենէն կարճ վախճան:

(Կը Քանի վերջնէրը, դանելով Անդրանիկի անընացած բարձրը)

(Շարունակելի) Թրգւ. Ի. ՓՅՈՆՍԱԿ

ԱՐԵՒՍ ՏԱՐ, ՄԱՀՍ ԽՐԿԷ

Մեր Տեղապահին հետ սարդի կարճ ճամբորդութիւն ճր մէկ-երկու շաբաթ առաջ, Խոյու կ'երթանք, մեր գեղը: Մէկրէէն երկու ժամ հարաւ ծօղիկ շէն ճըն է 2-3 հարիւր տնւորով, բայց որը ինծի համար տարիներէ ի վեր Բեւեռի ճր հեռաւորութիւնը ունի և ունեցաւ ճանաւանդ այն արտում իրիկուններէն ի վեր, երբ հոն ձօրս թոնիրին վերջին կայծերն ալ ձարեցան. անկէ առաջ անյայտացածները մեր տունին միւս հանգաններուն գերեզմանատեղերը եղած էին, մնացածը խաղողի այգի ճր ու քանի ճըն ալ անջրդի արտեր անուիկներ միայն, ասոնք ալ ես լքած եմ որ խլուրդն ու կրիաները ճշակեն, չքսելու համար թէ՛ ան էզին ու արտերն ալ ինձմէ մեռցուեր են, բայց որոնք իրենց այս վիճակովը ինծի հաւատարմ ուրախութիւն ճր ապահովեր են թէ՛ ալ ես ինքս կապիտալիզմ պուրժուայի ճր մեղքերէն ազատ կը մնամ կարծեմ: Բոլոր գեղաբնակներուն հետ ճամբուն ճամբորդն ալ գիտէ թէ ի՛նչ համ ու գոյն ունին մեր էզիին թուիին ու խաղողը, որոնցմէ ան ցանկապատին գող ճ'նճղուին ու սարեկներն ալ ազատ յարձակումով կամ հաւասարապաշտ Գալիլէի ճր համաճայն, իրենց բաժինները կը փակցնեն: Իրաւ որ ասոնց հերտուութիւնն ալ դուրեկան, «Մեռնողին կինը, ճուցուողին ալ ճալը»...

Ան օրը, Հայր Ասլանեանի ստիպումներուն ճեմ ուզեր առարկել. շաբաթ օր, վաղը կիրակի, հոն պատրաստ կառքը, կը գնանք արդէն, երկու ժամէն պիտի հասնինք, միայն քիչ ճր ան իրիկնապահի դաժան անպերուն սպառնալիքը կայ, միայն թէ՛ ինծի համար ուրիշ ճասճութիւն ճըն ալ — ի՛նչ սպունգ գործածել, որ համակրելի ուղեկցիս՝ սպաւոր վարդապետ ճր իր բոլոր կեանքին մէջ — շրթունքին ճորճներէն բան ճր ճի տամ պարապը ու անբողջ խմել կարելիացնեմ:

Գարունին կուրճքէն կ'անցնի մեր կառքը, աղւոր է, բայց իմ հոգիս անկէ ճի տարուիր շատ: Վարդապետը այնպէս ճըն է, որ իր հետ այսչափ սեղծօրէն ճանբու ընկեր եղող ճր դարունին կարմիրին ու ան կանանչներուն ալ կողմը ճյլտի ուղէր նայիլ: Այն կարմիրը ճանաւանդ, կարմիրին լերդ եղերերգն ու շառայլ արճակները այնքան շատ տեսանք, այնքան շատ լսեցինք որ քիչ ճր մեր մէջն ալ կարճես այն գոյնին վառքէն խրոչող ցուլերուն խենթ ջղախուժիւնը պտկամ եղաւ: Կարմիրին պատճառներէն Բինկեանցի վարդապետն ալ գիտէր արդեօք, նա որ օր ճր, աշխարհի ճարդ տակաւին — իր պաշտելի հերտուէին ու երկու ճաւանները անմեղուկ, Բինկեանը վառող կարմիր բոցերուն էր որ տուաւ և ուխտեց սպաւորի իր մեճ ու մեռուցիլ ուխտը:

Կառքին մէջը ու մեր մէջ բոլորովին, այ՛ր, գարունով ճենք հետաքրքրուիր, վարդապետը խօսքին մնացածը հիմա վերջացնելու համար, կ'ըսէ թէ

ինչո՛ւ կ'այցելէ այս գիւղը ու նոյն գիճով ուրիշներն հետգնետէ, որ դաշտամէջի հայ գիւղերուն կարեւորները կը ճանչցուին:

Դէպ ի այս առաջին տեղը ճիս ալ իրեն ընկերացուցած՝ իբր թէ պիտի կրնամ ես ալ իրեն խորհրդատու ճր ըլլալ ճեմ գիտեր ինչպէս, կ'շտապէ հոն ըլլալ որ տեղին դպրոցը ազատէ այն քանիճըներուն ճեռքէն, որոնք ինչպէս քիչ ճր ես ալ լսեր էի, տարիներէ ի վեր, այլ յաճախ վերջին աստեաները, առիւճի կուրներ կը ճղեն այն նկատմամբ գեղին թաղական կրուբին հետ ու պաաճառ կ'ըլլան որ երկու պատկից ու սրտով ալ մերձ կից ճրացնիւր իրարու հանդէպ ճառ ու ճայտ ապրին: Առիւճները՝ ուրիշ անունով ճր՝ մեր այն նուշ ու շաքար «տղերը», ճէ՛ր հասկցուեր թէ՛ որոնք կրնան ըլլալ որ նա անունը ճի տալիք արտասանմանէն դարճած՝ հէնց դեռ առջի օրէն ալ իշու կանկառը եղաւ կոխած գետիներուն վրայ բուսուցածնին, մինչ երկրացին կ'սպասէր որ իր կերած ցորենի սեսակներէն անոնք աւելի գեղեցիկ ու լիցուն տեսակը պիտի գան ցանել ճշակել: Կառքը կը գորգըռայ, կը վէտովետի խորաբուրս ճանբու ճր երկայնքին, ճիբըրը երկու հոգիի թեթիւ բեռով ճր հեղտոտ, ճուրթը ստատատմներ ճր կ'ընեն կառապանէն մեղծօրէն ճորճախուած, վարդապետը կը հասկնամ թէ՛ շատ լաւ աստեն է գտեր կառքին վտանգաւոր ճիւղներէն իմ առած ճեւերուս խնդրալու, ինք անխղով կեցուածքի ճր մէջ, ու կուտամ իրեն ականջս, որ իր ճանբորդի կեանքէն պատուէ, եթէ կրնամ լսել: Ըսէ, Հայր Ասլանեան, վրայ կը բերեմ, սբւի ո՛ր մէկը քու անցած ճանբաներուդ, Պոլիսէն Իջմաճի՞ն թէ՛ Պոլիսէն Առանա... ճուխիրը խառնշուկելու անհարկիւթիւնը իմս; ու պահ ճր ի՛նչ պուրթիւմներ անկէ, որ քարին, երկաթին վրայ ալ ճեկ հեաք ճր կը ճղեն:

Իր բոճին նայելով, դէպ ի Արարատ ոսկեգեղովն արշաւանքն է եղիր ըրածնին, ընտրուած խումբի ճր հետ, իսկ Վասիլուէն Առանա, ինքնակամ անճնասպանութեան ճր խենթ խոյանքը ճշղիւ: Խենթ վաղը ճր կ'ըսեմ, այ՛ր, դուն ան աստեաները ուղղակի բոցերուն էր որ գացիր քու վերջին գոճդ տալ, ճի վախցա՛ր երբէք: — Վասիլալ ի՛նչ բանէ, իմ բարեկամ, կը պատասխանէ, ես գացի հոն որ փոթորկոտ դատանքներու յաճախանքէն լլկուած հոգիի ճր պահանջը լուեցնեմ, ինծի համար այնքան սուրբ պահանջ ճըն է այն, բայց կը ցաւիմ որ նորէն ողջ մնացի, և այս անոր համար կ'երեւի, որ կրակներուն վարժուած թոնիրին ճղրիղը եղած ըլլամ ես ալ: Ակնայ ու Բինկեանի կրակներէն ողջ դուրս եկող ճր ալ բանէ ճր ճի սոսկար, ճի սասանիր, արիններով տապալուած կաշիի ճր հետ բոցերով թրճուած ոսկորներն ալ իմս եղան. — Ըսել է, իրա՛ւ էին ինչ որ կարգացնիք այն աղէտներուն վրայ, թերթերը ճէի՛ն ճափազանցեր: — Ես բառ ճուճիմ, որ իմ տեսածներուս գէթ մէկ թերատուերը կարող ըլլամ որակել, այն թերթերուն բերածներն ալ սոսկ խորագիրներ էին ու ոչինչ ուրիշ, միայն սա գիտնայիլ թէ՛ ԳՅԻ դէպքերուն էն աղէխարջը ու դժոխայինն անգամ նայելով ճանաւանդ Գօլուբի մէջ պարզուածներուն, անոնք բոլորը ճրպ-

բոցականներու գնդակախօլին պատճառաւ քերթուքներն ալ չէին, կամ ուրիշ խօսքով, Լէնկիթիմուր և ուրիշներ բար իրենց հրէշայնութիւններուն ու ժովը հէնց քիչ ճիւղ հալուն քիթը ճանկած եղեր են նայելով ան Աստուան ու աստանացի հայը մէկ օրէն միւսը հովերուն առաջը նեղող կատաղութիւններուն :

Կրակը, սուրը, Սիհունը բան ճիւղ ձգեցին բնաւ, գայի, աս աչքերովս տեսայ երկուքն ալ : Անին իր ծերացած աւերակներով աւելի շէն քաղաք ճիւղ միւսէն . Աստուան անորջրհեղեղեան հեքեաթ ճիւղ միւսն : — Հայերուն կողմէ ինքնապաշտպանութեան փորձ ճիւղ դնէ : մենք բեցինք որ . . . : — Փորձ ճիւղ . յուսահատ փորձ ճիւղ միւսն , աւելին պէտք չկայ հաւատարմ , ու դժբաղ ճակատագրականութիւնով ճիւղ հայ աղայ աչք կորիճ կեցուածքն ալ զիտեք թէ վերջը ի՞նչ արժեք իրենց համար : Կուտակալ ու էշ-րէֆ ըսուած գաղանները ամէն հաշիւ , ճրագիր ժամանակին արդէն շատ աղար պիտցիր են փակել : — Բիջ ճիւղ ան օրերը ըտողներ եղան թէ՛ Հայերն ալ հան խենթ բաներ ճիւղ ըրեր են Արատութեան ճայնի-րուն յաւէա աղար արձագանգներով ու անտանելի պուշտուքներով պատասխանելով : — Բայց է ի՞նչ աչքպէս , եղբայր , ես քու աչք միտք պահածիդ ալ ցնորածի խօսքով ճիւղ պատասխանեմ . ի՞նչ կ'ընէիր դուն ալ երբ քու մեռած ճուղայճներդ յանկարճ հողին կուրճքը պատուէին . ու դուրս պտտիլային , ի՞նչ կ'ընէիր , երբ նոյն օրը ու հրաշայտօրէն նոյն ցորեկ օրին , քու մէկ թանկագին կարուստիդ գունեղ զուգաղկալէր . ու միւս կողմէն դու այն հաւատարմ ալ նետէին մէջը թէ՛ նա Մեծ Հիդրային երաւն քանի տարիներու հայ միս բղբաղ երաւն քանի սկուանեին ալ քաշած՝ ճիւղ շան ճիւղ կրումին մէջ փակել են դան , լսէ , ի՞նչ կ'ընէիր , աս վարկեաններուն . միայն երգը . միայն խենթ պուշտուք-ները կ'ըլլային քու խճղանքիդ տեսակները , ու ասչափն ալ ինչո՞ւ շատ պիտի տեսնային պատկից մեր գրացիները , սրանց հետ դեռ առջի օրն էր որ , աղբօր աղբորդի ճաճբոյններ ուխտեր փոխանակեցինք , սըսոր մէջ ի՞նչն էր անտանելիութիւնը Ատա-նացիին , չէ՞ մի որ ան օրը մենք ամենքս ալ երէ-կինը չերեւարու ջանք ճիւղ կ'ընէինք , ու շատն ալ անոր համար որ մեր թշնամիներուն անկեղծօրէն հաւատալ տանք թէ ներեր ենք իրենց , հայը իրա՛ւ աղնիւ , իրա՛ւ ասպետի ողիւ եղբայր ճիւղ նոյն արամաղութիւնով իրեն ձեռք պարզօրներուն . :

— Մերսին համուղ նաւերը օգնութիւն ճիւղ չըրին երբէք : — Երբէք , երբէք . ճովին ճուկերը աւելի տարարին զգացումներ ճիւղ ցցուցին դէպ ի խոշտանգուած Հայը , քան նա շիկամորթ ջրշուն-ները՝ նաւապետ , նաւաղ , որ իրենց քահնային ու քրքիջներուն ըճբոշխումովն մէջ տեսածնին ըստագ-րելու « քէֆ մը կը հանէին » . միայն անոնց անտար-բեր ներկայութիւնը հոն , ինչպէս աստիկն հայ թեր-թերն ալ գրեցին , պատճառ եղաւ որ իսլամ փան-տալը աւելի համարձակ ճօճէ իր սուրը : 5-6000 ճիւղ ալ անոնց աչքերուն տակ կը ջարդուին : — Անէնէն վերջը հէք Պապիկեանն ալ վրայ գնաց , անոր եղբրական փոխճանն ալ երբէք չուպտուածք : — Պապիկեանն ալ , այժ , խեղճ ճարգը բայց նոյն

աստն աչք ընտիր ու ճշմարիտ Հայը , կրակին դէճ բւռուած ճովի ճիւղ պէս կը հալէր , երբ բաները աչ-քովը կը տեսար , ու ճօտէն ականջովը կը լսէր պատմուածները պաշտօնական դաւաճանութեան ճիւղ տեսակին հետ թուրք ամբոխին ալ գորճած եղեւնին աննախընթաց ճայրայտութիւններէն :

Պապիկեանը , գնաց որ վերապրող Հայերուն արցունքը սրբէ գերագոր կարողութիւնով ճիւղ , բայց այն մէկն ալ ճեռաւ ու իսլամը խնդացուց , դուն , լսէ , հեթանոս ճտածողութեամբ ճիւղ թէ՛ Աստուած ալ անոնց էշրէֆներէն է . կամ անոնց Ալլահին ու մեր Աստուան միջև մեճ անջրպետ ճիւղ կայ :

— Հարցում ճիւղ ալ ճիւղ ճերունի հայրենակցին՝ Ս. Կաթողիկոսի վրայ կ'ընեմ . երկու երեք տարի առաջ եկաւ իր գեղը աչքերեց , բայց ի՞նչպէս կա-կածէր թէ՛ շատ ճանցած քիթէն պիտի գայ հայ-րենիք ու հայրենակիցները տեսնարու երջանկութիւնը , միտք է որ նա իր գուարթ փորկեաններուն ալ հոս , իր գէճքին վրայ ճուայլ ամպի ճիւղ ներկայութիւնը կ'զգացներ . ինք արդեօք երեք տարի առաջ գուշա-կած ըլլար իր և իրեններուն գլխուն գալիքը , ճենք ան աստն քիչ ճիւղ Համաի հովերուն կը վերագրէինք անոր այն արտուճ իբրումին ճեւերը : — Կաթողիկոսը իր հողեկան լիւումներուն մէջ , կ'ըսէ , պատանջուած ճեւել ճիւղ է որ գերեզմանը չէ սակայն , կ'աղբի տակաւին , ու անոյս չըլլարու արիւթիւն ճիւղ կը ցուցնէ , հակառակ որ ի տես աւերանքին սրբանու-թեանը , ամէն օր ալ արին կը փսխէ : Կաթողիկոսին ներկայութիւնը իր սիրական հօտին ճօտն ու քովերը՝ ճսխրուած եկեղեցիներուն տեղը կը լեցնէ ու անոյսին ճիւղ թարութիւն ճիւղ ամբողջ կիլիկեան թեմին :

— Բարբ աչք ժամանակներուն չէ՞ք կարծեր որ տրոճութեամբ իտեղտեղուճ ճիւղ ալ բարեկամս Մ. եպիսկոպոսը եղաւ . բայց ինք շատ զինճ մէկը . որ ողջ կը մնայ տակաւին : — Ողջ՝ ու փտտահ եղիք թէ պիտի դառնայ ալ նորէն , անոր ճատին ճեռած ամբաստանութիւնները սև գրպարտութիւն հասկնալ բացայայտօրէն , զինք չի տանողները պատեհութիւն դաճ սեպեր են որ Հայ ճատիկը քիչ ճիւղ ալ իր արինովը կարճրցեն , բայց չէն կրցած , ան աստն-ները Երիպտա կը գանուէր : — Կ'ըսեն սճանք թէ գիտումնաւոր հեռացում ճիւղ է եղեր աչք : — Աչք մէկն ալ հայ ասերտասաններու յերիւրանք , զրպար-տութիւն , չէ՞ք գիտեր թէ՛ թշնամին երբ քար չի գտնայ , հող կը նետէ երեսիդ :

* * *

Կը խօսինք , կը խօսինք , կը խօսինք : Արամ-եան փարգապետի տպաւորութիւններուն նայելով , ինքն ալ անճամբ տեսած ըլլալով մէկտեղ Աստուան կարճանող չարիքներուն անոյսութիւնը , անոյս ճիւղ չէ բարբոլին , ունի սրտապնդող ճտածելու կերպ ճիւղ թէ՛ Աղլը եթէ պայն վերականգնելու ներկայ անկեղճ յաճախանքներուն մէջ թուլացումի ճիւղ չի միտի , ու եթէ հոն վերապրելու բարդաւորուածներն ալ խել-քերինն գլուխին հիմա քան երբէք , իսլամ ջար-ջացումն , հայալայել ջարջացումն ու խտող հետապն-

դողները ըլլան, առաջինէն աւելի փայլուն քաղաք
 ճը պիտի ճնի Առանան, երկրորդ շէն Եգիպտոս ճը
 Ամերիկեանին դրացի, կամ կ'ուզէք, ճատչելի, ճոխ
 ճանրանկարը անգրովիկիանեան Ամերիկային, որ աշ-
 խարճը կը կշտայնէ իր կատարուն առաջդիմութեան
 ու զարգացումին ամէն բարիքներովը:

Պահ ճը կը փոխենք խօսքը, ուստիայ իրա-
 կանութիւններուն կը տարուինք, վարդապետը այն
 կողմերէն ալ քիչ բան չի գիտեր, ու իմ մէկ հար-
 ցումս ինք տասը պատասխանելու հեշտ յօժարու-
 թիւն ճը կը ցուցնէ, Պոլիսէն մինչև Էջմիածին
 հետաքրքրող, սիրուն ողիականներու շարք ճը, իր
 ճանբողի տպաւորութիւններուն զրեթէ ամբողջ
 ճանրածանութիւնները կը պատմէ ու կը հաստատէ
 որ դէպ ի Արարատ իրաւ յոյսերով վքը արշաւանք
 ճը, իրաւ ոսկեգեղմին... Իգմիրեան պատրիարք
 ճը այն տեղը, որ միլիոնաւոր Հայերու անրջանքին
 մեկնակէտը կը մնար սև տարիներու շարքի ճը մէջ,
 չի ճեռած Հայերը այդ իրենց մէկ բաղճանքին իրա-
 կանացումս ալ տեսան, ազգովին արդեօք ի'նչ եր-
 ջանկութիւն պիտի ըլլար խմածնիս, կամ դարերու
 տառապանքին կակիծը ի'նչպէս հրաշալիօրէն մէկ
 վայրկեանի մէջ պիտի ճոռնայինք, թէ որ այն ինչ
 կողմերէ ալ բոցերու մէջ խորովուող հայ ճայրերու
 ու փոքրիկներու հօգի դադող ճ'իչերը խնայուէին
 ճեր ականջին:

Բայց, ա'խ, աս ժողովուրդը ճեճ անէճքի ճը
 յաւիտենական նշաւակը եղած ըլլայ կարճես ու քիչ
 ճը մէկը ճոռնալու իր բունաճ'իգ դապումներուն մէջ
 տակաւին, կը հանդիպի յանկարճ ուրիշ ցաւ ճը
 վայել:

Վաղը, վարդապետ, երբ աս օրուան սուգերն
 ալ դադրին ճախով ճը ճեղնէ արցունք քճեթէ: Ճէք
 կարճեր որ ուրիշ ճիւան ճը պիտի ճեռայնէ Հայր
 ուրիշ կրակի ճը մէջ, որ Առանան լափիզող կրակ-
 ներէն աւելի սպառնական ու ահաւոր կը թուի ըլլալ:
 — Գիտեճ ի'նչ կ'ըտես. այո', կը պատասխանէ օ-
 դեկիցս, ես քու ան ակնարկածներդ ալ ճոռնէն
 տեսայ. ճատ ճոռնէն ճփուեցայ հետերինին, այդ
 փորճութիւնները արդէն բնաւ անուն ճոռնին: —
 Անճն, ի'նչպէս ոչ, Հայ են անունք ալ, Ճէ',
 Հայեր, բայց, որունք ճգէ որ ես բեճ քեզի թէ'
 ասանացի Եախշիին բռնկցուցած կրակներէն ճատ
 աւելի գէշ բանն է որ բնել որոշեր են ու պիտի
 բնեն աս ժողովուրդին գլխուն. անունց ճոշականքները
 հոս ալ Ճէ'ք տեսնար մի որունք, բայց սա յաւէտ
 ողորճելի խեղճութիւնները «նա տասց» ճը սպուշ
 նախապաշարունովը ճուաք ճարտուորած ամէն կողմ,
 սրունց բոպիկ, գլխիբաց միսինարը ամէն երգիքի
 տակ, Համրտի անգամ ճոքէն ճանցածները իրենք
 լարած են ճանրայնել ճախջախուած արդէն հոյ
 էութեան լանջքին: Դահիճ'ները', եթէ ամենէն
 վերջ աս անունը պիտի տային ինքզինքնուն, ինչո'ւ
 օրին, փորի վրայ ճեկան ու ճի սողացին անոր ճոթ
 որջը, ուր ան Երթուրդի կարմիր Վամբերը ճատ աղէկ
 պիտի գրանար վարճատրել գրիենք, իրենց հայա-
 պան գորճունէութիւնը՝ այնքան լեցուն փոխարէնով:
 — Բայց վտահ եղիր թէ' հոյ ժողովուրդին ողջմիս
 մեճամանութիւնը տեղի ճպիտի տայ անանկներու
 ստեղծած հասանքներուն ու պիտի տեսնուի թէ' օր

ճը անունք իրենց հաչակել փորճած ու քարոզած
 բարոյականներուն վրայ իրենք իրենց ճոռններովը
 պիտի կախադանուին, թող քիչ ճրն ալ ցատկունն,
 քիչ ճրն ալ ճաղակրատեն, ճպուաը կեանք ճունի,
 վերջապէս մենք քիչ ճը խուլ մնալու հաճբերութիւնը
 սեննանք ու պարաքերնիս կատարենք ճշճարիս
 Հայս կեցուածքներով:

* * *

Ուր որ պիտի հաննէինք ահա, կառքը դեղին
 փողոյներուն մէջ աւելի գէշ ճեռ ճը կ'առնէ, բայց
 մենք անկէ մեր ճիջնալու յաճառութենէն հեշտ ճենք
 հրաճարի: Կառքին պատահանէն վարդապետին
 բարեւի կերպերուն ետեւէն բարև ճրն ալ իմ ճեռքս
 կը խրիէ փողոյին աջ ճախը տաքի կեցող ճանթի
 անճանթի հայրենակիցներուս, որունցմէ ոճանք կա-
 բօտով օճուն ճպիտներ ճը ունին երեսունն վրայ
 ինճի իրենց պատասխանելու ճեռերուն մէջ: Կ'զգած
 վարկենապէս թէ' իմ մէջս ալ հին յուշքեր ճը կը
 ճէնտարին, կը ճանչնամ անունք, ի'նչպէս ճէ, ճա-
 տերը իմ տարեկիցներս, իմ խաղընիերս, մէկ քանին
 դեռ արքան ալ հեռաւոր ազգականներ, բայց որունց
 հետ կ'ուզեմ անմիջապէս որ վար ցատկեճ ու հօր
 ու սղբօր գրկաըւուք ճը բնեճ, այնքան անուշ ու
 բնատանի դէճքեր բոյսրինը: Սևերու մէջ պատաս-
 ճած ճերուկ կնիկներու այն խուճրին մէջ ճայրս
 տեսնալու խեղաչելիչ պաարանքը կ'ունենամ: Աճէն
 կողմէ այս կեցուածքը, Գիւնքի ու ակնաճանքի
 դեղուն անկեղճ այս արտայայտութիւնները, որունց
 ճատը ես վարդապետին կը հանեմ բաճին, մնայաճը'
 գուտ գորովանքը հայրենակիցներուս կուրճքերէն
 արտահոսուած, ինճի կը թողում: «Վարդապետին
 հետ մեր վարճապետն ըլ է եկեր, Օվանէսը, Օվա-
 նէսը, Սառային տղէն, մեր Օվանէսը Ճէք ճանչ-
 նար»: Մինչև դեղին անդիլի ճայրը գեղջիւղեհինե-
 բուն այդ խուրբարիւնները ականջնուս, հոն Մակար
 բղանն ու ուրիշներ մեզ զիճաւորդները կ'ըլլան ու
 ի'նչ անճնուէր կերպեր ատնցինն ալ ի սպաս վար-
 դապետին ճանաւորապէս երբ նա կուռքէն իջած՝
 Մակար աղային ճէճքին վրայ կը կրկնէ:

Վեր կ'եղանք, մեր հիւրընկալին սենեակը,
 ուսկէ կը զիտենք որ հեղգեհեճ ամբողջ գեղն է որ
 կը խոռուի ու բան ճը հասկնալ հոտուըտալու հե-
 տաքքրութիւնը կը ցուցնէ: Մակար աղան իր
 ճանկութիւնէն ալ եկեղեցատէր ու եկեղեցականատէր
 ճը — ա'հ, թող ճարիլ ճի գար նոր ազանդաւոր-
 ներուն վրայ — փառաւորուածի ոււուցքը ճը գճե-
 թացուցած կ'երեցնէ իր լանջքին վրայ առաջնորդ-
 տեղապահ ճը իր տունը բնուումս ըլլալու հպար-
 տութիւնով ճը, հպարտ ճանաւանդ երբ այդ առիթով
 կը տեսնայ թէ' օր ճ'առաջ իրեն բարև ճի տալու
 քիթ բնողներն ալ հիճա իր ճուրջը քուըւտուուք ճը
 կը ցուցնեն, որ վեր հրաճցուն իրմէ ու վարդա-
 պետին ներկայացուին:

Ու դեռ Մակար աղան իր նայուածքին մէջ
 քովիններուն կարգայնել կուտայ թէ' ինք ամէն
 ստեն ալ նայն մեճ ճարին է, որ պէտք ճէ ան-
 տեսուի, կամ իր խորհուրդներն ու աշխարհայեաքքի
 ճիտակ կերպերը պէտք ճէ որ այն նորերը հեղնանքի
 ու քննադատութեան նշաւակ պահեն: Իրաւ է որ

նա իր այս պահանջներովը ոչինչ ունի ծիծաղելի, եթէ այն նոր բուսածները սրտը լեզուէն հասկնալու հայերէն ճր դիտեն, ճարգը իբրև թաղականի առեւ նապետ՝ հին մըն է, բայց սչ այն տեսակէն, որ նորը կ'ատէ, եթէ այս նորն ալ այն տեսարանդ տեսակը չէ, որ գիտենք, կը ճանչնանք արդէն: Կիրակէն կը լուսնայ, խաչկախները կ'օծուին, Տեղապահ Հայր սուրբը գեղեցիկ քարոզով մը աստ առիթով, խոհեր մը կ'անձրեւէ ունինդիր բարձու-թեան բուն խկ հոգիին, նոյն խկ ներկայ եղող կուսակցական շէֆերու ալ սրտին վրայ, եկեղեցին կ'աւարտի, ու մենք այս վերջիններուն կրացած գլուխներուն ձևերէն օգուտելու համար, կը փորձենք զանոնք հասկացողութեան մը բերել, որոնք անխուստովանելի պատճառներով իրենք իրենց մէջ պառակտուելէ յետոյ, մէկ ճառը զատուած գալոցը կը հովանաւորէ, միւս ճասն ալ ան առջիններէն քէն ընդները, զպրոցավարները քարկոծելու իրաւութեան թիկունքներ եղած են:

Մաս մը Դաշնակցական որ զպրոցը փաթթեր է ճատին տարիներէ ի վեր, մէկ երկու ուրիշներ ալ որ նոր հասած ըլլալով Ամերիկայէն, զպրոցը կ'ուզեն փակել, դէմիններուն անքանքը ընկճելու համար, ուրիշ կողմէ մը Հնչակեան տղաքներ ալ իրենց պահանջը կը գուան դէպի զպրոցը, ժողովուրդին մեծամասնութիւնը ու թաղականութիւնն ալ իրենց շուարքին մէջ լուսահատ՝ եկեղեցիին խաչերն ու խաչկախները շատցնելու հեծուէլէ մը տարուած՝ զպրոցը բոլորովին ան իրար չի հասկցող Դեբիտայէ մըցակիցներուն քնայքին ձգած են, ու քառս մը ու բարեխն մը կատարեալ, որուն մէջ խեղդուողները այն խեղճ պղտիկները եղեր են, անոնք, որ՝ հապս՝ — ինքզինքնուն պատանեկան խուճբի հովեր տուած՝ ժամ չեն ճանար բնու ու փոխ-բարոյի պէս ըսելիքներն ալ տէրտէրին շլլիքը փաթթեր են:

Կիրակէն անբող սրունց առէ կ'ըսէներուն մէջ կը խրատենք ականջնիս, ու վերջապէս ու յետ ուրեմն, աղա՛ք, Աստու սիրուն, եթէ ասոր չէք հաւատար, հայրենիքին սիրուն, եթէ աս ալ չէք լսեր, ձեր հոգիի կտոր պղտիկներուն սիրովը, թողէք ինչ որ ունիք ու համերաշխիլ գիտցէք, քարոզ մըն ալ վարդապետը Մակար աղային սեփեակը աս իմաստով, որը, հրաշք մը պատմելու համար, անհետեւանք չի մնար անա, կը հաշտեցնենք անոնք իրարու հետ, ու ամէնքը մէկտեղ՝ թաղականութեան հետ: Դպրոցը այս վերջիններուն խնամքին յանձնելու թելադրանք մը կ'ընենք իրենց, որուն առարկող չըլլար, քանի որ կ'ապահովցնենք զիրենք թէ՛ առաջիկայ սեպտեմբերին բոլոր հայ զպրոցները նոր ծրագրով մը բացուելու կարգադրութեան մը պիտի ենթարկուին, որ ալ պէտք չըլլայ անգամ մըն ալ զպրոցը քանդող սեղական կամ կուսակցական անիճաստ պաշքարներու:

Վարկեան մը յուզիչ տեսարանի մը առջև կը թարթենք աչքերնիս վարդապետին հետ, երբ անոնք ոտքի կեցած զիրար ողջագուրելու ատեննին կը նշմարենք թէ իրենք ալ փղձկուճին հեծկտաքը կը կըլլեն ու հազիւ կրնան բառերը իրենց իրար հիւսուած զգացումներուն թարգման մնացել: Վերջը մենք պէտք տեսանք նաև որ անոնք իրենց դաժանութիւններէն

սրբուած երեսներով անգամ մըն ալ փոխադարձ այցելութիւններ կատարեն իրարու տուն, նոյն պահուն Տեղապահին հետ անոնց առջև աս առաջնորդութիւնն ալ ըրինք, որ քիչ ազդեցութիւն չըրաւ գեղին ամբողջ համայնքին վրայ, այնպէս որ վարկեան մըն ալ ես իմ անձնասիրութենէս դազրած՝ չի զսպուցայ լսելու Հայր Աղանեսանին թէ՛ իրեն հետ Ասանա մըն ալ ես գացած եղայ ու գուաթ մը ջուր ալ ես ինքն նետեցի կարևոր հայ գեղ մը աւերելու սպառնացող կայծերուն վրայ:

Երկուշաբթի լոյս, մեզի ազգական տուն մը նախաճաշ առնելու հրաւիրուած՝ անկէ պիտի դուռնանք Մէղիրէ: Պէչրոս Կոստանեան հին բարձրական մըն է՝ որ սակայն հիմա շատ մը այն ինչ տեսակ նոր լուսաւորչականներէ աւելին կ'արժէ ու վկայուներ կան թէ՛ նա շատ անգամ եկեղեցի կուզայ ու խաչ ալ կը հանէ. իր տունին բարիքներէն բան մը չէ թողեր ու ամէնքը հաւի ու սխարի տուրք ըլլալով Թիֆլին վրայ փոխադրել տուեր է, բայց առաւօտ տակաւին, մեր ստանդարտները ուսելու ճարճաջ չեն զգացներ մեզի, ես կը թողում սերն ու կարագը ու Գարան նէնէյն կացքին կը հետեւիմ: Ճանախորջ մայրն է, հարիւրամեայ մը ու աւելի ալ անշուշտ, բայց որը սակաւին այն փաքրամարմին տինճ կնիկն է, որ մեռած չըլլալու դարձանք մը կը հնչեցնէ մէջս:

Օ՛հ, Գարան նէնէյ, բարի տեսանք կ'ըսեմ, քիչ մը ժիր շէշտ մը իմս, երբ կը հասկնամ թէ՛ դժուար լսելու հետ, աչքերն ալ շատ չեն տեսնար, ու ա՛յ ձեռնափայտի մը գործածութիւնովը կը քաշկուտուի. Գարան նէնէյ ձայնիս պատասխանելով անունս կուտայ ու ձորս հնչելին անուշ խաղերը կը նետէ ականջիս, քովիններուն որոնք պատկառանք մը կը յիշեցնեն իրեն: — Զգեցէք, մի՛ արգիլէք, կ'ըսեմ, որ նա այնպէս հատահատէ իր զգացումները ու յայտնուի, ինչպէսը կը յիշեմ թէ՛՝ օր մը իմ խօյ, իմ խենթ ճանկութեանս կուսակին կը խրկէր: — Դուն չար սղէ մի էիր գիտես: — Հա, Գարան նէնէյ, քիչ մը իմ ալ միաքս կուզայ: — Հեղ մը ձեր եզիէն կը դառնայիր, մեր Լուսիկը խաւող ուզեց մընէս նը, դուն էնոր աչքերուն հող նետեցիր օր քիչ մնաց քունար պիտի, ձորդ մէկ հասն էիր ես բան չըսի նորէն, Սառօն ըլլ (մայրս) զաթի շատ կը սիրէի, աէյ կիտի օրեր: — Աւրի՛շ, Գարան նէնէյ, ուրի՛շ. ուրի՛շ: — Է ի՛նչ գիտնամ, օղուլ, շատ միաքս չի գար հին բաները, լոս էջնայ մօրդ գեղեցիկին վրայ օր քեզ քաղաք ճանբեց, մարդ եղար: — Ես փրօս չեղայ նը, Գարան նէնէյ: — Աղէկ օր չեղար, աղէս, փրօսն ինչ է, հայն ինչ է: — Ի՛նչ գիտնամ, ան ատենները շատ աւելի դուն կը խնտայիր ժամ գացող հայ կնոսց վրայ թէ կուսածուր կ'երթան. կուսք կը պաշտեն: — Մըլտա՛, անամ՛, ինտոր ըլլ չես ձուցեր: Պահ մը կը ճամուայ իմ ձորս մտերիմ բարի պառաւը, ու տա՛ս վերջինս մըն ալ իր զգացումներէն որ պարկիշտին ու մաքուրին բերեղացումովը զճառուած հարիւրամեայ գեղջկուհիի մը հոգիէն կը քակուի ու կը պառթկայ — էն ատենները, խուզի՛ս, մենք իմարներ էինք օր էդ խօսքերը կը նետէինք փրօտ չըլլալներուն, կամ հայրուն ժմուն, հրպը հիմա սը ձեր նոր իմաստունները

ինչ են օր հէջ կ'ըսեն էն ժամը պիլէ չեն ճանար , տէրտունն ըլ փրացուին ըլ հազար խօսքեր կը համբնեն , էնոնց ըսածները նէ փրօար բերան կ'առնէ , նէ ըլ սաճիկը , հողի՛ս , դուն քաղաք ես . անկաճդ բան չի լսեր . . .

Այսանեան վարդապետին հետ ցաւազին նայուածք ճը կը փոխանակենք ու սաթի վրայ ճիկնելու կը պատրաստուինք . սանդուխէն վար կ'իջնանք սրուն վերօքը՝ ճերուկ ճայրը աւխարխափ շարժուծի ճը մէջ իր ճոկանին կ'աթնած . ճեղի անգամ ճըն ալ իր ճէնը կը խրիէ . « Բարի երթաք , օդու՛լ , բարի եկաք , բարի երթաք , քեղի ըլ կըսեճ , Հայր սուրբ , Աստուած ճէկ օրդ հազար ընէ օր ուր երթաւ նը , էս չէշիտ ճնորհներ տանես , աղէքը պարըջուցեր ես եղեր , աղէկ ես էրեր : — Ինճի ալ բան ճը չու՛նիս ըսելիք , Գարան նէնէ , ա՛լ ո՛վ դիտէ , երբ անգամ ճըն ալ . . . — Հա , աղէ՛ս , դուք կ'երթաք , ես նորէն իճ տեղս կը ճընըճ , սր ալ չի տարւեր , ալ չիճ կրնար քաշեր : էսչափ հետս խօսող չէր եղեր , պէրխուտար ըլլիս , չարս չօրուխիտ ալ բարև սար ճընէս , ըտէ էնոնց ըլ օր ալ էն Գարան նէնէն հողին վրայ բուռ ճի հող կ'օլորի . ու ճահը կը բնուտէ : հա՛ , օդու՛լ , սը ճութ տեղերը ճահս կը բնուտեճ , անուճն ըլ կուտամ ու ճէնիկ ճը չիճ առներ , գնա , արես սար ու ճահս խրիէ . Չուրի պէս իճ ճարուըցեր , ալ էսչափն ըլ չ'ապրուիր . հողը աւելի հանգիստ բարձ ճը ինճի . էս ճութ աչքերուս ըլ զաթի գերեզմնին ճութն է օր կը յարճարի բարի՛ երթաք » . . .

Մարտ, 1910. — Խարբեղ ԹԼԿԱՏԻՆՅԱՆ

Ծ Ա Մ Ո Ւ Կ Ի Ն Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հ Ա Ս Ա Ս Ո Ւ Ա Յ Ե Ա Ն Ս Ի Ր Ա Տ Ա Ղ

ճակատոյիս մէջ մեճեանի մ'հիմարոց , երկու մարտար , երեք հազար սարիներ , կապոյտ խորին վրայ աստիկեան երկրնից , Ջուզագրեցին իրենց երազն ըսպիսակ :

Պաղամ՝ գոգին մէջ միեւնոյն սասափին , Աստղկան վրայ լացող ալեաց արցունքներ , երկու մարգրիս , վրին յասա՛կը քաղուած , Խորհրդաւոր բառեր ըսին իրարու :

Իեներալիճ պալատին ճո՛ղը վրօքրած , Շասրուանին ներեւ ու միջոց կ'արտասուէ , Պօպսիլի օրով , երկու վարդենոյ Ծաղիկները օաղփաղփեցին միասին :

Վեճեթիկի գրմբէրներուն վրայ՝ երկու ճերմակ հաւփալ՝ օստիկներով վարդագոյն , Բոյնին մէջ ուր սերն յաւիտեան կը բնակի , Իւրեան գիշեր՝ մը միասին բառեցան :

Մարտար , մարգրիս , վարդի ճաղիկ ՚ւ աղանի , Ամեն բան օ՛ր մը կը լուճուի կ'ըլլայ չի՛ր .

Կ'իյնայ մարմարն ու մարգրիսը կը հալի , Կը բօճնի վարդն ու բըռչունը կուտայ խոյս :

Անճիւր մասնիկ , բաճնուելով իրարմէ , Տիեզերի յար տուային մէջ կ'երթայ Անեցրնել խրմարն հրակայ՝ կազմուած Այն ճեւերէն զոր Աստուած իսկ կը ճուլէ :

Յամբազանդաղ յեղումներով նորանոր՝ ճերմակ մարմար՝ դարձած միս ըսպիսակ , Վարդ ճաղիկներ՝ վարդ ճաղկանց փոխարկուած , Կը վերապրին մարմիններու մէջ պետպէս :

Ազանիներն իրենց վուպուն կը կրկնեն երկու մասաղ սարփաւորի սրսին մէջ . Ու մարգրիսներն ակուաներու ճեւ կ'առնեն Գոհարտուփին մէջ ճիճաղի՛ մը սիրուն :

Այդպէս է որ կը ճընին այն սիրական Անուտոբեամբ համակրութի՛ւնը բախուն , Ռունց ճնորհիս բընագոյնաց հողիներն Իւրու բոյր կը զգան զիրենճ աւեճեճ սեղ :

ճառագայթի մը կամ բուրման կամ գոյնի Մը հրաւերին սիրայօճար հընագանց , Անճիւր հիւլէ դէպ այլ հիւլէ մ՛ կը բըռչի , Ինչպէս մեղուն դէպ ի ճաղիկ մը սլացող :

Երազանքներ՝ կը յիշեն երբեմնի՛ Մօվուն մէջ կամ հակասին վրայ մեճեանին , Ծաղիկաբարբառ խօսուքսուկներն աղուանու՛ճ՝ Մօսն աղբիւրին ականակիս ջուրերուն ,

Եւ համբոյրներն ու սարսուռներ՝ ըսի Գրմբէրներուն վրայ գունեերով ոսկեղէն . Ու մասնիկներն՝ հաւասարիմ՝ մէկըմէկ կը փնտրեն ու կը սիրեն վերքօսին :

Մոռցրած սէ՛րն է որ բուճեն կ'արթընայ , Անցեալն է որ կը վերածնի ընդ աղօս , Ծաղիկն է որ օրթունքին վրայ օտաւագոյն Ինրգիներ կը հոտուրայ ու կ'հանցնայ :

Ասասփին մէջ ուր ճիճաղը կը օողայ , Մարգրիսն իր փայլը կրկին կը սեսնէ . Իեռանասակ Հոյսի մօրթի մը վրայ Մարմարն՝ յուզուած՝ իր զովութի՛ւնը կըզգայ :

Հաւիալը ճա՛յն մը կը գրսնէ անուշիկ Որ արձագանքն է իրեն հին հեճիւնին . Այլ էս ամէն դիմադրութիւն կը բուլնայ , Եւ անճանօ՛քը սիրական կը դառնայ :

Դո՛ւն օրուն դէ՛մը կը դողամ ու կ'այրիմ , Ո՛ր ճովը , ո՛ր մեճեանը կամ վարդենին , Ո՛ր գրմբէրն է որ մեզ հանցաւ միասին՝ Մարգրիս կամ վարդ , մարմարիոն կամ սասրակ :

Թարգմ. Ա. Չ. ԹԷՈՅԻԼ ԿՈԹԻԿ



ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏԵԱՆ

Մեր անցեալ շրջանի թիւերէն մէկուն մէջ կը հրատարակէինք թարգմանութիւնը այն ներբողալից էջերուն զոր ֆրանսական ճաճուլը կը նախընտրէր Պ. Արմենակ Շահ-Մուրատեանին՝ Բոնսերվաթուարի տարեկան ճրցմանց մէջ Օփերայի երկրորդ ճրցմանակ ստանալուն առթիւ: Այս տարի, Պ. Շահ-Մուրատեան հասաւ նպատակին զոր առաջադրած էր, ստացաւ՝ ճրցմանց մէջ՝ երգեցողութեան երկրորդ ճրցմանակ, օփերայի առաջին ճրցմանակ, և արդէն Փարիզի Մեծ-Օփերայի անօրէնութիւնը իրեն հետ պայժմանաւորուած է. ի մօտոյ տեղի կ'ունենայ իր սկզբնա-

ւորութիւնը: Այս մեծ յաջողութիւնը, որ պատիւ կը բերէ մեր հայրենակցին կուռ աշխատասիրութեան, մոտաւ ճիւղնութեան և արուեստագիտական փայլուն ձիրքերուն, պատուաբեր է նաև հայ ցեղին՝ իբր անոր քաղաքակրթական յատկութեանց կենդանի ու փայլուն ապացոյց ճը ևս: Ուրախութեամբ կը շնորհակարտենք մեր հայրենակիցը, և կը ճողովենք որ իր սուսնողական շրջանի յաջողութիւններէն աւելի մեծ ըլլան յաջողութիւնները զոր այսուհետև պիտի ունենայ իբր արուեստագէտ:

Ն Ս Ք Ե Ձ Մ Ե Ղ Ա Յ

ԹԱՏՐԵՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Գործողութիւնը տեղի կ'ունենայ պատրիարքաւ ընդ մօտ, Մուխթար Յարութիւնի բնակած տան կահաւորուած սենեակներէն մէկուն մէջ: Բեմի խորը

զուռ, աջ՝ պատին մէջ գոցուած զուռով խցիկ ճը ուր դետեղուած են ճամբու գոյքերը (անկողին, սննտակ, պայուսակ ևն.): Ձախ՝ հայելի և հեշտադարան, վրան լամբար մը, ալքոլաման մը, սրճեփ մը և սկահակներ՝ առանձին պնակի մէջ: Մէջտեղը բարակ սեղան մը, վրան փոքր զամբիւլ մը ուր դրուած են հիւսելի գուլպայ, ճիրատ, ասեղ, կծիկ ևն., շուրջն աթուաներ, գետինը ցորգ: Բեմի վերի անկիւնները երկու փոքր ու բարակ քանափէ՛՛ գէմ զիմաց: Կողմնակի պատահաններ: Պատի անկիւնը փոքր աւել մը:

Տ Ե Ս Ի Լ Ա

ՄԱՐԳԱՐ, ՄՐԿԱ

(Վարագոյրը քարճարանաշուն՝ Մարգար ևրսած է այ կողմի ֆանափեիկն վրայ, առջեւը մոխրակաշ ևր եւ պատուս սիկարի տուփ ևր դրած, իր երկար ծխաւորճը կ'ֆաշէ: Իսկ Մրմա հայելիին առջեւ կանգնած մագերը կը յարդարէ: Իր հագուածքը պոչուսկան է, նուազ խնամքով եւ յայտնի քերտրիւններով:)

Մրմ. — Վախնա՛մ, հայրիկ, վրաս առնել փոխենիս մինչև ակօնճը ելլէ հասնի...

Մարգ. — Օղո՛ւլ, աս երկրին պահընջն է, անե՛նկ կ'ըսէ Հոռփիկ հանուճը. մարգ բան չ'ըսեր: Քոս եկողը աստեղի սիւսին ու սալթանաթին յարմարուելու է...

Մրմ. — (Ձաւքիւղիկն մեջեկն առնելով գուրպակ) Ա՛խ, այ անե՛նկ իմ վախցեր երկըրի լիսանէն ուր... (Ձախ ֆանափեիկն վրայ կ'երթայ կը նստի եւ կ'սկսի հիւսել:)

Մարգ. — Գուն Ֆոգ մ'աներ, ան բամբասանքները ա՛լ Ակը մնացին: Չէ՛, տողուսին ուր տի խորաթինը նը՝ Արութին էֆէնտին ձեռքէն եկած աղէկութիւնը էսիրկէմիչ չ'աներ: Կարգին վրայ հաստատ մնայ Սրբապանը, ան սայհմընեց: Հիւքիւմէթէն ազաճնուս խըտար մնալու իզին կայ: Հէմ իր տունն ալ առաւ մեզ ուր հի՛շ վախ չունենանք: Պատիրարքարանի մարդիկը պիլէմ մեզի հետ շնորքով կու վարուին: Է՛հ, աշխարք է, անե՛նկ չի մնար, կու փոխուի իմ Ստըմպոլ գալած վախթիւներս ուր միտքս կ'իյնայ... Էռչի օրը խալանցայ, Տիրէքլէր-Արասի թարաֆները կայ գացի՝ ուր վախթին եւ խանութ մի կու բանեցընէի: Հիմա — պատերը ակօնճ չունենա՛ն — չորսիդիս փութունն խաֆիէ է կըյրեր: Աս արալըինները Ստըմպոլ գալը հերա՛մ է:

Մրմ. — Տասնըհինգ օր է ուր հոս ինք տըհաս Կոզիկ աղան չի կրցանք տեսիլ էինք...

Մարգ. — Կոզիկ աղային երկու տէֆա եղաւ ուր կ'երթամ, տունը չի՛մ գններ: Կ'ըսեն քի շատ ուր երթաս գաս նը՝ սէյմանները ետխայէդ կու բռնեն: Վախնալուս պոչուս վրայ կու նայիմ, տուն կու վազիմ: Սողրա թանթուրը երթալու վախթիւն չունիմ...

Մրմ. — Ա՛խ, հայրիկ, քանի ուր միտքս կուգայ ան օրն ուր դէմ դիմաց ելա՛նք... վրաս ի վար էս ջուր կու լեցընեն գիտես թը... Խուշը ձեռուքնիս է ինկեր ու չի՛նք կընար բռներ:

Մարգ. — Օֆ, օ՛ֆֆ, ատ թարաֆները մի՛ բըրբեր, աղչի՛: «Թանիչը եկաւ խնտացանք, պարկն ուր բացանք նը՝ լացանք»

Մրմ. — Հուսաիկ տասնըհինգ թախիս է չէ

անակը... Աստուած պարպա, ըճապ քո՛ն ես թը արթու, աս ի՛նչ է իմ քաշածս: Ես ուր կատուի մը պիլէ «փխտ» ըսած չունիմ, իֆթիրան անե՛նկ ծակէ մի հանեցին ուր պարէմ օր մըն ալ երեսս խոռ նայա՛ծ ունի...

Մարգ. — Գուն նայեցա՛ր ան գրերուն. փութունն ալ մեր տուշմըններն են գրեր: Հայտի՛ ըփնք թը մեր խաչիկը վախթովը զանտարային մէյն է եղեր... Ձէհէր ա՛լ մարդ մարդու տուն չի տ'ելլէ երթայ: Էռչըը մեռնիմ ան տէրպապային, գիտես թը Աստուած մախուս մեզ հըմար երկինքէն էր խրկեր. բերնէն մարգրիտ կու թափէր: Ա՛ն ալ ուր չիլլեր նը՝ մեր գործը չիւրիւկ էր, Սուճա՛, նորէն ասո՛ր ալ փառք:

Մրմ. — Ա՛խ, հուսա սիրտս այնա պիտէր ուր փութունն ալ կունակունն օրթայէն ճաթէին: Պոշ տեղը չէ՛ ուր Հոռփիկ հանուճը կ'ըսէ թը Ակինը կնիյները իրենց մեծունացը գերին են դարձեր: Մեր հալը իշտէ աս է, սուտ չէ, Շիհե՛տ ես՝ կու բանպասին թը մարդու հետ էլլիկ կուլլիս, չիրքի՛ն ես՝ գէվի կ'առնին, գիննակա՛ն ես՝ ինչ ուր սուտ ու իֆթիրա կայ՝ վրազ կու խօսըցընին, կու յարմարցընին...

Մարգ. — Հա՛խ ունիս, օղո՛ւլ, հախ ունիս:

Մրմ. — Լեզունիս բերընուս մէջը կըյրեր ին: Բերանդ ուր բանալու ուր կուլլիս նը՝ սըֆթէէն նամուսէ՛դ կու պաշլային: Հոռփիկ հանուճն ուր կու նայիմ նը՝ հազար երնէկ կուտամ ուր պիւլպիւլի պէս կու խորաթէ. բերնէն մարգրիտ ու չէքէ՛ր է ուր կու թափի: (Դուռը զարնուելով ուրախութեամբ տեղեկ կ'ցասկի) Խօսքը բերանս մնաց. Հոռփիկ հանուճին չալուածքն է: (Դուռը կ'ըսանայ:)

Տ Ե Ս Ի Լ Բ

ՆՈՑՆՔ, ՀՈՒՓՍԻՄԷ

Հոիփ. — (Գլխարկը եւ ձեռնոցները դրած, գուարք եւ ընտանեկան ձեռնոցով ներս կ'մտնէ): Բարի լո՛յս, Սրմա հանըմ, բարի լո՛յս Մարգար աղա, (Ձեռներէին կ'սեղանէ) ի՛նչպէս, աս գիշեր հանգիստ քնացա՛ք:

Մարգ. — (Տեղեկ շարժելով) Բարին արեւդ, Հոռփիկ հանուճ, աստեղի ուսհաթութիւնիս մեր տունն ալ չունէինք: Մինակ դուն ուր ներս ուր կու մըննիս նը՝ գիտես թը արեւ կու ցաթէ վրանիս... Դստէ՛, Հոռփիկ հանուճ, մի՛ կոյնիդ օտքի վրայ...

Մրմ. — Գիտես թը ասօր կինէ գնալը տեղ մի ունի Հոռփիկ հանուճը...

Հոիփ. — Այո՛, բերա պիտի երթամ: Դոր բացուելիք Աղջկանց Արհեստանոցի անդամուհի նշանակուած եմ, ժողով կայ... Օր մը քեզ ալ հետս պիտի տանիմ...

Մրմ. — Գա՛մ՛ ուր վրաս խնաման Սարմազու
կնիքները, հա՞...

Հոիփ. — Քեզի պէս աղւոր աղջկան վրայ
խնդացողին քիթը կը ծռի: (Կ'շոյն Սրնայի
մազերը) Քեզի հետ թէ թէի առած դեռ ի՛նչ
տեղեր պիտի պտըտինք...

Մրմ. — Ես արժանի չիմ քու թէզ մտնելու:

Հոիփ. — Օօ՛, առ չեղա՛ւ... Ես հպար-
տութիւն կը համարիմ քեզի պէս բարի ու աղ-
ւոր քոյր մը յանկարծ Աստուած ինձ պարգեւե-
լուն համար... Քեզի դեռ շատ բաներ պիտի
սորվեցընեմ... Ի՛նչպէս, մազերդ յարգարել
սորվեցար...

Մրմ. — Էմէն օր կ'անիմ կ'անիմ, քու արա-
ծիդ պէս չիմ կրնար...

Հոիփ. — Նայի՛մ անգամ մը... Օօ՛, շա՛տ
լաւ ես կրցեր. ա՛յ շնորբով մը սորվիր ես,
ահա... Քիչ քիչ լեզուդ ալ պիտի փոխես,
ձայնդ արդէն աղւոր է... Կեցի՛ր, Ահնէն հե-
ռադրի պատասխանը թող գայ, քեզի կարգալ
ալ պիտի սորվեցընեմ... իմ մտտս պիտի բնա-
կիս, իրարու ստեպ պիտի այցելենք, անցեալդ
մոռցնել պիտի տամ քեզի... դեռ ինչե՛ր ու
ինչե՛ր...

Մարգ. — Հռոփիկ հանում, դուն մեզ տա-
յիմն ամթո՞ղ կու հանես. մենք ձեր այարին
կրնա՞նք հասնիր ուր...

Հոիփ. — 2է՛, չէ՛, Մարգար աղա, քու
հայրական բարի սիրտդ ու ազնիւ բնաւորու-
թիւնդ կը սիրցնեն ամէնքը... Ախո՛՛ն, որ մեր
ձեռքը չէ՛ ձեր անմեղութիւնը օր առաջ ապա-
ցուցանելու... Գուն իմ հայրս ես, ա՛ս ալ իմ
քոյրս է, վերջացաւ:

Մարգ. — Վա՛յ ինծի պէս հօրը...

Հոիփ. — (Մեկուսի) Խե՛ղճ մարդ, ո՛րչափ
կը տառապի: (Բարձր) Սրմա հանրմ, աս իրի-
կուն նորէն ինծի Ահնայ երգեր պիտի ըսե՛ս որ
գրեմ:

Մրմ. — Ինչո՞ւ չէ, հոգի՛ս զուրպան թող
լընի...

Հոիփ. — Ամնա քչիկ մըն ալ պիտի երգես,
այնպէս չէ՛:

Մրմ. — (Տասանելով) Մա՛րդ կու լսէ:

Հոիփ. — ՕՏօ՛, ես ալ պարապ տեղը ինք-
զինքս կը խաբեմ թէ օրէ օր կը փոխուիս...
Սպասէ՛, սպասէ, քեզ այնպէ՛ս պիտի ընեմ որ
ինձմէ ալ չհաւնիս...

Մրմ. — (Զարնացած) Մեղա՛յ, ի՛նչ կու լսիմ:

Հոիփ. — Գուն կը տեսնե՛ս: (Ժարնացոյցը
նայելով) Ժամը մէկը քառորդ կ'անցնի, ալ
ժամանակ չունիմ: Սրմա՛ հանրմ, քոյրս, այսօր
նորէն խոհանոցի տանտիկինը դուն ես: Ես
իրիկունը ուշ տուն պիտի վերադառնամ: Տղաքս
երբ դպրոցէն գան, լաւ մը կշտացուր:

Մրմ. — Գլխու՛ս վրայ:

Հոիփ. — Գուն բոլոր հնաբքդ ի գործ դիր,
Ահնա կերակուրներ պատրաստէ, իրիկունս ամեն-
քքս ուրախ ձաշ մը պիտի ընենք: Մնաք բարով,
Մարգար աղա, (Զեռի՛ր կ'սեղովե) իրիկունը

հարկաւ մեզի նորէն աղւոր պատմութիւններ
պիտի ընես... Ցտեսութիւն: (Անապարեղով
Սրնայի քեղը կը մտնէ ու դուրս կ'ելլի):

Մարգ. — Երթա՛ս բարով, Հռոփիկ հանում,
տէրը հետդ ըլնի: (Հոիփիսիւնի անկեսանալը
դիտելով) Ճանրմ, չի գննուա՛ծ աղջիկ է, չի
գննուա՛ծ...

Տ Ե Ս Ի Լ Գ

ՄԱՐԳԱՐ, ՍՐՄԱ

Մրմ. — (Ներս մտնելով) Խուշի պէս թռա՛ւ:

Մարգ. — Սումա, քեզի հետ պէրապէր մէկ
ազից լուսու պէս կու սիրիմ... Զի գննուա՛ծ
աղջիկ է, չի գննուա՛ծ...

Մրմ. — (Դարձեալ գրաւելով իր տեղը եւ գուշ-
պան շարունակելով հիշելով) Թէրպիյէ ըսիս,
վրան հատե՛ր է. նամուս ըսիս՝ կինէ՛ անկնկ...
Ա՛խ, հայրիկ, ես ուր դրպատուն ուր խրկէիք
նը ես անկնկ խախքը չի ա՛րիլէի մէծլիսին մէջը,
հէմ տէ փութուն գիտցածս անվախ կու խօրա-
թէի...

Մարգ. — Օղու՛լ, առ մօ՛րդ գնա ըսէ: Գուն
տահա սինկուկիյ մը աղջիկ էիր ուր ես զուր-
պէթ ելայ: Անխրտար գրեցի թը, կնիկ, խարճ
արէ, պօրճ արէ, աղջըները թող կարգալ սոր-
վին, հոս Սարմազու կարգալ չի գիտցող աղջիկ
չէ՛ մնացեր, հիմա աշխարհը կարգըցողներուն
է, մտիկ չարա՛ւ...

Մրմ. — Վա՛յ անոր ուր հախ ունի ու լեզու
չունի, իշտէ՛ ինծի պէս կուլլի: (Թաշկիսնակով
արցունքները կ'արքե):

Մարգ. — Սրնայի այգերը դիտելով) Մ'աներ,
Սումա՛, մ'աներ, օղու՛լ, աչքդ տի քօրնայ լալով
լալով...

Մրմ. — (Կարագիկ) Քի՛չկէ իս տանէիք գետը
ձգէիք թէ՛ք ան թերս մարդուն չի տայիք...

Մարգ. — Սումա՛, օղու՛լ, տըհա շատ ու-
մուտ ունինք: Փուլփուլ խաթունը մեզի հետ է.
եկէր ուր Առըննորդը հարցընէ նը՝ ան պէտք
եղածը կու խօրաթէ: Նայէ՛ ի՛նչ էր գրեր Նի-
կողոս աղային, Աստուծա՛ն էր ուր աս գի՛րն
ալ կարգըցին մէկըլներուն հետ: Եկէր ուր,
Սումա՛, վարդըպետ պապայէն բարով խապար
մի ելլէ, Նիկողոս աղային հետ պարըլինք նը՝
ո՛ւլիս իմ արեր, Ահը օխտը տավար կըրբել
տի տամ, աղքատներուն ձաղպել տի տամ: (Մե-
կուսի) Ըմմա, Աստուա՛ծ տայ ուր կինէ թերս
բանի մը ոստ չի գանք, չունքի մեր Նիկողոս
աղային ինատը քրդուն ինատէ՛ն ալ պէթեր է...

Մրմ. — Հայրի՛կ, Գուպուկը ըսաւ թը թէօ՛հքէ
մի հէլվա ու խու՞թի մի խայմախ կայ Կողիկ
աղային իբրամ արէք...

Մարգ. — Էօյլէ՛ ես: Ես իմացեր իմ ուր
կողիկ աղան մեր Նիկողոս աղային խելքը տա-
րիմա կու համոզէ եղեր ուր գիր խրկէ մեզի:

Մրմ. — (Գրպանեկ մեսախտայ քաշկիսնակ մը
հանելով այգերուն կ'սանի եւ կ'համարուրէ) Ես
նաղուխս տուած փօշն է: Ան ի՛շ ֆիղաններ

էր ուր արաւ . գիտես թը լացին ձայնը տըճա
ակօնձա է : Ա՛խ , հայրիկ . մէկը կուգաս կու
գննես , մէկըլէն կու գատուես : Վաղն ուր դուն
ալ ելլես երթաս նը ես ի՞նչ տ'իլլիմ :

Մարգ . — Օղորւլ , աս դուրպէթուեթին ըսածդ
Ահնցներուս պապատան խալմիչ սե ճակըտա-
գիրն է : Ես ու մարդդ քի՛ն ինք քաշեր : Գուն
նորէն աղէ՛կ ես . հըպա ան գազալու Արօսիկի՛ն
ինչ ըսինք ուր , քսան տարի է , արիկը դուր-
պէթ է ելեր , իզն ու թօզը պէյլու չէ՛ . նէ՛
գիտին քի օղջ է , նէ գիտին քի մեուեր է . . .

Մրմ . — Ա՛տ կ'ըսես . հըպա Չախար Կարօ-
ինց Աէվլի՛ն , Մօրուքինց Թուրվանտա՛ն , Օճան
Պապակնց Նարթու՛ն , Խառթուչինց Էլմա՛սը . . .

Մարգ . — (Ընդհանսեցալ) Շիլ Թագոսինց Աւ-
կո՛ւլն ուր գազալու աղշիկը արկան տէրտէն
վէրամ եղաւ տէ մեուաւ . . . Տըճա քանինն'ր ու
քանինն'ր տէ տասը-քսան տարին անցեր է , նէ
արիկ են տեսեր , նէ՛ գրիկ . . . Ա՛լ ատոնց վրայ
տիւշինմիչ մ'իլլիր , ի՛նչ անննք , էճալի է ,
թագըւորն ուր թագըւոր է , բերանը կէմ չի
կրնար գներ . . .

(Դուռը կ'զարնուի)

Մարգ — Խե՛ր լընի , աղշի՛ , տա դուռը
բաց , նայինք վե՛զ է :

Մրմ . — Ի՛մէն դուռը զարնելուն սիրտս փըտ
փըտ կու նեաէ : (Դուռը կ'բանայ) :

Տ Ե Ս Ի Լ Դ

ՆՈՅՆՔ , ԿՈՉԻԿ

Կոզիկ . (Միջանասակ , քիչ մը ձերկիւած մա-
գերով , առանց օձիքի , հաւնդարս երեւոյթով ,
անու կ'իւննէ , շուրջը կ'դիտէ եւ ուշադրութեամբ
կ'իւննէ Մարգարի դեմքը) :

Մարգ . (Աջ ձեռքը աչքերուն վրայ հովանի
բռնած՝ տեղեկ կ'երդէ եւ փոխադարձ ուշադրու-
թեամբ կ'իւննէ Կոզիկի դեմքը) :

Կոզ . — (Ժպտեցալ) Չի ճօջցի՛ր տըճա , Մար-
գար աղա , բարի՛ ես եկեր , հագա՛ր բարի :
(Առաջ կուգայ) :

Մրմ . — (Յած՝ Մարգարի) Կոզիկ աղան է :

Մարգ . — (Ուշաբերում) Վա՛յ արեւուզ
կշտանամ , Կոզիկ աղա , դո՛ւն ես , Աստուծո՛ւն
ինտաս . . . (Կ'զրկախառնուի) :

Կոզ . — Բարի՛ ես եկեր , հագա՛ր բարի ,
Առմա , իշալլահ աղէյ մի աղէ՛կ ես :

Մրմ . — (Կոզիկի ձեռքն հաւքարեցալ) Գո՛ւն
ալ բարի եկար :

Մարգ . — Հրամմէ՛ , արեւո՛ւզ կշտանամ ,
Կոզիկ աղա , հրամմէ վերիդին :

Կոզ . — Բիճա կու անիմ , Մարգար աղա .
կիւճէնմիչ մ'իլլիր : Պէյոյլու տ'երթամ կինէ .
էճէլէ գործ մի ունեցայ ան թարաֆները , տի
յմնցընիմ , տի գամ իրիկուներ կինէ : Հիմա քիչ
մը սորքի վրայ տի խօրաթիմ :

Մարգ . — Ի՛նչ կըսես , Կոզիկ աղա , շա՛մ ինք
կարօտցեր . քանի Փոս ինք եկեր , ջուրի պէս
ծառա՛ւդ ինք քաշեր . . .

Կոզ . — Ես թեղ տի դառնամ , իրիկուներ
մէկտեղ կուլլինք , մէկտեղ կերակուրնիս կ'ու-
տինք : Ե՛ս ալ հրամանուցդ կարօտը կու քաշէի
. . . Ե՛կէր ուր հիմա ուր չերթամ նը՝ գործը
ձեռքէս կ'իլլէ սօզրա . . .

Մարգ . — Երկու տէֆա եղաւ ուր օտար կու-
գամ , չի՛մ գններ . . .

Կոզ . — Ա՛խ , Մարգար աղա , Մարմուզը
ան էուջի գիացած Մարմուզը չէ՛ մնացիր : Կու
հասկընա՛ս հէլպէթ . մարդ մարդու տուն եր-
թալու կու վախէ . . . (Մօտենալով Մարգարի
ակաւջին , ցած) Կէշախէր օ զամանար , կէշ-
ախէր . . . Հուսա հէլէ քանի մը թախտէ պարէմ՝
նստիմ տէ աննիկ խօրաթիմ . . .

Մարգ . — Հըպա՛ , Կոզիկ աղա , նստի՛նք ,
նստի՛նք : (Կը նստի) :

Կոզ . — (Եսեցալ արտուի մը վրայ) Ա՛խ ,
Մարգար աղա , քանի ձեր գալը լսեր իմ նը՝
քու՛նս ալ է փախեր . իշտահա ալ . . .

Մրմ . (Ոսֆի վրայ հետախօսի կ'սպասէ) :

Մարգ . — Տըճա քիչ մի էուջը քու խօրա-
թագ կ'անէինք : Աս էր կ'ըսէի Առմային թը ես
Կոզիկ աղային սիրաը գիտիմ ըմմա ի՞նչ ֆայտա
ուր դարը ան էուջի դարը չէ . . .

Կոզ . — Ան իմ քաշածներս Աստուծո՛ւն գիտէ :
Ասննի քաները հիմիչէրիներու վէ բարեկամնե-
րու մէշտեղ աղէկ քան չին , ես ան գիտիմ :
մեր աղտոտները մեր մէջ վլանալու էինք . էճա-
լին հիմա ի՞նչ տ'ըսէ . . .

Մարգ . — Արձենդ սիրիմ , Կոզիկ աղա , դուն
ալ իմ սօյէս ես . . .

Կոզ . — Չեր Մարմուզ եկած աւուր աւտուն
Նիկոզոս աղային խանութը ելայ գացի ուր տըճա
չէ եկեր : Օր մի ասնիկ արած չունէր : Օտան
եկայ գացի թը ըճապ հիւսնո՛ւն է , բան մի պա-
տըճի՛ր է : Երթամ ուր գլխուն ի վար սե ջուր
ին լեցուցի գիտես թը , դանա՛կ զարնէի սը-
տին նը՝ պուտ մի արուն չէր ելլեր : Նէ իսէ
հասկցանք թը բանն ինչուկինն է : Երկու տըճաթ
սորքն իմ ինկեր , մ'աներ , կ'ըսիմ , արեւդ սիրիմ՝
Նիկոզոս աղա , նամուսիդ այարը ուր կ'իշնէ .
դուն պլիկ չես , հայտի՛ ուր երթանք բերինք
Զապթիկ-խափուսիէն , աղէ՛կ ուր եկեր են ,
բարով ուր յաջողեր են . . . Աստուած հեռո՛ւ
անէ , օտային մէջ գիտես թը նե՛ս էր պտղեր ,
թեէս բանեց , տիւզճէ օտայէն դո՛ւրս արաւ իս . . .

Մարգ . եւ Մրմ . (Այլուրեւալ եւ յուսահա-
սութեամբ կ'ուրնկնորեն) :

Կոզ . — Չանչան չ'անիմ Գուրս ուր ելանք
նը՝ կինէ օտքն ու ձեռքը ինկայ , Նիկոզոս աղա ,
հայտոր՛ւլ , մենք մեզ գիտի՛նք իշտէ , ասխրտար
տարի է ուր աղբոր պէս ինք , էօթէտէն պէրի
ալ ինամիութիւն ունինք , աս նէխատէր ուր քու
նամուտ է նը՝ էմմէնուս ալ այիտ է , ես քեզի
չար չիմ կամենար , ո՛ւր ին , երթանք բերինք . . .
Քէօփրիւին էուջն ուր հասանք նը՝ մէյ մին ալ
ետերս դառնամ ուր գրեր ես նը գտիր . խա-
լապալուսին մէջը խայի՛ւլ է եղեր : Շիտտակը ,
տըճա ես ձէսերեթ ալ շարի մինչև Զապթիկ-
խափուսի ելլիմ գամ , չունքիմ բարակը կու հար-

ցընին, խաղար ես իշտէ... Անկից ետքը խա- նուածը մէջ մին ալ չի բացաւ, օտան ալ չի մնաց: Նէ իսէ էոջի օրը գտայ, պատիրաբարանին մէջ անցած դարձածը թերմիլ խորաթեց: Գուն չնս խմիր, բսի, արածիդ հու հաւնիս... Նէ իսէ, Մարգար աղա, աղօթք անինք ուր Աւրջնորդէն բարով խաղար մի ելլէ, անկից ետքը ան փու- թուէր հու շտուի, Փոգ մ'անէք:

Մարգ. — Ա՛նի մեր պայվական նամուսին, Կողիկ աղա, դուն աղէ՛կ գիտես ուր շիհտին սուշմընները շա՛ա ին: Մեր Նիկոզոս աղան չորգոխ ուր չիլլէր նը՝ է՛ն էոէջ քու խորա- թադ մտիկ կ'անէր: Հուսա գէ՛մ գիմաց հուգա- յանք: Պատիրաբարանի մէջ մեր նամուսը փա- ռայի մը չէր լըներ...

Կոզ. — Փոգ մ'աներ, Մարգար աղա, Փոս Սարմայօրի մէջ ի՛շ տալավերաներ հու դանսան. մեծ մեծ պէյերու վէ փաշաներու կնիյները սասր էհալին բերանն ին ինկեր: Ան քո պատիրար- քարանի գրադիր օլաճախ վարդըպիտ է, ի՛շ խարաթիկ է, Պէյօղուի մէջ չի կերած ապուր ները չէ՛ թողուցեր...

Մարգ. — Ըմնա մերինը տո՛ւշ տեղն է... Տըհա ես աս մասուլուսին ֆիդաններուն չի կրցայ գիմացեր էի. էմէն ինչ ուր ձեււրնուս կուգար նը արինք, մալիւմնիդ է: Է՛ն ետքը խարարը տուինք ուր Սորմայօլ ելլինք գանք, պէլքի կու խպնցընինք: Կողիկ աղա, Չապթիյէ-խափուսին խարձածոփս հարուր ոսկին ելաւ գնաց...

Կոզ. — Թաճիկս կուգայ. ինտօր ալ թէգ- քերէ տուին...

Մարգ. — Աստուած բանն աջողէ, ան մեր Աղեքսանդր էֆէնտին արաւ...

Կոզ. — Է՛, մեր խաթունն ինտօր է, աղէ՛կ է աղէյ մը իշալա՛հ... Կարծես էլլէհեկեմ քի աս տարի գրպատուէն հաներ ին, եմնիճի մը քով չբախ ին տուեր: Հատ խալամիշ եղայ, Մարգար աղա, թող տղան քիշ մի եվել կար- դալ սորվէր, ա՛ջքը կ'ելլար:

Մարգ. — Խեղքս տըհա գոխս չէ եկեր, Կողիկ աղա, գիտիմ՝ թը ծովուն տաղանները տըհս պէյնիս մէջն ին:

Կոզ. — Մարգար աղա, մագերս կու տես- նե՛ս, ձերմրկեր ին՝ տըհա ես դուրպեթն իմ: Աս տասնը հինգ ասարին կուգայ ուր սիլա չիմ գացեր...

Մարգ. — Կնիկդ մե՛ղք է Կողիկ աղա, տըհա կէնձ է. եկուր ձեռք ձեռքի տանք, Նիկոզոս աղան ալ առնինք, ելլինք երթանք:

Կոզ. — Իրիկունը, Իրիկունը խուռմիշ կ'ա- նինք. ե՛ս ալ իմ պրիմիշ եղեր աս օտարութի- նէն... (Ոսֆի կ'եղիէ:)

Մարգ. Կ'երթա՛ս, արեւո՛ւդ կշտանամ, Կողիկ աղա, նստէիր քիշ մըն ալ... Մարիյէ խաթունը չիին մըն է տըւեր քեզի տալիք, մեր խատէմն ալ մասուս քեզ հըմար խութի մի հէլվա իլէն թններէ մի խայմախ է շիներ, անո՛ւշ արէ:

Կոզ. — Ճանրմ, նէ գեհմէթ, տուին խըր- կածը կ'օգտէր, տըհա ձեր բերա՞ծն իշ տ'իլլի... Ես ձեզ տեսնիլը կ'ուզիմ, թէչէքքիւր կու անիմ...

Մարգ. — Աղշի՛, Սումա, տա չիինները բեր Սումա. (Փուրկոս շարժուաներ կ'ընէ:)

Կոզ. — Հաճէթ չէ՛, Սումա, հիմա թող մնայ, Իրիկունը: Ըսի թը քանի ուր աս թարաֆն իմ եկեր նը՝ ձանրուս վրան ին, մէյ մի հանդիպիմ, ստքի վրայ խօնշմիշ մի լընիմ, Իրիկունը արթընս պօլ մի տեսնուինք:

Մարգ. — Բիճա կու անիմ, Կողիկ աղա, քանի ուր գործդ շատ էճելէ նը, մենք քու դարարդ չինք ուղեր, հիմա գնա, ետքը մութլախ գաս: Կոզ. — Փէ՛ք աղէկ: Քիշ մի գործ ունիմ, ախ լմնցընիմ, ախ գամ չապուս մի. խօսքս խօսք:

Մարգ. — Ա՛խ, Կողիկ աղա, էլե՛մ տէ ձեռ- քէդ գար, Նիկոզոս աղան ալ հետդ բերէիր...

Կոզ. — Գուն համբերէ. գաթի ան կակղիսս չօրպասին կերեր է. էմէն բան հիսապով անինք ուր ետքը փօշման չիլլինք: Ես աս աւտու աղէյ մի հասկցայ միտքը, Աւրջնորդէն բարով խաղարի կու նայի: Ասիրտար մի ուր եղաւ նը՝ էմէն բան կու շտուի: Ես թէ՛գ ախ գամ, ինձի պէքէյեցէք: Մնաք բարով: (Դուրս կ'եղիէ)

Մարգ. եւ Սումա. (Կը ճաւրթեն:)

Տ Ե Ս Ի Լ Ե

ՄԱՐԳԱՐ, ՍՐՄԱ

(Ներս կուգան իրենց տեղերը)

Մարգ. — Փա՛ն քեկ Աստուած, փա՛ն քեկ: Սումա՛, մինչուկ աս թախտէն Աստուած պապան մեզի հետ է. եկեր ուր Այնէն ալ ուր բարով խաղար մի ելլէ նը՝ տըհա մեր քէֆը մարդ չունի. իշտէ ահօնծով լսեցիր ուր Նիկոզոս աղան բարով խաղարի կու նայի... Նէխատէր ուր կու զղջամ թը պատիրաբարանի միւրաճէաթ արինք ըմնա՛ ան կինէ հախէն եկաւ...

Սրմ. — Հասփիկ հանումը կ'ըսէ թը ան մեր գիտցած տէրպապան տասը տարի է ուր Ստըմ- պօլի մէջ սիւրկին կու մնայ...

Մարգ. — Չորս-հինգ տարի ալ մափուս է պապկեր... Աս ի՛շ գէշ վախիթ է, գէշ վախիթ լընելուն հըմար դաթի աս բաները կու քաշինք...

Սրմ. — Հայրիկ, Կողիկ աղան շատ է փոխ- ւեր. ես պիլէ զօրով յիշեցի...

Մարգ. — Հայօղո՛ւլ, զուրպէթութիւն կըսես, կ'երթա՛ս, մարդը շարմաղէ կ'անցընէ, խաղար ես: Սումա, մի՛տքդ է, տղաքը դպրոցէն գան նը, կերակուր տի տաս:

Սրմ. — Տըհա վախիթ շատ կայ: (Դուրս կը գարնուի)

Մարգ. — Աս ալ Արութին էֆէնտին չալ- ուածքն է: Հրամմէ Արութին էֆէնտի:

Սրմ. (Փուրով ոսֆի կ'եղիէ դիմաւորելու հա- մար:)

Տ Ե Ս Ի Լ Զ

ՆՈՅՆՔ, ՅԱՐՈՒԹԻՒՆ

Յար. — (Մախար հագուած, պիսերը ող- րած քիսպիտ, յեցուկ եւ կեղծ երեւոյթով, դուրս բանալով ներս կը մտնէ:) Բարի լոյս, ախկն,

բարի լոյս, Մարգար աղա : (Ձեռներէն կ'սեղեկե)
Մարգ. — (Ոսկի եղևելոյ) Աստուծու բարին,
Արուժին էֆէնտի, բարով եկար, հազար բարով :
Հրամմէ վերիդին :

Յար. — (Եստեղով արևայի սեղը) Բարի տեսնը,
Մարգար աղա, ձեզ հետ այսպէս երբեմն տեսակցել
առանձին հաճոյք կը համարիմ :

Սրմ. (Կուզայ Յարութիւնի ձեռքը սեղեկել)
Յար. — (Ձեռքը կ'երկարե, որպէս զի հրամարե)
Այսօր Հոսիկը հոս չէ որ բարկանայ :

Մարգ. — Թող պագնէ, մեծ աղբար կու համարուիս :

Յար. (Հարկուրել սայով) Շիտա՛կը, ես գաւառական
կարգ մը սովորութիւններ կան որ շատ կը յարգեմ :
Մեր Հոսիկը երբեմն յիմար յիմար կը խօսի... (Ժպտելով
Սրմայի) Մէնտի, մէնտի...

Սրմ. (Ոսկի վրայ կ'սպասե)
Մարգ. — (Սիկար հրակցելով) Հրամմէ, Արուժին էֆէնտի :

Սրմ. (Մոխրակայ մը կ'ընտրե եւ շուրջի մը վառելով
հարութիւնի կ'հրակցե)
Յար. — (Վառելով սիկարը) Մէնտի, մէնտի :

Է, նայինք, Մարգար աղա, ի՞նչպէս կ'երթան գործերը :
Հանգստութիւնիդ կատարեալ է ինչա՛յլա՛հ :

Մարգ. — Աղէկութիւննիս պէլու է, Արուժին էֆէնտի,
ծերութիւն ալ կայ, աս բանն ալ պաշտա՛ չէշիտ : Քիչ մի
էսէջ մեր կողիկ աղան նէ՛խէ եկաւ, խօնրշմիշ եղանք,
խօսք տուաւ ուր իրիկունը կինէ գայ...

Յար. — Այո՛, շատ անգամ լած եմ ձեր բերնէն
կողիկ աղան :

Մարգ. — Շիտա՛կը, Նիկողոս աղանիս շա՛տ համոզեր է.
հիմա ալ խօսք է տուեր թը եկեր ուր Առընտրողէն բարով
խապար մի ելլէ նը՛ տի պարըշինք : Աղշի՛, Սրմա, ինչո՛ւ ես
կոյներ, իսպիրթօն վառէ, խէյֆէ մի եփէ տէ Արուժին էֆէնտիին
հետ խմինք :

Յար. — Շիտա՛կը, ես Սրմա հանրմի եփած բաներէն
շա՛տ կ'ախորժիմ...

Սրմ. (Կ'սկսի սուրն պատասխել)
Մարգ. — Այս առտու Հոսիկի հանումը եկաւ, սպուեր էր,
Պէյօղլու կ'երթամ, բաւ :

Յար. — Այո՛, նոր բացուելիք Աղջկանց Արհեստանոցի
ինամակարութեան անգամուհի է շատ ուշ պիտի վերադառնայ :

Մարգ. — Տօղրուտի, Արուժին էֆէնտի, անննկ մազլում
աղջիկ է ուր չի գննուած... Անննկ բաներ կու խօրածէ ուր
բերաննիս բաց կու մնայ...

Սրմ. — Չուտես, չի խմես, վիրա պուկուրներէն
կախ մնաս...

Յար. — Է՛, գրող-կարգացողներէն շա՛տ եմ ձանձրացեր :
Ինծի համար, շիտակը կ'ուզեք, գաւառի կի՛նն է քաղցրը
իր միամտութեամբ, համակերպութեամբ, աշխուժութեամբ...
(Շուրջը դիտելով) Սենակէն գո՛հ էք, հանգիստ էք...

Մարգ. — Ի՛նչ կ'ըսես, Արուժին էֆէնտի, հանգիստն
ալ խօսք է : Հրամանուցդ սայեովը,

տօղրուտի, քանի ֆօ՛ս ինք եկեր, հէ՛չ եղիյաթ չինք
քաշեր : Տան պէս ինք, շնորհակալ ինք Հոսիկի հանումէն,
մենք վար կուզանք, դուք վեր կուզաք, մեզի սիրտ կու
գնէք, իշտէ էլ լիկ կուլլինք : Մէյ մի ուր սա մեր գործէն
ալ ուր բարով խապար մի ելլար նը՛ տըհա ֆէսս կու
ճուէի, եան կուզայի : (Կ'գործարհե)

Յար. — Վստա՛հ եմ որ այդ վշտառիթ խնդրի մասին
նպաստաւոր պատասխան պիտի ստանաք. քանի որ
Նիկողոս աղան որ և փաստ չկրցաւ ներկայացընել
Գասա խորհրդին : Ասկէ դատ՝ մտադրութիւն ունիմ այս
օրեր անգամ մը տեսնել ձեր փեսան, գաղափարները
շօշափել և համոզել : Եթէ նոյնիսկ ամեն անպատու
պարագայ միանան ի փեսա ձեր դասին՝ ես գիտեմ իմ
ընկիւնը, անհո՛գ եղիք. ամեն բան իմ վրայ ձգեցէք :
(Կ'ժպտի Սրմայի)

Մարգ. — Աստուած մէկ օրդ հալար անէ, անննկ
յոյսեր կուտաս ուր, աղբարն ուր աղբար է, աղբարն
առննկ չ'աներ :

Յար. — Պատրիարքարանի կարգադրել չի կրցած
խնդրները ե՛ս կը կարգադրեմ : Պատրիարքարանը
ի՛նքն իսկ իմ հսկողութեանս յանձնեց ձեզ : Այս
ամբողջ Գուժ-Գարուն ձեռքիս մէջ է, ի՛նչպէս ուզեմ,
ախպէս կը դարձընեմ :

Մարգ. — Գիտի՛մ, գիտի՛մ ուր քու խէլէ-մովդ
մեծ յարգ կու վայլես հիւրիւմէթին մէջը :

Յար. — (Շոյելով Մարգարի ուսը) Անհո՛գ եղիք,
Մարգար աղա, դուք իմ պաշտպանութեանս տակն
էք, ձեր ոտքը քարին չի գպիր :

Մարգ. — Վարձքը Աստուծմէ առնես, Արուժին
էֆէնտի :

... — (Պատահական ներհեռէն կ'ըսուի) Մարգար
աղա՛, Մարգար աղա՛, Մարգար աղա...

(Բոլորը մէկ պատահար կ'ընուին)
... — Մարգար աղա, հրամանքդ Սրբապանը կը
կանչէ, շո՛ւտ եկուր...

Յար. — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ, հիմա կուգայ :
Մարգար աղա, բարապան մըն է, շո՛ւտ վագէ...

Մարգ. — (Արտօւայով դեպի դուռը կերտայ) Հիմա՛,
հիմա՛, Արուժին էֆէնտի... (Յանկարծ ետին դառնալով)
Արուժին էֆէնտի, արեւո՛ւզ կշտանամ, աս քու օտաղ է,
դուն խէյֆէդ խմէ, հիմա ես ալ կուգամ : Բիճա կու
անիմ, չերթաս մինչուկ ուր գամ : (Կ'մնկնի)

Յար. — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ, գնա, ես կ'սպասեմ,
յաջող լուրեր կը մաղթեմ :

Տ Ե Ս Ի Լ Է

ՍՐՄԱ, ՅԱՐՈՒԹԻՒՆ

Յար. — (Բիչ մը մտածոյն կը դառնայ սենեակի
մէջ, մասք շրթուկիս, աջիս ծայրովը կ'ըսուի Սրման
եւ դուռը փակելով կ'ուսեկայ սևոր) Գարնան ի՛նչ
գեղեցիկ օդ է դուրսը. Ահն ալ այսպէ՛ս է, Սրմա
հանրմ :

Սրմ. — (Անկոստութեամբ աջերը վեր առնելով)
Հայրիկը կ'ըսէ թը Սարմազուի հալան թփիս
Ահինը հալան է :

Յար. — Պոլիսի գեղեցկութեանը կը հաւնի՞ս
Սրմ. — Ինտոր չի հաւնի՞մ ըմնա ես չի՞մ
սորվեր :

Յար. — (Չարաւստութեանը) Ի՞նչ բան չես
սորվեր :

Սրմ. — Եանի էգիներն ու պաղճաններն իմ
սորվեր :

Յար. — Սրմա հանրմ, ինծի ի՞նչ նուէր պիտի
տաս եթէ քեզ նիկոզոս աղային քով գեանդիմ :

Սրմ. — (Կարմրեղով) Մեր խաս պաղճային
է՞ն համով պտուղները ,

Յար. — (Խանդավառ) Ի՞նչ, ազուր պտուղ
ուներն . . .

Սրմ. — Մէյ մի Ազը գալու էիր ուր տեսնէիր
մեր խաս պաղճան : (Մուրնը կ'ընցնէ սկահակի
մեջ)

Յար. — Առանց այցելած ըլլալու աչքիս
առջև կը բերեմ արդէն . . . Շիտա՛կը, Սրմա
հանրմ, գեղեցիկ պարտէզներու սիրահար եմ . . .

(Կոստանդուլ կը նստի արոտի վրայ)

Սրմ. — Անե՛նկ սագեցիկը սա տարի ուր . . .
պտուղները խամը խամը վրան ձգեցիկը ու
Սարմուզի եկանք : (Սկահակը պնակի մեջ դնելով
կ'ստեցնէ Յարութիւնի)

Յար. — Բայց հիմա շա՛տ հասունցած են
այդ պտուղները, մանաւանդ որ ձեռք ալ դար-
նուած չեն երկար առնէ ի վեր :

Սրմ. — (Ծռելով սուրճը կ'երաւցնէ) Զէ՛,
հրամմէ, արհա քիչ մըն ալ կայ աղէյ մի հաս-
նելու :

Յար. — (Առանց զուարթ առնելու՝ հանրայր
ւր կ'կորդէ Սրմայի այտին) Ի՞ժժ, հասած է
ամմա . . . հասած : (Ոսֆի կ'երդէ գրկելու հաւար)

Սրմ. — (Յէ ընկրկելով հաւարայրին, պնակը
կ'ըջրի զուարթ միասին եւ ինք կ'երթայ պա-
սի անկիւնին կրկնիչ եւ բազուկները կ'երկարե
ար գիւղում ձեռով) Է՞Ֆէնտի, է՞Ֆէնտի, զուք
ձե՛ղ եկէք, է՞Ֆէնտի . . .

Յար. (Գրկելու ջանալով) Կեանքը ասոր մէջն
է, Սրմա, ես քանի՛ քեզիպէտներուն պատին
եմ փրկեր այս միջոցով : Անպատուած կ'ինք իմ
համբոյրս ընդունելով կը սրբանայ, թո՛ղ, թո՛ղ,
թող կ'ըսեմ . . .

Սրմ. — (Նուաղիտ ձայնով) Է՞Ֆէնտի, թո՛ղ
սուր իս, է՞Ֆէնտի, անդին գնա, տէ՛ր Ա-
տուած, անդին գնա, կու մեռնիմ հիմա . . .

Յար. — (Բռնելով կնոջ բազուկներին) Բայց
հոս իր ոտքը գնող կնոջ պարտքն ա՛յս է, մի
դիմադրեր, մե՛ղք ես, դուն շէքեր ես, դուն
անուշ ես, քեզի քաղցր քաղցր հաճութենք պիտի
պատճառեմ . . .

Սրմ. — (Պոռալով) Ա՛ւյ, թեւ, ո՛ւյ, ամա՛ն,
հիմա տի ճշճիմ, Հոսիկ հանու՛մ . . .

Յար. — (Մարտափած վերջին բառին րող
կոռայ բազուկները) Ազու՛ր, աչքերո՛ւզ մեռ-
նիմ, մի՛ պոռար, այս իմ իրաւունքս է : Եկուր,
եկուր որ անուշ անուշ խօսիք այստեղ : Հոսիկն
ալ այսօր հոս չէ . դուն անկէ աւելի գեղեցիկ
ես և պաշտելի . . . (Թեւերը կ'ըսանայ)

Սրմ. — Գուն Ատուածմէ չե՛ս վախնար . . .

Հոսիկ հանու՛մն նէ՛ ես ըզունկը կ'արժիմ,
նէ՛ դուն . . .

Յար. — Թող տասը Հոսիկի քու առջև մա-
տաղ ըլլայ, անո՛ւշ . . . կեցիր, թո՛ղ քիչ մը . . .

Սրմ. — (Սպառնական դիրք առած) Ատու-
ղէն տէ՛Ֆ տ'իլլիս թը չէ . . .

Յար. — Ես Հոսիկը չեմ սիրեր, ես քեզ
կը սիրեմ . . .

Սրմ. — (Յարձակելով անկիւնի աւելին վրայ)
Թող իրիկունը Հոսիկի հանու՛մը գայ ուր աս
արածք քեզի սորվրցընիմ . . . (Աւելին կորով
փառաւոր հարուած մը սալով Յարութիւնի
գլխուն) Տէ՛Ֆ եղիր, կ'ըսիմ, աստեղէն, Հիմա՛,
հիմա՛, հիմա՛ . . .

Յար. — (Մարտափած դուռը կը բանայ)
Գուն ալ Հոսիկի երեսը չես կրնար տեսնել :
Հիմա դուն կը տեսնես թէ քո՛ւ գլխուդ հար-
ուածը ուրիշ պիտի գայ : (Դուրս կ'երկնէ, դուռը
ուձգին կ'զոյցի)

Տ Ե Ս Ի Լ Ը

Մ Ր Մ Ա

(Գուհասած՝ աւելը մեկ կողմ կը նստէ) Օ՛Ֆ,
ամա՛ն Ատուած, ա՛ս ինչ էր ուր եղաւ . . .

(Կ'իյնայ նուաղած ֆանտիկին վրայ)

Տ Ե Ս Ի Լ Թ

Մ Ր Մ Ա, Մ Ա Ր Գ Ա Ր

Մարգ. — (Դուռը բանալով ուրախութեանը
ներս կ'իյնայ, բայց ժեստով Սրման նուաղած՝
ձեռքերն իրար կ'զարնէ) Չարնա՛մ ու կունծիմ . . .

(Սրմաի վրայ վագելով քեւերեկ կ'ըսնէ) Աղշի
Սրմա՛, Սրմա՛, տէ՛ր Ատուած . . . (Կ'սկսի ջուր
սրսկել դեմիկին վրայ)

Սրմ. — (Թորոքեղով այգերը կ'ըսանայ) Օ՛Ֆ,
օ՛Ֆ, օ՛Ֆ, հայրիկ, դո՛ւն ես :

Մարգ. — Փա՛ն քեզ, Ատուած, հա, Սրմա
ես իմ, աչքդ բաց, բարով բարով խապարներ
իմ բերեր : (Ոսֆի հանելով)

Սրմ. (Իյնալով հօրը բազուկներուն մեջ կը
սկսի արտասուել)

Մարգ. — Այլընցիր, Սրմա, բարով բարով
խապարներ իմ բերեր :

Սրմ. — (Գրուխը վեր առնելով) Հայրիկ, ան
սե շունը ո՛ւր է . . .

Մարգ. — Աղշի, ի՞նչ սե շուն . ի՞նչ կու
լսիմ . . .

Սրմ. — Իշտէ Արու՛թին էր, ի՞շ խարախօ-
թիկ էր . . .

Մարգ. — Տէ՛ր Ատուած, ի՞շ կու լսիմ . . .
է՛ ի՞շ կայ, Սրմա, ի՞նչ արաւ ուր . . .

Սրմ. — Ինչո՛ւ իս մինակ ձգեցիր քովը . . .

Մարգ. — Ե՛ի . . .

Սրմ. — Ընդիս եկաւ . . .

Մարգ. — (Աւելի բարձր) Ե՛ի . . .

Սրմ. — Ես ալ աւելին կ'ըսովը մէյ մի փակ-
ցուցի գլխին, փախա՛մ . . .

Մարգ. — (Աւելի եւս դողալով) կամաց խորթէ, կամաց խորթէ: Հիմա Նիկողոս աղան իչէ կողիկ աղան ետընուս աի գան. Առըշնորդէն թելեղրաֆ է եկեր թը փուլթուն խորթաները տուշմընութին են: Ան գիտցած աէր պապանիս, էռէջը մեռնիմ, եւել եւրյօք Նիկողոս աղային պէտք եղածն ըսաւ: (Մրմ.ի ախանջին) Նիկողոս աղային հետ հէմ պագտուեցանք պիւլէմ: (Յանկարծ հիարարայտուած) Աս ի՞նչ էր ուր գլխուուս փաթթուեցաւ. վե՛՛վ ումիշ կուլլէր: Լեզուս չորնա՛ր ուր չըսէի թը պէրլէմիշ արէ, փախնամ հիմա գործերնիս աի փտորտէ... Ձաթի գիտցայ ուր աշքերը աշքեր չէին մաներ. շլլիս ետիս մնաց դուրս ուր ելայ նը... Հիւքիւմէթի մարդ է, փուլթուն խուլխուլուցիները ձեռքը կու գողան: Սումա, օղո՛ւլ, էմէնը օնցաւ, աս ալ թող օսնի:

Մրմ. — (Հանգստացած կ'ըստի) փա՛ն քեզ, Աստուած, սիրտս պաղչեցաւ:

Մարգ. — (Մտածելո՛ս) Վե՛՛վ ումիշ կուլլէր... Սումա, օղո՛ւլ, արհա ճիււղերը մէյ մին ալ ֆոս դնելու կու խմնի, ըմմա նորէն ուր գայ նը սուս չի գիտիմ եղիր. շանը հետ ձուլալը չիւք կրնար մաներ... Հոփիկ հանումին ալ բան մի ըսեր: Հալլա՛, հալլա՛, հալլա՛, վե՛՛վ ումիշ կուլլէր...

Մրմ. — Մե՛՛քը Հոփիկ հանումին, հաղա՛ր մեղք: Հայրիկ, ի՞նչ ըսէ նը կու հանիս... «Թող տասը Հոփիկ մատող լրնի էռչիդ»:

Մարգ. — Հալլա՛, հալլա՛, հալլա՛. վե՛՛վ ումիշ կուլլէր...

Մրմ. — Ըմմա, հայրիկ, աւելին կոթն ուր կերաւ ըսաւ թը ետքը կու տեսնես. Հոփիկ հանումն ալ արհա տեսնալիք չունիս... (Դրսեկն աղմուկներ, ախանջնիկ կ'ըստեն) Սե շունն է, հետը մարդ կայ: (Ոսֆի կեղնէ):

Մարգ. — (Դողալով) կամաց խորթէ, կամաց խորթէ... Տէ՛ր Աստուած, տէր բարերար: (Խաչակնեղով ախանջը դրակ կ'մտնեցնէ):

Մրմ. — Տաճիկ են եկողները:

Մարգ. — (Յե՛՛ս գալով ձեռները գլխուն կը գարնէ) Վա՛յ տունս պաթմիշ տ'իլլի...

Տ Ե Ս Ի Լ Ժ.

ՆՈՅՆՔ, ՅԱՐՈՒԹԻԻՆ, ՄԱՎԱ, ԱԼԻ

Յար. — (Դուռն ուժգին բանալով, բարկութեամբ) Հայտէ՛, շուտ ըրէք, ինչքերնիդ հաւաքեցէք:

Մավա, Ալի. — (Յարութիւնի հետեւելով ներս կը մտնեն) Օ՛, մաշալլա՛հ. մաշալլա՛հ:

Մրմ. (Յարութիւնը տեսնելով աջֆերը բաշկի-նակով կ'ծածկէ):

Մարգ. — (Կ'սարսափի, յետոյ ինֆիլիք կ'ժողովի: Մարտուն ձայնով) Հրամանեցէք, Արուսթին էֆէնտի, հրամանեցէք, եկայ ուր հրամանքդ ֆոս չես:

Յար. — Հայտէ՛, հայտէ՛, ինչքերնիդ հաւաքեցէք:

Մարգ. — (Բռնի րջութեամբ) Ի՞նչ, եկի՞ն...

Յար. — Ո՛վ պիտի գայ. հայտէ՛ դո՛ւրս, մեր տունը յիմարանոց չէ, մեր տունը բողանոց չէ, Պոլիս Ակը չէ...

Մար. — (Ապշած) Մեղա՛յ ըսէ, Արուսթին էֆէնտի, ի՛շ կ'ըսես: Հիմա աի գան մեզ տուն աի տանն, ալ ի՛շ մնաց ուր... Նիկողոս աղան աի գայ հիմա:

Յար. — Գուք չէ՛ք իմանար, գուք հոս վայրկեան մը մնալու մտածաիս չէ՛ք եղեր... ապերախաներ: Մեր տունը անպատիւ կ'իտերու հիւրանոց չէ՛, յիմարանոց չէ, Պոլիս Ակը չէ՛... դո՛ւրս, դո՛ւրս...

Մրմ. — (Կասաղութեամբ Յարութիւնի վրայ յարձակելով) Անօրէն-անաստուած, չէ՛ս խմնիր, թո՛ւ... Երկու աչիչդ լօ՛ւր քորնայ...

Մավա, Ալի. — (Իրարու) Օ՛, խրյա՛խ աճուգա իմիշ, նամ...:

Յար. — (Մրմայի քեռեկ քունելով ուժգին կ'զգեսնէ) Էտէպտի՛դ, փութա՛ւ, հէտա՛ւդ ալ չես կենար:

Մրմ. (Ճնշելով զեսին կ'իտուռի)

Մավա. — (Ալիի) Խրյա՛խ կէօղէրի վար...

Ալի. — (Մավայի) Կէօրա՛խ մի պաճաղարը...

Մարգ. — (Լայալիկ կ'արգիլէ Յարութիւնը) Մ'աներ մատուցը. արհա նոր մարեր ինկեր էր գաթի... Բաշածները գաթի շատ եղան մատուցին, ոտքդ պագնիմ, Արուսթին էֆէնտի:

Մրմ. — (Ոսֆի եղնելով նորէն կ'սրիճօրհն) Կերած աւելի կ'սթդ մտցա՛ր, հա՛, սե շուն... թո՛ւ, հաղա՛ր մեղք Հոփիկ հանումին ուր քեղի պէս արիկ ունի... թու, թո՛ւ, թո՛ւ...

Մարգ. — (Բարկութեամբ Մրմայի) Պապանծի՛ լեզուդ ուր էռէջ չի նետուիս էմէն բանի:

Յար. — (Պատուհան վագելով կ'ձայնէ դեպի վար) Օլա՛ն համալ, է՛յ պանա պագ, եօղարը չըդ, չապո՛ւղ. (Յե՛՛ս դառնալով) Գո՛ւրս, դո՛ւրս, աստեղ յիմարանոց չէ, աստեղ հանրատուն չէ, Պոլիս Ակը չէ...

Մարգ. — (Մնկաչոֆ Յարութիւնի առջև) Բու ոտացդ փոշի՛ն պագնիմ, Արուսթին էֆէնտի, ի սէր Աստուած, ի սէր քրիստոնէութեան, ի սէր մարդկութեան, ի սէր հայութեան...

Յար. — Հայութի՛ւնն ալ աստիկ, մարդկութիւնն ալ... Չեղիպէտերուն համար է որ աս մարդիկը ո՛չ պիշեր ունին, ոչ ցերեկ: Յիմար ծերունի, ոտքերս լիզելու տեղ՝ աս աղջիկդ կրթէր որ այսօրուան անբարոյականութեան չհասներ... Հայտէ՛, ցնդած, ոտքի ելիր, ո՛ւր կ'երթար, գացէք: Մեր տունէն տէֆ եղիր...

Մրմ. — (Ձեռներով կ'ծնծէ կուրծքը) Հոփիկ հանում, ո՛ւր ես, մէյ մի ներս ինկիր, մեր հալը նայէ...

Տ Ե Ս Ի Լ ԺԱ.

ՆՈՅՆՔ, ԲԵՌՆԱԿԻՐ

Բեռ. — (Ներս կ'մտնէ ջուանը մեջը) Էֆէնտի՛մ:

Յար. — Շու փրթըլարը աշաղայա ինտիր, չապուգ:

Բեռ. — Պաշ իւստինէ, էֆէնտիմ: (Կ'սկսի զոյջերն հաւաքել:)

Մարգ. — (Արգիլելոյ բեռնակիրը) Ոտքդ ու ձեռքդ պագնիմ: Արուժին էֆէնտի, մեր խապահատը ի՞նչ է. հիմա ո՛ւր ին նը տի գան, տ'եւլի՛նք: տ'եւլի՛նք աս տունէն...

Յար. — Ահա՛ եկան, եկա՛ն. հայտէ՛ դուրս... այստեղ յիմարանոց չէ՛, այստեղ հանրատուն չէ՛, Պոլիս Աղը չէ՛...

Մարգ. — (Ձեռներով կ'ծեծե զրուխը) Վա՛խ, վա՛խ, վա՛խ... աս ի՛շ գէշ սրայի է ուր ուստ կուգան...

Տ Ե Ս Ի Լ Ժ Բ.

ՆՈՅՆՔ, ՆԻԿՈՂՈՍ, ԿՈՋԻԿ

Կոզ. — (Ուրախութեամբ ներս մտնելով) Բարե՛՛ ձեզ աղաներ. ի՞նչ է, թէ՛մէսիւքը կու վերցրնէ՞ք... Եկի՛նք ուր տուն տանինք: Բարե՛՛, Մարգար աղա, նէ իսէ աշքդ լուս...

Նիկ. — (Աւօրապարս կ'հետեւի Կոզիկի) Բարե՛՛ ձեզ:

Մարգ. — (Թեւերը բանալով Նիկոլոսը, Կոզիկը եւ Մրման միասին կ'գրկե) Վա՛յ արեւուդ կշտանամ, Նիկոլոս աղա ու Կոզիկ աղա, բարո՛՛վ եկաք ու հազար բարով: (Ամենքը մեկ կ'գրկախառնուին)

Բեռնակիրը մեկ կողմէն ինչեքը կ'վերցրնէ՛ անընդհան ներս մտնելով դուրս ելնելով.

Յար. — (Բաժնելով ամենքն իրարմէ) Հայտէ՛, հայտէ՛. դուրսը գացէք պագտուեցէք... հայտէ՛, հայտէ՛, հոս բողանոց չէ՛...

Նիկ եւ Կոզ. (Ապշած իրար կ'դիտեն):

Մալա. — (Աղմուս հայերեկնով մը) Ահար աք աս ատարտուղը տուն կա տանիր... հա՛, հա՛, հա՛:

Մարգ. — Արուժին էֆէնտի, Արուժին է՛ ֆէնտի, վերն Ատուռա՛ճ կայ...

Նիկ. — (Եփոքած՝ Յար.ի) Էֆէնտիմ, քէ՛րիմ ու ինայիթ արէ, աս ինչուկի՛նն է. աս ի՛շ խօրածաներ ին ուր կու լսիմ...

Յար. — (Եոյելով Նիկ.ի ուսը) Ի՞նչ պիտի ըլլայ, Նիկոլոս աղա, ձեր կնոջ վրայ ծանրացող բոլոր ամբաստանութիւնները ճի՛շդ են. ձեր աչքով կը տեսնէ՛ք ամէն ինչ. խայտառակութիւնը խայտառակութեանց...

Մարգ. — (Կասաղորթեամբ) Հա՛յ անիծուի՛ս դուն, կայէնի՛ որդի... Ատու՛ծմէ դանես պատի՛գ...

Մրմ. (Ճշելով նուաղած կ'իջնայ):

Նիկ. — (Բեկնուած) Տէ՛ հիմա աշքիս տեսածի՛ն ալ չի հաւատա՛: Տէ՛, հայտի՛, Կոզիկ աղա, տէ՛ հայտի ասոր ալ ճուղապ մի տուր, տեսնիմ. կատուն տուլիս մէջը բռնուեցա՛ւ: Աղուն կու խմիմ, տըհա ես աս կիկիս չի՛մ ձօշնար... (Դուրս կ'նետնի):

Մարգ. — (Նիկ.ի փեշէն բռնած ետեւէն) Նիկոլո՛ս աղա, Նիկոլո՛ս աղա, արեւուդ կշտանամ, Նիկոլոս աղա, կեցիր հելէ, արեւդ սի-

րիմ, Նիկոլոս աղա: (Դուրս կ'եւլնէ):

Ալի. — (Մալաի) Հայտէ՛, սէն ծնարը, պէն պունջարը:

Մալա. — Փէք էյի, փէք էյի: (Դուրս կ'եւլնէ): Կոզ. Ապու՛ւ կհրած՝ կը դուայ՝ փոխնիփոխ ամենքը դիտելով:

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԿՈՋԻԿ, ՄՐՄԱ, ԱԼԻ

Յար. — (Ալիի) Պէտէ՛ էտէպսիլէրէ պէտէ՛ տէրս վէրմէլի: (Կոզիկի) Հայտէ՛, աս էտէպսիլը սորի հանէ որ դուրս ելլենք:

Կոզ. (Դուրսը կ'մտնայ Մրմայի եւ կ'սկսի ձեռնալը ջուր սրսկել անու դեմքին):

Մրմ. (Հազիւ կ'սքափի, շուրջը կ'դիտէ, կ'հանաչե ու կ'արեւատէ:) Հայրի՛կ, հայրի՛կ, ա՛հ, ո՛ւր իմ ես. ա՛հ, հայրի՛կ, կու մեռնիմ՝ հիմա. ա՛հ, ա՛հ...

Կոզ. — Սոմա՛, այլեցիր, ես իմ, Սոմա՛: (Կ'աւաւսի ոսփի հանել):

Յար. Ալի. կ'աւաւսեան Մրման ոսփի հանելու: Հայտէ՛, էտէպսիլ, հայտէ՛: Օ նաղլարընը կիթ պաշգաւնա սաթ, հայտէ՛:

Մրմ. — (Հեծեծագին) Ո՛ւյ թեւ. ամա՛ն... հայրի՛կ, հայրի՛կ, հայրի՛կ...

Տ Ե Ս Ի Լ Ժ Դ.

ՆՈՅՆՔ, ՀՈՒՓՍԻՄԷ

Հոլի. — (Ալայլած ներս կ'նետնի:) Աս ի՞նչ է. Մարգար աղան ո՛ւր կը տանին: Մրմա՛ հանրմ:

Յար. (Անուկնկալի եկած՝ կ'բողու Մրման):

Մրմ. — (Թեւերը բանալով Հոլիփսիլէի վրայ կ'ուղղուի:) Հոտի՛կ հանրմ, դո՛ւն ես, ամա՛ն, պատէ իս արկանդ ձեռքէն:

Յար. (Կ'պարսաւուրի դուրս ելնել):

Հոլի. — (Արգիլելով ճանքան) Ո՛ւր կ'երթաս, ո՛ւր կ'երթաս:

Մրմ. — Մե՛ղք, Հոտիկ հանու՛մ, հազար մեղք քեզի ուր ասոր պէս արիկ ունիս:

Յար. — (Ձանալով դուրս ելնել) Թո՛ղ զիս, թո՛ղ զիս: (Կեցալով) Ինչո՛ւ այսչափ շուտ վերադարձար:

Հոլի. — Ոճրագործութեանդ հո՛տն առի:

Մրմ. — Ըսու թը տասը Հոտիկ քու էոջիկ թո՛ղ մասաղ լընի:

Հոլի. — Ես իմացո՛յ Մարգար աղայէն:

Ալի. — (Մրմայի բռնէն փաշելով) Հայտէ՛, հայտէ՛, էտէպսիլ, հայտէ՛:

Հոլի. — (Յար.ի օձիքէն բռնած) Պատասխան տուր, մինչե հիմա փաստ կը պահանջիր ինձմէ, պատասխան տուր: Այս ի՞նչ դաւ է:

Յար. — Ճանջիր, ո՛վ է կանգներ դէմդ յաղթ կազնի մը պէս. գործնական միտք ունեցիր քիչ մը:

Հոփի. -- Այո, այդ գործնական մտքիդ համար դու խիզձդ ծախէ՛, կինդ խաբէ՛, ազգդ վաճառէ՛: Նախախնամական զարմանալի զաղտնիք էր որ այսօր ժողով տեղի չունեցաւ:

Յար. -- Կնի՛կ, սանձէ՛ լեզուդ կրտսի՛մ, հիմա՛, հիմա՛, հիմա՛... (Հոփի.ի քեռն բռնելով անկիւն մը կը հրէ:)

Հոփի. -- (Կտրիճօրէն Յարուքիւնի վրայ փալելով եւ երեսը քննելով) Թո՛ւ, անամո՛թ, լի՛րբ, սրիկա՛յ, մա՛տնիչ...

(Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Յ. Ր.)

Շարունակելի

ԳԵՂԱՍ ԱՐՅՐՈՒՆԻ

ՄԱՏԵՆ ԱՆՈՍԱԿԱՆ

Ք. Յ. ԼԵՉՄԱՆ-ՀԱՌԻՓԹ. — Հայասան, երբեմն եւ Այժմ - ուղեւորութիւնք եւ ուսումնասիրութիւնք — Հասարակական Տիգրիս եւ Տիգրանակերտ, 117 պատկերներ, ցանկ մը եւ ուղեգիծ մը. Պերլին, գրավանառանց Պ. Պեհր, 1910. In-8°, XII—543 էջ:

Պ. Լեւնյան ատորագէտ մըն է, և իբր այդ ճամբորդեց Հայաստանի մէկ ժամանակ մէջ, այդ երկրին որ երկար ատեն Նինուէի տիրապետութեան տակ մնաց և ուր կը գտնուին համբաւաւոր բեռնազիր արձանագրութիւնք՝ « տոպական » անուանեալ:

Ուղեւորութիւնք տեղի ունեցաւ 1898-99ին, և այժմ միայն յայտն էր տեսնել հատորը որ բանաստեղծ է այդ գերման խուզարկագոյնի գիտական, ցեղազրական, լեզուադիտական արդիւնքները ամբողջութեան մը ձևով երևան հանելու: Այս յարաբերութիւնը դիւրահասկանալի պիտի ըլլայ, երբ՝ այս հատորը աչքէ անցնելով, մարդ տեսնէ թէ ի՞նչքան առատ է հայթայթուած նիւթեղէններու քանակութիւնը, ի՞նչքան հարուստ է պատկերներու շարքը, և թէ ի՞նչ խոշոր աշխատանք պէտք եղած է թափել այս պիտի հատոր մը ձևացնելու համար: Արձանագրութեանց ընթացումը որ մասնաւորապէս դժուար է, բաւական է արդէն բացատրելու թէ ճշմարիտ գիտնական մը ուզած չըլլայ իր հետազոտութեանց արդիւնքը թեթևօրէն հրատարակ նետել:

Այս առաջին հատորը երկու գրքի բաժնուած է: Առաջինը կը խօսի ուսական և պարսկական Հայաստանի մէջէն հեղինակին կատարած ճամբորդութեան մասին. հոն յաջորդաբար կը խօսի Անգրիկականի, Թիֆլիսի, Արաստանի, Արարատի, Ուրմիոյ լճին, Նեադարականաց վրայ, ևն: Երկրորդ գրքին մէջ, հեղինակը կը զբաղի մանաւանդ հիւսիսային Միջագետքով, հարաւ-արևմտեան և արևմտեան Հայաստանով. այնտեղ կ'ուսումնասիրէ մասնաւորապէս Բիւրուց նահանջին ուղեգիծը, Տիգրանակերտը, Տիգրիսի թիւնէլը, Եփրատը, ևն:

Այս շահեկան մանրամասնութիւններով լեցուն

գործը՝ անկատար պիտի ըլլար եթէ չունենար որոնումները զիւրացնող անուանացուցակ մը: Հեղինակը հաճած է ծանուցանել իր ընթերցողներուն թէ Բ հատորը որ ի ծառայ պիտի հրատարակուի՝ բովանդակ գործոյն մէջ պարունակուած նիւթերուն մանրամասն անուանացուցակ մը պիտի սնունայ:

Շահեկան է դիտել ապ թէ հեղինակը որ գերմանացի է, հետևաբար Ապտիւլ Համիտի մտերիմ բարեկամ եղող Վիլհելմ Բ.ին հպատակներէն մին, ամենագեղեցիկ գնահատում մը կը նուիրէ հայ գիւղացիին: Կը հաստատէ անգամ մը ևս թէ շատ սխալ դատաստան կը կարեն Հայոց մասին՝ գտնուիչ նոյնացնելով Երոպայի մէջ տեսնուող աւելի կամ նուազ վատահամբաւ նմուշներու հետ: Պէտք է Հայաստան ապրած, հայ ժողովրդին հետ մշտական շփման մէջ եղած ըլլալ, գնահատելու համար արժէքը այդ դժբաղդ ազգին, որ կը տառապի իր դրացիներուն՝ զլիաւորապէս թուրքերու և քրտներուն բիրտ կամայականութենէն:

Հայ գիւղացին ժուժկալ, աշխատասէր է, իր հողին պատասխիկ հաճոյքով կը մշակէ, կը սիրէ իր հայրենիքը, իր հողին յարած է և անոր հաւատարիմ կը մնայ՝ այն աստիճան որ կը նախընտրէ զինքը ուղածնուն պէս կողոպտող աւարառուներէն շարքուիլը քան ձգել հեռանալ:

Գերմաներէն գիտցողներուն ջերմապէս կը յանձնարարենք ընթերցումն այս գրքին, որ պիտի տեսնեն երկրի մը և ժողովրդի մը ճակատագիրը՝ անկողմնակալօրէն պատմուած՝ ամենահին ժամանակներէ մինչև մեր օրերը:

ՅՐԷՏԻՐԻՔ ՄԱՔԼԷՐ

ՇՈՒԲԵՆՀԱՌԻԷՐ ԼԱՒԱՏԵՍ 1)

Ա.

Յոսեփ Կոնստանտինովիչը արդիւնք է կեանքին դժգոհութենէն ծնած ցուազին զբացումի մը: Կեանքը հաճոյքով եւ վիշտով խառն է: Այս պատճառաւ բացարձակ լաւատեսութիւն կամ յոսեփ Կոնստանտինովիչը անիմաստ է: Լաւատեսութիւնը վշտին գոյսութիւնը ուրանալուն մէջ չի կայանար՝ այլ վիշտեղը մեղմացնող իր ըսկզբունքներուն մէջ, եթէ ասոնք գործնականին մէջ ազդեցիկ ըլլան: Ուրեմն յարաբերաբար լաւատես վարդապետութիւնը որ կեանքը հաճուագոյն ընելու ձգտում ունի:

1) Sr. A. Պազարեան, նախկին աւակերտ Կեցեցիկի Մուրաւս-Ռաֆայէլեան վարժարանին, արտի մը առաջ նրասարակեց թղթագրութիւն լեզուով գիր մը Շոփեցեաների վրայ. այդ գիրքը, որուն մէջ մեր նրբամիտ հայրենակիցը ի վեր կը հանէ ինչ որ կայ Շոփեցեաների մտայլ իմաստասիրութեան մէջ՝ դրական, կազդուրիչ, « լաւատես », ...

Բ

Յոռետեսութիւնը մէկէ աւելի յայտնուելու ձեւեր ունի: Ամենէն տարրական արտայայտութիւնը՝ անհատական է: Ո՛ր եւ է անհատ որ կը տառապի եւ դժբաղդ է ու կը գանգատի՝ յոռետես է: Այս ձեւը սակայն մանկական է եւ եսասիրական: Գանգատողը միմիայն իր ցաւերը կ'ողբայ: Կայ երկրորդ ձեւ մը յոռետեսութեան արտայայտման, հաւաքական ձեւը որ դրական արտայայտութեանց մէջ կ'երևի. երբ դրազէտը կամ բանաստեղծը իր գանգատին նիւթ կ'ընտրէ ամբողջ ազգի մը դժբաղդութիւնը: Օրինակ Իսրայէլի մարգարէները, հայ պատմագիրները: Մեծագոյն բանաստեղծներու մօտ սակայն՝ ինչպէս Կէօթէի (Յառուստ), Լէօբարտիի եւ Պայրընի մօտ՝ այս տրտունջը արեւելահայկան ցաւի կը փոխուի: Բանաստեղծը ո՛չ թէ իր կամ իր ազգին՝ այլ հանուր մարդկութեան, հանուր կենդանութեան ցաւը կ'երգէ: Յոռետեսութեան երրորդ ձեւ մը փելիսոփաները կուտան: Իրենց ցաւը եւ տրտունջը արդիւնք են խոր ճանաչողութեան եւ երկար խոհումներու: Փելիսոփան չի գոհանար միայն ցաւին գոյութիւնը հաստատելով՝ այլ անոր ամենէն թաքուն աղբիւրը կը փնտռէ, եւ եթէ կարելի է՝ անոր դարմանը:

Գ

Ամէն դար, ամէն քաղաքակրթութիւն իր յոռետես վարդապետութիւնը ունեցած է: Անոր նշանակութիւնը (portée) համեմատական է ժողովրդի մը քաղաքակրթութեան եւ զարգացման: Յոռետես մտածումներն այն ատեն միայն կը հասնին իրենց զագաթնակէտին՝ երբ ընկերութիւնը խորին եւ արմատական յեղաշրջումներ կը կրէ, երբ քաղաքակրթութիւնը իր բարձրագոյն փթթումին կը հասնի: Այս վերջին պատճառը կը գտնենք Հելլենիստիկ մօտ: Յոռետեսութիւնը նոյն վնասեցուցիչ սասակութեամբ երևան կուգայ հոռմէական կայսրութեան քայքայումին պահուն, երբ նորածիլ քրիստոնէութիւնը անոր աւերակներուն վրայ կը բարձրանայ: Ընդհակառակը Միջին դարու մէջ, յոռետեսութիւնը շատ տկար երևոյթ մըն է: Տգիտութիւնը եւ անկեղծ ու խորին հաւատքը անոր փթթումին արգելք կ'ըլլան: ԺԹ. դարու մէջ ուր գիտութիւն եւ զարգացում տարօրինակ թռիչք մը կ'առնեն, յոռետեսութիւնը կը վերերևի իր ամենէն հզօր ձեւին մէջ: Բանաստեղծներն եւ փելիսոփաները դժգոհ են ոչ թէ միայն մարդոցմէ եւ ընկերութենէն՝ այլ նոյն իսկ ընտելանէն զոր կ'անիծեն (Էօբարտի):

Ներքոյից գնահատման արժանացաւ գեման մասնալին մէջ: Վերջերս նոյն նեղիմակը հրատարակեց նաեւ թեմազա-սական հասարակ իր իրազեկի մասին, դարձեալ գեմաներէն: Տր. Պազարեան, մեր լսողներով, հանցաւ « Անանիսի » համար Եւրոպայի Եղբայրացի մասին իր գրքին տարածակազմը անփոփոխ, զոր անաւ կը հրատարակեն:

Դ

Եթէ մենք այս իրողութիւնները նկատի առնենք եւ դիտենք թէ՛ յոռետեսութեան խօսքը մարդկային մաքի ամենէն բարձր եւ նուրբ ներկայացուցիչներէն կուգայ (բանաստեղծներն ու փելիսոփաները), պէտք է ընդունինք որ յոռետեսութիւնը քաղաքակրթութեան մէկ արդիւնքն ու նուէրն է: Անիկա կը նրբացնէ մեր ջիղերը բազմապատկելով պէտքերնիս որուն գոհացում տալու ընտելանին իսկ անկարող է: Բայց այս պէտքերը, այս պահանջները ընտելանական չեն այլ հոգեբանական: Եւ ասոնք կը գոյանան իրօք մեր յուսախաբ մնալուն մէջ: Մարդկութիւնը կը յուսայ եւ կը պայքարի միշտ լուսագոյն ապագայի մը սպասումով: Քաղաքակրթութեան հետ լուսաւորումը միտքը կ'անդրադառնայ պատրանքին վրայ թէ՛ այսօր երէկուան կը նմանի եւ վաղիս ալ այսօրուան պիտի նմանի: Անիրականալի պատրանքի մը ետեւէն վաղող մարդկութիւնը՝ հիմա պարտասած եւ վաստակարեկ կը վնասի եւ կը յուսահատի: Արեւմտեան քաղաքակրթութեան այս ճգնաժամին մէջ՝ վրայ կը հասնի քրիստոնէութիւնը որ արձանադրելով աշխարհի վաղանջուկ եւ անկատար երջանկութիւնը, ուրիշ երջանկութիւն մը կը ցուցնէ, աւելի մեծ, աւելի բաղձալի, գերեզմանէն անդին: Վնասութեանը մէջ պարտասած մարդկութիւնը այս գաղափարին կը փարի եւ կը մխիթարուի որքան ատեն որ յոռետեսութիւնը սիստեմատիկ վարդապետութեան մը ձեւ չէր ստացած, եթէ զանց ընենք հնդիկ իմաստասիրութիւնը: Երբ գիտութիւնը դրական կերպով կը պատռէ մարդկային պատրանքի այս քողը, եւ կը բացատրէ մարդուն իր բացարձակ ոչնչութիւնը Տրեգիքի մէջ՝ յոռետեսութիւնը նորէն գլուխ կը բարձրացնէ եւ կը գտնէ իր ամենէն բանաւոր եւ համոզիչ պաշտպանը գերմանական փելիսոփայութեան մէջ (Քանթ):

Փելիսոփայական պատմութիւնը իրրելուտեան կը ներշնչացնէ մեզ միայն Հայդեիցը. բայց ասոր պատճառաբանութիւնը անհամոզիչ է. ան չ'ուրանար ցաւին գոյութիւնը, բայց կը բաւականանայ ըսելով որ Աստուծոյ կամքը այսպէս է:

Ե

Մենք ըսինք թէ՛ յարարեականօրէն լուսաւան վարդապետութիւնը այն է որ կեանքին մէջ ցաւերը մեղմացնող եւ հաճոյքները աւելցնող ազդեցութիւն ունի: Արեւմտաքի մէջ երկու վարդապետութիւն կը տիրեն եւ իրարու հետ կը մրցին, քրիստոնէութիւն եւ դրապաշտութիւն:

Քրիստոնէութիւնը շատ հեշտ եւ մխիթարիչ վարդապետութիւն պիտի համարուէր եթէ իր անձատկի արքայութեան մօտ զարհուրելի դժոխք մը չի կանգնեցունէր: Ըլլայ մարդը մեղաւոր թէ ոչ, փոյթներնիս չէ. Գոթո-

քը պէտք է որ լեցուի այսպէս եւ այնպէս . լեցուելու համար կառուցուած է : Ինչպէ՞ս հաշտեցնել զայն լաւատեսութեան հետ , երբ անոր ճարտարագիտը , առանց մարդոց կամքն եւ բաղձանքը կանխաւ իմանալու , զանոնք կը նետէ այս ողորմելի եւ թշուառ աշխարհին վրայ . զանոնք շատ թէ քիչ չարչարելէ վերջ հոս , բռնի կը թխէ անշքջանելի գեհնին մէջ , անվախճանօրէն :

Իրապաշտ վարդապետութիւնը , ընդհակառակն , դժոխքին արհաւիրքը կը բաժնայ մեր առջեւէն . բայց միանգամայն , արքայութեան հեշտագրու հեռապատկերն ալ : Կը համարի կեանքը բարիք մը . քարոզելով որ այս բարիքը ձեռք կը բերուի միայն ուժի եւ կուռի միջոցաւ : Վայ տկարներուն եւ անզօրներուն : Եւ մարդ պէտք է ցնծայ եւ սպրէ , ըստ զրուպաշտութեան , որ պատառ մը հացի եւ խրչուեակի համար կոխ հարկաւոր է , բարիքի մը համար որ ամէն վայրկեան կորսնցնելու վրասանդին մէջ կնք , եւ հաստատուած մեղ կը քարոզէ սա վարդապետութիւնը թէ՛ « ինչ որ է իր գոյութենէդ առաջ՝ նոյնը պիտի ըլլաս գերեզմանէդ վերջ » : Նոր դարու փիլիսոփայական յոռետեսութիւնը պտուղն է այս ճշմարտութեան : Յայտնի է որ ուժի եւ կուռի միջոցով ձեռք բերուած բարիքը՝ անհաստատ եւ վաղանցուկ միանգամայն , շատ քիչ կորուհածելի եւ միխլարիչ հանգամանք ունի : Եւ ասոնց ալ ցնծութիւնը ամէն վայրկեան խառվուած է՝ այն բարիքը այսօր կամ վաղը կորսնցնել պարտաւորուած ըլլալու ստուգութեամբ : Ուրեմն զրապաշտութիւնն ալ իր հիմնական սկզբունքներուն մէջ՝ յոռետեսութեան ծիրը կը կրէ :

2

Շորէնհաուէրի հաստատումը թէ՛ կեանքին մէջ ցաւը հաճոյքէն առատ է , թէ՛ հաճոյքը բացասական յատկութիւն ունի , թէ՛ չզոյրութիւնը կեանքէն նախադասելի է՝ մոլորցուցած է իր քննադատները : Այս երկու առաջին հաստատումները տեսլական արժէք ունին միայն : Ասոնցմով ոչ ցաւին քանակը կ'աւելնայ եւ ոչ ալ հաճոյքինը կը նուազի : Երջնիք այդ նախադասութիւնները . կեանքը կը մնայ այնպէս ինչպէս որ է : Միայն երրորդ հաստատումը կրնայ յոռետես համարուիլ եւ մարդիկ մղելու փորձել որ կեանքերին ջնջեն , բայց այդ փորձն ապարդիւն է եւ սրտաբանք մը միայն -- կը հաստատէ Շորէնհաուէր : Մանր կեանքին վերջաւորումը չէ -- այսինքն ապրելէ զազրում մը չէ -- ո՛չ ալ գերեզմանը հանգրտավայր մը վերջնական : Կեանքը լաւ թէ գէշ , անգամ մը որ արուած է , պէտք է կրել զայն , բնութեան բաղձանքին համաձայն , մաքի լոյսով առաջնորդուած : Անօգուտ է փաստաբանի կեանքը : Ասի երջանկութիւն ստեղծելու չի նպաստեր : Ընդունելի կեանքը աւելի չարիք մը քան թէ բարիք , եւ աշխատինք միանամուռ այդ չարիքը նուազեցնելու եթէ

չենք կրնար զայն արմատապէս բառնալ : Սիւրենք զիբար եւ օգնենք իրարու : Բոլորս ալ իրարու եղբայր ենք եւ նոյն դժբաղդութեան ենթակայ : Եղբորմէն աւելի ենք իրարու : Միեւնոյնն ենք , միեւնոյն կամքի արտայայտութիւնը , երեւոյթը , բայց մեղ կը պատրէ անհատականութեան սկզբունքը :

Հոս Շորէնհաուէր կը բերէ ընդհանուր սկզբունք մը սիրոյ եւ եղբայրութեան զոր միւս վարդապետութիւնները չունին եւ չեն կրնար ունենալ : Տիեզերական բարոյագիտութեան սկզբունք մը : Իրապաշտութիւնը չունի ս եւ է բարոյական սկզբունք : Իր բարոյագիտութիւնը կը կայանայ « Կեր , արը եւ ուրախ ըր » ին մէջ : Գիտատնէական բարոյագիտութեան հիմը եսասիրական է եւ կը բղխի դժոխքին սարսափէն եւ արքայութեան հրապոյրէն : Բայց միանգամ որ Շորէնհաուէր ատկերական սիրոյ սկզբունքը իբր հիմնաքար կ'առնէ իր վարդապետութեան՝ անձնասիրութիւն եւ այլասիրութիւն կ'անհետին : Ասոնք իրենց գոյութեան իրաւունքը ունին անհատական անձատրութեան մէջ , որ ըստ իրեն պատրական է : Շորէնհաուէր կը բաժնայ ուրեմն դժոխքի սարսափն եւ զրապաշտութեան սպաննիչ յոռետեսութիւնը թէ՛ գերեզմանին մէջ մեր կեանքը վերջնականօրէն կը լուծուի : Այս երկու սկզբունքները անհաշտ են լաւատեսութեան հետ : Ան կը դնէ անոնց տեղ սիրոյ եւ եղբայրութեան լայն սկզբունք մը , որ կեանքի մէջ՝ ամէն ձեռի տակ՝ ցաւերը մեղմացնելու , հաճոյքները բազմապատկելու միայն կրնայ նպաստել :

Կեանքը սխուր բան է , կ'ըսէ ան . բայց աշխատինք կեանքը ապրելու արժանի դարձունելու : Վարենք գէթ հերոսական կեանք մը , եթէ չենք կրնար երջանկութեան հասնիլ :

Ու հոս կը փառաբանէ հերոսները որ ի սպաս մարդկութեան կը զոհուին : Յետոյ ան կ'ընդունի որ , մեծագոյն երջանկութիւնը այս կեանքին մէջ՝ արուեստն է , իր ամենէն յայն եւ պարզ իմաստով , Հոս ալ կը փառաբանէ ան արուեստն ու արուեստագետը որ իր հանձարին շնորհիւ կը բանայ մարդկութեան բոլոր խաւերուն առջեւ վայելքի եւ հաճոյքի անսպառ եւ անհամար գանձեր : Բայց մեծագոյն արուեստագետը բնութիւնն է . աշխատինք թափանցել զայն՝ կարենալու համար զայն վայելի իր ամէն ձեւերուն եւ արտայայտութեանց մէջ : Եթէ կան անհասնելի որոնց չի բաւեր ոչ հերոսին կեանքը , ոչ ալ արուեստագետին եւ հանձարին գործունէութիւնը , ճշմարիտ սուրբերն են անոնք որ , մտքի կատարելագործութեան զապաթնակէտը հասած՝ սիրայօժար կը հրաժարին այս կեանքէն որ մեղ համար ամէն բան է , ի տես ուրիշ գոյութեան մը որ իրենց համար ամէն բան է եւ մեր գոյութենէն անբաղդատելիօրէն անձառելիօրէն շատ աւելի գեղեցիկ :

Տր. Ռ. ՊԱՅՍԱՐՅԱՆ

Փասւա

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՆԵԱՆ

ՆԱԿԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ ԱՇՈՒՂԸ

ԵՒ

ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻԶԸ

(26 նկարներով զարդարուած)

Գին 3 Ֆրանկ

Այս հատորը հրատարակուեցաւ Տիգրան խան Քելեկեանի աջակցութեամբ :

Petite Bibliothèque Arménienne

CHIRVANZADÉ

LA POSSÉDÉE

Traduit par

ARCHAG TCHOBANIAN

Préface de

Frédéric Macler

Paris, Ernest Leroux, 38 Rue Bonaparte

Գին՝ 3 Ֆր.

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ

Վերջին գործերը

	ՊՐՈՂ
Հին Օրեր, պուէտ երաչատուր Միսաքեան	5
19րդ ԴԱՐ ՅՈՎ. ՊՐՈՒՍՍՅԻ ՏԷՐՈՅԵՆՑ	12 ½
ՍՏՈՒԵՐՔ Կին դէմքերու տասնեակ	5
ԹՐՔԱՀԱՅՈՅ Հին ՂԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ	
ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ	12 ½
ՍԼԷԼՈՒԻՍ, տասնեակ իմաստասիրա-	
կան, Երկրորդ տպագր.	7 ½
ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՄ. 2. մեծատուններու	10
ՊԱՏՄ. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ՝ սկիզբէն	
մինչեւ Ոսկեդար	7

Բանասիրական հնարաւոր խնամով յօրինուած այս ինքնատիպ գործերը կը գտնուին Կ. Պոլսոյ գլխաւոր գրալատնարաններուն քով, ինչպէս կանխիկ ու մեծաքանակ՝ արժանաւոր զեղչով, արտասահմանի ալ համար, հեղինակին քով գրել Կ. Պոլիս Պալենց կամ Քըլըճեան գրատուններն հեղինակին անունով կամ ուղղակի Կ. Պոլիս, Սկիւտար Սելամիյէ Ս. եւս եկեղեցին :

ՄՍՏԵՆԱՇԱՐ ԱԶԴԱԿԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԷՍ.	
Սիւսանթօթ, գին՝	3 ½ ՊՐՈՂ
ՀԱՋԻ ԲԷԳ, վէպ հայ յեղ. կեանքէ,	6 »
Վ. Փափազեանի	6 »
ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ, քերթուածներ,	
Դանիէլ Վարուժանի	9 »
ՅԱՅԳԱԼՈՅՍ, արձակ էջեր,	
Ի. Զարդարեանի	7 ½ »

Դիմել՝ Librairie Populaire « Ardzive »
20, rue Marpoudjdjilar, Constantinople

Պ. ՆԻՔՈՒԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ԵՒ ԱՐԱՆՑ ՅԱՏՈՒԿ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻԶ

Կ'ընդունի աշակերտուհիներ եւ աշակերտներ, կարճ ժամանակամիջոցի մէջ կը պատրաստէ diplômeի քննութիւն անցնել Փարիզի առաջնակարգ Institutէն : Ուսուցումը կը տեւէ 24 դաս եւ կ'արժէ 120էն մինչեւ 300 ֆրանք : Կ'ընդունի կանանց հագուստի յատուկ ամէն տեսակ յանձնարարութիւններ. հետաւոր տեղեր ու երկիրներ գտնուողք կարող են ուղարկել իրենց չափերը : հագուստներու գինն է 120էն մինչեւ 800 ֆրանք, փափաքողներուն կը զրկէ պատրաստ հագուստ mousseline, patron եւ gravure :


Մանրամասնութեանց համար դիմել հետեւեալ հասցէին՝

Nicolas Aroutunian, 4, Rue St.-Lazare, Paris

ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Սենթրալ ժուր	Պարոն	Սահակ Ծառուկյան
Նիւ-եոր	»	Վահան Վարդանեան
Պարիս	»	Լ. Երուանդ
Փր	»	Գարեգին Տիւրկերեան
Գ...	»	Արմենակ Ատիլեան
Կ. ...	(Պալենց գրատուն
)	Երծիւ գրատուն
Ազգիանուպոլիս	»	Տիգրան Մարտիրոսեան
Իզմիթ	»	Դաւիթ Պողոսեան
Իզմիր	»	Կրիզոր Յ. Տէր-Մինասեան
Պարսիզակ	»	Մելքոն Յովսէփեան
Թոքաթ	»	Ա. Եսիս Լայկազեան
Նիքսար	»	Պետրոս Տրապիզոնեան
Սամսոն	»	Յարութիւն Յ. Տիվանեան, « Արարատեան » գրատուն
Պատիս	»	Սենեքերիմ Քէլպապճեան
Մարզուան	»	Յակոբ Պապասինեան
Կենարիս	»	Գէորգ Ճամճեան
Բաքերդ	»	Զարէս Այվազեան
Կարին	»	Գառնիկ Լուսպարոնեան
Երզնկա	»	Սարգիս Աղնաուրեան
Ճապին-Գարահիսար	»	Վահան Հիւսիսեան
Խարբերդ	»	Գարեգին Կոստանեան
Գիւրիկ	»	Սարգիս Չիլինկիրեան
Տօրթ-Յօլ	»	Միհրան Տէր-Մելքոնեան
Հայկալ	»	Վահան Պասթաճեան
Մուս	»	Համազասպ Տէր-Յովհաննէսեան
Վան	»	Տիգրան Չիթուրի
Սեբասթիա	»	Վահան Մոսկոֆեան
Ռուսնուգ	»	Գառնիկ Մազմանեան
Ֆիլիպի	»	Թագուոր Հինգլեան

„ԱՆԱՀԻՏ“Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ



ԱՆԱՀԻՏԸ կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը :

Բաժանորդագինն է սարեկան՝ 10 Ֆրանկ (Ֆրանսա), 12 Ֆրանկ (օտար երկիրներ), 2 տղար (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա):

Վեցամսեայ՝ 5 Ֆրանկ (Ֆրանսա), 6 Ֆրանկ (օտար երկիրներ), 1 տղար (Ամերիկա), 3 ռուպլի (Ռուսիա):

Յօդուած եւ բաժանորդագին զրկել հետեւեալ հասցեին .

A. TCHOBANIAN

17. Rue La Bruyère, Paris.